94	*Крхбулаг*—Торфяно-болотная почва	0—20 20—55	11—11 14—80	28—76 18—96	60—13 57—24	14—40 12—85	0—418 0—251	0—210 0—086	0—008 0—008	

вышает 13—14%. Сравнительно несколько меньшее содержание перегноя в верхних горизонтах некоторых почв (раз. 78, 80) объясняется тем, что в них было много еще неразложившихся корневых остатков, которые при анализе отбираются. Ряд определений зольности, подробные результаты которых мы здесь не приводим, показывают, что болотные почвы Севанского бассейна в общем содержат около 50% органического вещества, что дает довольно высокую зольность. Что касается химического состава легко-растворимых соединений — водных вытяжек из этих почв, то на основании приведенных в таблице данных следует отметить, что общая сумма растворимых веществ—плотный остаток—довольно заметный, в особенности в Норадузском и Басаргечарском районах, где это количество немногим меньше одного процента (раз. 31, 145). В соответствии с этим заметно и количество растворимых минеральных солей (Басаргечар). Наконец, по титровальной щелочности видно, что болотные и заболоченные почвы Севанского бассейна имеют слабо щелочную, почти близкую к нейтральной реакцию. Это подтверждается и некоторыми контрольными определениями pH, (по Михаелису).

После такого краткого обзора основных болотных массивов Севанского бассейна необходимо несколько остановиться на ряде конкретных особенностей, характеризующих болотные почвы этой части Армении.

Прежде всего все болотные почвы Севанского бассейна по существу представлены той стадией болотного процесса, которая соответствует осоковому типу болот, переходящему к осоково-зеленомоховому, при чем в отдельных местах участие зеленых мхов в настоящее время становится довольно значительным.

Как известно, с наростанием торфяного горизонта и постепенным превращением питательных элементов в неподвижную форму органического вещества имеет место такое-же постепенное обеднение элементами зольной пищи растений, что в конечном итоге приводит к тому, что появляется новая многолетняя деревянистая флора. Эта последняя благодаря возможности развивать глубокоидущую корневую систему получает возможность захватывать большую поверхность для удовлетворения своей потребности в пище, т. к. пища растений здесь имеет слабую концентрацию, она сильно рассеяна в пространстве. Появляется болотная ива, береза, осина, ель и целый ряд кустарников, которые являются обычными компонентами растительности севера. В пределах болотных почв Севанского бассейна мы деревянистых растений не встречаем. Может быть пыльцевой анализ глубоких горизонтов торфа, которым мы пока не располагаем, установит наличие здесь в прошлом таких пород, но в этом приходится сомневаться.

По своему происхождению болотные образования Севанского бассейна, как видно, не одинаковы. Основные массивы Мазринской равнины, Мартуни, Норадуз—результат болотного процесса, который является последующим развитием луговой стадии и протекает в условиях избыточного увлажнения местности, обуславливающегося речными и грунтовыми водами, при чем возраст этих болотных образований сравнительно молодой, что отражается в общем на небольшой мощности торфа и на высокую их зольность.

Крхбулагский заболоченный массив, как было указано выше, вторичного происхождения, а прибрежные торфяно-болотные почвы между селениями Агзибир, Ордаклу, Севан, являются результатом зарастания мелких заливов оз. Севан.

Затем, обращает на себя внимание общий, слабо засоленный и несколько солонцеватый характер почвенного покрова некоторах болотных массивов Севанского бассейна. Так, например, на возвышенных элементах микрорельефа, под покровом типичной полупустынной растительности камфоросмы мы имеем значительно солонцеватую почву. Местами эти почвы, которые по своим физическим свойствам по существу мало отличаются от местных солонцов, по строению своих профилей и общему характеру отдельных горизонтов, как указывает и Завалишин, от настоящих солонцов юго-восточных областей европейской части Союза ССР, в частности Сталинградской области (см. «В области полупустыни» Н. А. Димо и Б. А. Келлер.-Саратов, 1917 г.) с четко выраженными генетическими горизонтами, столбчатым строением второго горизонта, ореховатостью последующего и т. д., отличаются резко. Среди солонцеватых почв кое-где мы встречаем образцы почв и несколько другого порядка: под покровом Obione, Atriplex и камфоросма, из которых первые два являются представителями солончаковой растительности, наблюдается светло-серая рыхлая бесструктурная карбонатная масса, которая несколько ниже переходит в плотную глыбистую массу, в общем аналогичную тому, что мы имели во втором горизонте указанной выше солонцеватой почвы. Несомненно мы здесь имеем заметно засоленную почву, занимающую довольно ограниченные площади.

Неполный анализ легко растворимых соединений водной вытяжки показывает, что общая сумма минеральных солей в образцах из верхнего горизонта этой почвы достигает 0,25% с заметным участием как хлоридов, так и сульфатов. На засоленный характер этих почв указывает и Завалишин.

Вышеприведенные солонцеватые почвы, соответствуя описанию Завалишина, местами окаймляют крупные массивы заболоченных земель, располагаясь на их периферии. Действительно получается впечатление, как будто они появляются в результате последующего развития болотных почв.

В Мартунинском участке, ниже сел. Личк, на глинистопесчаном аллювии, являющемся краем заболоченного пятна, недалеко от озерного берега, под покровом камфоросмы мной в 1935 г. описан солончак.

В пределах Норадузской равнины, среди заболоченных почв, на повышенных элементах микрорельефа, в 1942 г. мы наблюдали наличие почв с плотным глыбисто-комковатым сильно трещиноватым верхним горизонтом, который глубже переходил в ясно выраженный солонцеватый. Этот последний

горизонт, по мере дальнейшего углубления, в свою очередь распадался на структурные отдельности. Местами на фоне аллювиальнолуговых слабо-заболоченных почв мы обнаружили серую, на всю глубину разреза обедненную органическим веществом, сильно карбонатную глыбистую почву. Некоторые данные химических анализов, проведенные как нами (Сборник С/Х Института № 4, 1944 г.), так и взятые из работ проф. А. А. Завалишина, опубликованных в 1928 г., показывают, что действительно в указанных выше почвах Севанского бассейна наблюдается повышенное содержание легкорастворимых солей.

Не имея возможности здесь подробно разобрать причины появления солей и солонцеватости на болотах, коснемся этого вопроса лишь кратко.

Понижение высокого уровня грунтовых вод в местах с тяжелым материалом, служащим материнской породой, в условиях довольно засушливого климата Севанского бассейна приводит к усилению капиллярного поднятия, в процессе которого из грунтовых вод выносится некоторое количество солей и откладывается на поверхности. А при дальнейшем понижении грунтовых вод, нисходящим током атмосферных осадков начинается обратное движение, сопровождающееся вероятно некоторым повышением в составе поглощенных оснований натрия, в результате чего почвы приобретают указанные выше признаки, присущие солонцам. Это тем более, что заметное наличие натрия в этих почвах подтверждается данными химических анализов, приведенных в работе Завалишина.*) Что касается самого состава грунтовых вод, то следует отметить, что не все грунтовые воды достаточно минерализованы, чтобы служить источником засоления и, понятно, не все подстилающие породы по своему механическому составу обеспечивают капиллярное движение снизу вверх. Речные (родниковые) или грунтовые воды со стороны вулканических гор менее минерализованы, рыхлые продукты их выветривания, поступающие на Мазринскую равнину, менее соленосны, и это вполне понятно. А грунтовые воды со стороны Шахдагского горного массива, имеющего в своем составе известняки и другие осадочные породы, более соленосны. Это подтверждается аналитическими данными, приведенными и в работе Завалишина.

В связи с некоторым засолением болотных почв Севанского бассейна вероятно и находится тот факт, что реакция болотных почв здесь в общем близка к нейтральной, а во многих случаях pH выше 7.0 в то время, как болотные почвы, например, Калининского района Арм. ССР имеют слабо-кислую реакцию.

Следующая особенность болотных почв Севанского бассейна, которая заслуживает самого серьезного внимания, это то, что здесь почти всюду в при-

*) Бюллетень Бюро Гидр. Иссл. на оз. Севан № 5—6 Эривань, 1928 г.

родных условиях, совершенно без вмешательства человека, наблюдается процесс мелиорации болот. Чем-же обуславливается такое изменение? С течением времени основные речные потоки Севанского бассейна, Мазрачай, Гезалдара-чай, Адиаман-чай и Кявар-чай в процессе своей деятельности медленно размывают свое дно, углубляют свое ложе и тем самым понижают базис эрозии, что приводит к постепенному дренированию заболоченных пространств в их бассейнах. Этому в последнее время особенно способствует понижение уровня воды в озере Севан. В результате этого верхние горизонты болотных почв по мере усыхания делаются доступными для проникновения воздуха, что способствует усилению разложения и разрушению накопленных веками растительных остатков и торфянистой массы, а также окислению восстановленных закисных соединений оглеенных горизонтов. Вместе с этим мощная болотная растительность постепенно исчезает и на смену ей появляется луговая, впоследствии и степная, растительность.

Таким путем болотный процесс постепенно переходит в следующую стадию почвообразования и на место болот появляются новые, существенно отличные почвы. Сказанное подтверждается тем, что на некоторой глубине мы обнаруживаем погребенные фрагменты крупных экземпляров тростника (до 3 — 4 см. в диам.) там, где их нет сейчас, а если кое где и есть, то они очень мелки. Кроме того под сухими почвами черноземного и лугового типа мы сейчас находим реликты болотных почв в виде оглеенных горизонтов со слабыми примазками охристого железа. На некоторых обрывистых, ныне сухих берегах некогда бывших речек, питавшихся из болот, местами прекрасно сохранились охристые пятна и прожилки железа (у старого русла р. Кявар-Чай, Мазра-чай и т. д.). Наконец мы находим и погребенные остатки крупных корневищ осок, которые имеют мощно развитую аэренхиму и по виду и размерам диаметров совершенно не отличаются от тростника. Поэтому до сих пор их рассматривали как фрагменты последнего. В пределах Крхбулагской равнины, около Басаргечара, в 1945 г. нам удалось выяснить, что это не остатки тростника, а корневища крупных осок. Отсюда следует, что в пределах Севанского бассейна в прошлом болота и заболоченные территории занимали гораздо больше площади, чем сейчас и что характер болотного процесса здесь был резче выражен, чем сейчас.

Далее, из факта самомелиорации болот в природе и превращения их в новые почвы само собой напрашивается вопрос—какие же почвы получаются при этом. По теории акад. Вильямса*) болотная стадия дернового периода почвообразования при дальнейшей эволюции превращается в чернозем. По данным основателя русского генетического почвоведения проф. Докучаева**) из болот чернозема не образуется.

Наши наблюдения показывают, что в пределах Севанского бассейна болотные почвы в процессе своей эволюции в одних случаях переходят в черно-

*) Почвоведение, Москва, 1936 г.
**) Русский чернозем, СПТ, 1883 г.

зем, а в других нет. Конкретно, в Норадузском участке болота по их мелиорации превращаются в структурные мощные, близкие к черноземам почвы аллювиально-лугового типа с тенденцией к последующему остепнению.

На Мартунинском участке из болот мы получаем довольно мощные, богатые перегноем структурные черноземовидные почвы. На Крхбулагском массиве и, местами, на ограниченных площадях Мазринской равнины болота также эволюционируют в чернозем. Основная же часть Мазринской равнины, где болотный процесс пошел на убыль, превращается в более светлоцветные, менее перегнойные, слабо структурные степные почвы, по Завалишину типа каштановых.

По мере усыхания болот, в результате такой естественной эволюции, в торфянистую массу почвы проникает воздух и начинается разложение, в результате чего образуется много перегноя. Появляется луговая растительность, корневая система которых в почвенной массе образует массу отдельных комков. Образовавшийся перегной проникает в эти комки и цементирует их, а появившиеся бобовые растения своими глубокими корнями собирают кальций и перекачивают его вверх, где он образовавшейся комковатой структуре придает необходимую прочность, присущую черноземам. Тяжелая, сильно перегнойная масса второго горизонта болотной почвы, вспашкой поднятая на дневную поверхность, в свою очередь сама собой также распадается на комковатые отдельности, что вероятно связано с коагуляцией почвенных коллоидов при высыхании. К более подробному рассмотрению этого вопроса мы вернемся впоследствии.

После краткого рассмотрения особенностей болотных почв Севанского бассейна необходимо вкратце остановиться на существенном вопросе об их мелиорации и практическом использовании в сельскохозяйственном производстве.

Основная задача в этом направлении заключается в ликвидации коренных причин, порождающих неблагоприятные условия болотной среды. Удаление избытка воды и понижение уровня грунтовых вод вследствие улучшения физических свойств болотных почв приводит к разрушению избытка органических веществ и их минерализации, что вместе с правильной обработкой дерново-торфянистого покрова создает все благоприятные условия для роста и развития культурных растений.

В связи с некоторым понижением уровня оз. Севан в пределах Мазринской равнины само собой наблюдается заметное понижение грунтовых вод, что особенно чувствительно на периферии основных массивов торфяноболотных почв.

В результате этого постепенно освобождаются значительные площади, которые без особых мелиоративных мероприятий возможно отвести под культуру, при условии лишь основательной глубокой обработки мощными тракторами, что необходимо для быстрого разрушения крупных остатков болотной растительности. Таких участков в настоящее время особенно много у побережий ныне исчезающего оз. Гилли, в пределах земельных наделов колхозов селений Норакерт, М. и Б. Мазра, а также Загалу.

Приведенные выше значительные территории в местности «Чайлахнер», покрытые черноземовидными почвами, также пригодны под культуру сейчас.

Признаки болотного процесса идут на убыль и в средней части Мазринской равнины, но здесь, как видно, появляется новый фактор—солонцеватость почвы, что при мелиорации последней требует осторожнего и более серьезного подхода к этому вопросу.

Необходимо, чтобы колхозы Басаргечарского района сами бы постепенно освоили эти освобождающиеся новые территории.

Углубление основного ложа реки Мазра-чай в нижнем ее течении обеспечило бы свободный выход в озеро Севан воды, накопляющейся в пониженной западной части болота, что ограничило бы ежегодно заливаемую площадь; от регулирования стока основного потока вод из равнины в озеро зависит решительное уменьшение заболоченных пространств и вовлечение в культуру огромных площадей новых земель.

Совершенно особо стоит вопрос о практическом использовании Крхбулагской заболоченной равнины, где после прекращения беспорядочного блуждания вод Крхбулагских родников и проведения небольшой сети коллекторов в 1945 г. положение резко изменилось к лучшему, что дает возможность почти всю равнину, площадью больше 300 га, отвести под хлеба, картофель и др. овощи.

В пределах Мартунинских болот в 1943 г. некоторые площади болотно-луговых почв были обработаны и отведены под картофель, подсолнечник на силос, свеклу, морковь. Обработка почвы и разрушение дернины резко улучшили условия среды, в результате чего урожай первого года получился довольно хороший, но тяжела была борьба с сорняками, в особенности с тростником. Вместе с этим несколько га болотно-луговых почв под сел. Мартуни, после двух-трех кратной обработки было отведено под ячмень. После появления всходов грунтовые воды поднялись до 20—25 см. и из борозд их пришлось отвести глубокими канавами, проведенными обычным плугом; в результате с 4—5 таких участков в 1943 г. мы получили по 20 — 22 ц. ячменя с га. В следующем 1944 г. хороший урожай ячменя получился уже без такой обработки, а в 1945 г. весь этот массив Мартунинским колхозом был отведен под картофель. Таким-же образом сейчас можно вовлечь в производство весь заболоченный массив между селениями Мартуни и Вагашен.

Освоение крупного массива Норадузских болот было начато в 1942 г., когда колхоз из года в год, вовлекая в сельскохозяйственный оборот все новые и новые участки, в 1945 г. завершил полное освоение всей заболоченной территории.

Следует отметить, что урожайность этих недавно освоенных земель, по мере вовлечения в оборот потенциальных запасов плодородия, из года в год увеличивается. Большие урожаи при хорошей обработке получаются и в других местах, где осваиваются такие-же заболоченные территории и все это пока без удобрений. Из данных советских болотных станций и работ зарубежных стран видно, что при мелиорации болот удобрение обязательно, и без удобрения невозможно обеспечить достаточно высокий урожай. Так, работы некоторых

опытных станций показывают, что внесение в болотные почвы селитры, извести, навоза удваивает урожай картофеля. овса, а при прибавлении к ним еще бора, марганца и других микроэлементов урожайность этих культур увеличивается еще больше. Работы ряда советских исследователей, появившиеся в печати совсем недавно, в 1945 г., также показывают, что марганец совместно с NPK сильно увеличивает урожай и повышает качество продукции.

Рассматриваемые нами болотные почвы Севанского бассейна хотя в первое время дают хорошие урожаи, но вопрос их химизации на базе правильных севооборотов не отпадает, а, наоборот, в перспективе заслуживает серьезного внимания. А необходимость химической мелиорации в связи с солонцеватостью некоторых участков ставит вопрос об основательном физико-химическом и биологическом изучении наших болотных почв, в особенности Басаргечарских.

В заключение необходимо сказать несколько слов о том, как выглядят на сегодня бывшие болотные почвы, освоенные в последние годы в пределах Севанского бассейна.

Так, например, наши наблюдения, проведенные в сентябре 1945 г. в Норадузе, показали, что, во-первых, в процессе обработки кое где на незначительной площади появились солонцеватые пятна, о возможности образования которых мы предупреждали еще в 1943 г., а во-вторых, за 3 года обработки и культуры болотные почвы Норадузского массива резко изменились—избытки накопленных веками органических веществ довольно разложились, грунтовые воды ушли далеко вглубь, появилась хорошая комковатая структура и только прекрасно сохранившиеся охристые пятна и железистые прожилки, сильная засоренность огородов тростником вместе со своеобразным оттенком новой почвы, созданной трудами наших колхозников, напоминают о том, что еще недавно здесь было болото.

Из краткого рассмотрения приведенных выше результатов наших исследований возможно сделать следующие выводы.

1. Заболоченные почвы Севанского бассейна представлены той стадией болотного процесса, которая соответствует осоковому типу болот, переходящему к осоково-зеленомоховому.

2. В пределах болотных почв Севанского бассейна пока не обнаружено следов деревянистых растений, чем наши болота отличаются от таковых северных областей Союза ССР.

3. По своему происхождению болотные почвы Севанского бассейна не одинаковы: основные их массивы-результат последующего развития луговой стадии (Норадуз, Басаргечар, Мартуни), часть из них вторичного происхождения (Крхбулаг), а некоторые приозерные болотные участки — результат зарастания мелководных заливов оз. Севан.

4. По возрасту болотные образования Севанского бассейна сравнительно молодые, что доказывается небольшой мощностью торфяной массы и невысокой их зольностью.

5. Болотные почвы Севанского бассейна в значительной своей части слабо засолены и несколько солонцеваты.

6. В природных условиях Севанского бассейна имеет место очень медленный вековой процесс естественной мелиорации болот, что в последнее время в связи со спуском озера довольно усиливается.

7. В результате такой природной самомелиорации болотные образования Севанского бассейна переходят в черноземовидные и даже черноземные почвы с тенденцией к последующему их остепнению, а местами превращаются в почвы, близко подходящие к каштановым.

8. Большие площади болот и заболоченных почв в настоящее время изменились настолько, что без особых мелиоративных мероприятий, при одной лишь тщательной обработке дерново-торфянистого покрова и небольшой затрате средств и труда их можно отвести под овощные культуры, лен, кормовые травы и даже хлеба.

Кафедра почвоведения
Армянского Сельскохозяйственного Института.
Ереван, 1948 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных работ

Գ. Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԲԱՄԲԱԿԱՑԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սովետական ժողովուրդը ձեռնամուխ է եղել Ստալինյան չորրորդ հնգամյա հոյակապ պլանի իրագործմանը։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում այդ մեծագույն պլանի իրագործումը պահանջում է գիտության նվաճումների լայն օգտագործում և առաջավոր տեխնիկայի համարձակ կիրառում։ Նոր հնգամյակում գյուղատնտեսական արտադրության մեջ կարևորագույն նորամուծություններից մեկը ճիշտ խոտադաշտային ցանքաշրջանառությունների արմատացումն ու իրացումն է բոլոր կոլխոզներում։ Սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության մեջ ճիշտ ցանքաշրջանառությունների ժողովրդատնտեսական նշանակությունը շատ մեծ է։ Ճիշտ ցանքաշրջանառությունը պետական պլանի կոնկրետ արտահայտությունն է։ Ճիշտ ցանքաշրջանառությունը հողագործության և անասնապահության ռացիոնալ զուգակցման, հողի բերրիության բարձրացման, աշխատանքի և արտադրության միջոցների ճիշտ կազմակերպման, բերքատվության անընդհատ աճման և ընդհանրապես ամբողջ սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության զարգացման կարևորագույն միջոցառում է։

Չնայած դրան, մեզ մոտ դեռ մինչև այժմ շատ կոլխոզներ լրիվ իրացրած ցանքաշրջանառություններ չունեն, մի հանգամանք, որը կայուն և բարձր բերք ստանալու գործում խիստ բացասական դեր է կատարում։ Դրան հակառակ, կան այնպիսի առաջավոր կոլխոզներ ու բարձր բերքի վարպետներ, որոնք ճիշտ խոտադաշտային ցանքաշրջանառության իրացման և բարձր ագրոտեխնիկայի կիրառման միջոցով ապահովում են մշակվող բոլոր կուլտուրաների բարձր բերքատվությունը։

Հայաստանի բամբակացան շրջաններում վերջին տարիները ձեռք են բերվել մեծ նվաճումներ, սակայն այդ նվաճումներն է՛լ ավելի մեծ կլինեին, եթե բոլոր կոլխոզներն ունենային հիմնավորված և լրիվ իրացրած խոտադաշտային ցանքաշրջանառություններ, որոնց մեջ հողի բերրիության լավացման տեսակետից խոշոր դեր կատարում են բազմամյա խոտաբույսերը։ Բազ-

մամյա խոտաբույսերի մեծ արժեքն այն է, որ նրանք լավացնում են հողի ստրուկտուրան, հարստացնում են հողը բույսերի կյանքում խոշոր դեր կատարող ազոտային սննդանյութերով, լավացնում են նրա ջրային ռեժիմը և այդ բոլորի հետևանքով նպաստում մշակվող բոլոր բույսերի բերքատվության պրոգրեսիվ աճմանը։ Այդ բոլորի հետ միասին խոտադաշտից ստացվող բարձրորակ կերը ստեղծում է բոլոր անհրաժեշտ նախադրյալները՝ զարգացնելու նաև անասնապահությունը։ Այդ մասին վկայում են մի շարք հետազոտությունները, ինչպես նաև ստորև բերված աղյուսակների տվյալները, որոնք ստացվել են մեր կողմից բազմամյա խոտերին հաջորդող կուլտուրաների աճման և զարգացման վրա ճիմուտի ունեցած ազդեցությունն ու հետազդեցությունն ուսումնասիրելիս։ Այդ աշխատանքը մենք սկսել ենք 1931 թվին և վերջացրել 1938 թվի վերջին։ Դիտողություններ և հաշվառումներ, սկսած 1931 թվից, տարվել են Արարատյան հարթավայրի մի շարք կոլխոզներում։ Բազմամյա խոտաբույսերի ազդեցության տակ հողի ֆիզիկական և այլ հատկանիշների փոփոխության բնույթն ուսումնասիրվել է գլխավորապես Էջմիածնի Բամբակագործական զոնալ կայանում։ Բացի դրանից, փոքր տարածության վրա մի փորձ էլ դրվել է Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամասում, որտեղ փորձարկվել են բազմամյա խոտաբույսերը և նրանց խառնուրդը։

Աշխատանքի մեթոդիկան

Մեր ուսումնասիրությունները տարվել են Էջմիածնի Բամբակագործական Զոնալ կայանում՝ ութդաշտյան ցանքաշրջանառության դաշտերում, որը դրված էր վեց կրկնությամբ ՋակՆԻԽԻ-ի մեթոդիկայով և կուլտուրաների հետևյալ հաջորդականությամբ՝ 1. աշնանացան ցորեն +առվույտ (որպես ենթացանք), 2. առվույտ, 3. առվույտ, 4, 5, 6, 7—բամբակ և 8. գարնանացան գարի։ Հողի նմուշները վերցնելու ժամկետները համարյա միշտ համաձայնեցվել են բամբակի աճման հիմնական փազերի՝ ծլման, կոկոնակալման, ծաղկման, հասունացման և բերքահավաքի ավարտման հետ։ Մոլախոտերի ուսումնասիրությունը տարվել է ամառը և աշնանը, առանձին ուշադրություն դարձնելով մոլաբուրգույի և արվանտակի բիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրության վրա։ Հողի նմուշները վերցվել են ըստ շերտերի, ջրելուց առաջ և դրանից մոտ 5—6 օր հետո՝ հողի «քեշի» ժամանակ, յուրաքանչյուր հողաբաժնի երկու ծայրերում և մեջտեղում։ Միջին նմուշը կազմվել է տեղում (դաշտում)։ Բոլոր անալիզները կատարվել են Գյուղատնտեսական Ինստիտուտի Ընդհանուր Երկրագործության ամբիոնի լաբորատորիայում։

Գյուղատնտեսական Ինստիտուտի դաշտի հողը, որտեղ դրվել է փորձը, գորշ է, հզոր, միջին-կավավազային, թույլ կարբոնատային, մանր-կնձկային, մինչև 28 սմ խորությամբ պնդացած, իսկ 28-ից մինչ 86 սմ շերտում թույլ ամրությամբ, կապակցված է, մեկ հորիզոնից մյուսին անցնում է նկատելի կերպով, աղաթթվից եռում է թույլ, առաջացել է պրոլյուվիալ-դելյուվիալ նստվածքների վրա։ Այդ հողը միանգամայն պիտանի է բամբակի, ցորենի,

առվույտի, բանջարաբույսերի, խաղողի և այլ բույսերի մշակության համար, մոլախոտերով վարակված է ուժեղ։ Էջմիածնի փորձադաշտի հողը, որտեղ դրված էր 8-դաշտյան ցանքաշրջանառությունը, գորշ-շագանակագույն է, կուլտուրականացած, միջին հզորությամբ, թույլ կմախքային, միջին կավավազային, ոչ կարբոնատային, առաջացած հին ալյուվիալ-ճալաքարային նստվածքների վրա։

Փորձնական սխեմաների քննարկումը

Հողի բերրիության վերականգնման և հետագա անընդհատ լավացման միջոցառումները անխզելիորեն կապված են հողի ամուր կնձկային ստրուկտուրա ստեղծելու հետ, այդ իսկ պատճառով ագրոաշխատանքների սիստեմ մշակելիս մենք առանձնապես մեծ ուշադրություն ենք դարձրել միջոցառումների այնպիսի կոմպլեքսի վրա, որն ի վիճակի է ամենից արագ և ամենից կատարյալ կերպով լավացնելու հողի ստրուկտուրան, հետևապես նաև նրա ջրային, օդային և սննդառության պայմանները։

Հողում կնձկային ստրուկտուրա ստեղծել և այդ ստրուկտուրան պահպանել անհրաժեշտ է բույսերի զարգացման և սննդանյութերի յուրացման ամբողջ ժամանակաշրջանում։ Այդ նպատակին հասնելու համար պետք է հողում հնարավորին չափ շատ օրգանական նյութ կուտակել և այդ նյութից հումուս ստանալու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել։ Սակայն բույսերը իրենց կյանքի համար պահանջում են սննդանյութերի անընդհատ մատակարարում, հետևապես օրգանական նյութերի անընդհատ քայքայման և վերականգնման պրոցես։ Քայքայվում է հողի հումուսը և դրա հետ միասին ավտոմատ կերպով պակասում է նաև հողի ստրուկտուրայի ամրությունը։ Այստեղից էլ առաջանում է ցանքաշրջանառությանն առաջադրվող երկրորդ խնդիրը, այն է, պարբերաբար վերականգնել քայքայված ստրուկտուրան և նրան անհրաժեշտ ամրություն տալ։

Ագրոնոմիորեն մեծ արժեք ներկայացնում է ինչպես կայուն, այնպես էլ անկայուն կնձիկների քանակի և մեծության որոշումը։ Ամուր ստրուկտուրա չունեցող հողը շատ քիչ է տարբերվում անստրուկտուր հողից։ Ըստ մեր դիտողությունների՝ Հայաստանի բամբակացան շրջաններում ամուր ստրուկտուրա չունեցող հողերը 2 անգամ ջրելուց հետո խիստ փոշիանում են և չորանալիս տալիս են հաստ ու ամուր կեղև, իսկ վարելիս առաջացնում են բազմաթիվ կոշտեր։

Ցանքաշրջանառության հետ կապված հարցերն ուսումնասիրելիս մեզ նախ և առաջ անհրաժեշտ էր պարզել, թե բամբակի մշակության տակ դրած ճիմուտը քանի տարի կարող է պահպանել իր լավ ստրուկտուրան և ստրուկտուրայի ամրությունը, քանի որ դրանից էլ կախված է մի ուրիշ հարց՝ թե խոտադաշտին հաջորդող բամբակը քանի տարի անընդհատ կարելի է մշակել միևնույն հողամասում, առանց իջեցնելու նրա բերքատվությունը։ Դրանից բացի՝ աշխատել ենք պարզել, թե թվարկած հատկանիշները ի՞նչպես են փոխվում տարբեր բազմամյա խոտերից կամ նրանց խառնուրդից հետո։ Այս բո-

լոր հարցերի պարզաբանումը, ագրոտեխնիկական բնույթի հարցերի ուսումնասիրության հետ միասին, մեզ անհրաժեշտ են ցանքաշրջանառության այս կամ այն տիպը հիմնավորելու և հողի բերրիության (ջրային, սննդառության և օդային պայմանների) լավացման սիստեմ մշակելու համար։

Հողի ստրուկտուրան

Հողի ստրուկտուրան բացառիկ կարևոր նշանակություն ունի, որովհետև ստրուկտուրային հողում ջրի և օդի միաժամանակ առկայության պայմաններում տեղի է ունենում սննդանյութերի կուտակման ուժեղ պրոցես և կուլտուրական բույսերի զարգացման համար ստեղծվում են լավագույն պայմաններ։ Թե՛ տեսականորեն և թե՛ գործնականորեն ապացուցված է, որ լավ ստրուկտուրայից զրկված հողի բերրիությունը մեծ չափով իջնում է, այդ իսկ պատճառով ցանքաշրջանառության մեջ մտնող այս կամ այն կուլտուրայի ազդեցության տակ հողի ստրուկտուրայի փոփոխությունների ուսումնասիրության վրա մենք առանձնակի ուշադրություն ենք դարձրել։

Ագրեգատությունը.—Ստրուկտուրային առանձնությունների մեծության և փոխհարաբերության հաշվառում կատարվել է հողի ագրեգատ անալիզի միջոցով, վեգետացիայի ընթացքում երեք անգամ Ն. Ի. Սավվինովի առաջարկած մեթոդով (աղ. 1)։

Էջմիածնի բամբակագործական կայանում ստացված տվյալները ցույց են տալիս, նախ, որ աշնանը խոշոր կնձիկների քանակը մեծանում է հողի բոլոր շերտերում՝ միջին և մանր կնձիկների և հատիկային էլեմենտների հաշվին, երկրորդ, որ ճմաշերտի վրա ցանած բամբակի դաշտի հողն ագրեգատ կազմության տեսակետից ունի ամենից լավ ցուցանիշներ։ Ճմաշերտը շուռ տված և բամբակի մշակության տակ դրած հողը բռնում է երկրորդ տեղը։ Նույնպիսի ցուցանիշներ ունի մեկ տարի անասնական օգտագործման տակ գտնվող առվույտի դաշտից վերցրած հողը, իսկ ամենից վատ ցուցանիշներ ունի այն հողամասը, որտեղ բամբակը նույն տեղում ցանվում է մի քանի տարի անընդհատ։ Մնացած հողամասերը համարյա միատեսակ ցուցանիշներ ունեն։

Քանակական արտահայտության տեսակետից ուսումնասիրված ֆրակցիաներից գերակշռում են խոշոր և միջակ կնձիկները, ինչպես նաև փոշիացած ֆրակցիան։ Ամենից քիչ քանակությամբ ներկայացված են հատիկային էլեմենտները։ Վարելաշերտը և ենթավարելաշերտը միմյանցից շատ քիչ են տարբերվում, սակայն որոշ ստրուկտուրային դեֆիցիտ նկատվում է բոլոր հողամասերում։

Այսպիսով, առվույտի դերը հողի ագրեգատ կազմության լավացման տեսակետից միանգամայն ակներև է։

Դիսպերսականությունը.—Դիսպերսականությունը որոշվել է ըստ Ռոբինզոնի՝ պիպետկայի մեթոդով, նույնպես երեք անգամ՝ վեգետացիայի ընթացքում։

Դիսպերսականության դինամիկայի ուսումնասիրության տվյալները վկա-

Աղյուսակ 1

Հողի ագրեգատ կազմությունը %%-ով (1936 թ. Էջմիածնում)

Ցանքաշրջ. դաշտերի համարը	Դ ա շ տ	Շերտի խորութ. սմ-ով	Ագրեգատների մեծութ. մմ-ով: Խոշոր կնձիկներ 10—3	Միջին կնձիկներ 3—1	Մանր կնձիկներ 1—0,5	Կնձկային էլեմենտներ 0,5—0,25	Փոշիաց. մաս <—0,25	Ընդամենը կնձկային էլեմենտներ
I	Աշնանացան ցորեն + առվույտ (ննթացանք)	0—20	28,5	25,8	8,7	2,4	34,6	65,4
		20—40	23,7	28,0	10,9	2,6	34,8	65,2
		40—60	23,8	25,9	13,9	4,7	31,7	68,3
II	Առվույտ (անասնական օգտագործման 1 ին տարին)	0—20	33,6	23,8	5,3	1,7	35,6	64,4
		20—40	29,0	31,0	6,3	2,0	31,7	68,3
		40—60	30,2	27,7	10,6	3,9	27,6	72,4
IV	Բամբակ, ցանված ճմաշերտի վրա	0—20	34,9	28,4	9,4	3,2	24,1	75,9
		20—40	32,1	30,6	9,6	2,2	25,5	74,5
		40—60	32,1	33,4	9,9	4,6	20,0	80,0
V	Բամբակ, ցանված ճմաշերտը շուռ տալուց հետո	0—20	29,4	28,4	8,7	2,9	30,6	69,4
		20—40	24,5	33,8	9,2	3,4	29,1	70,9
		40—60	29,2	28,6	10,8	7,4	24,0	76,0
VII	Բամբակ, խոտադաշտը վարելուց 4 տարի հետո	0—20	23,4	20,3	10,9	2,6	42,8	57,2
		20—40	22,5	24,1	11,3	3,4	38,7	61,3
		40—60	25,3	26,2	13,5	4,5	30,5	69,5
VIII	Զարն. դաշտ բամբակից հետո	0—20	26,4	26,2	10,7	1,2	35,5	64,5
		20—40	25,3	26,2	12,5	2,6	33,4	66,6
		40—60	25,1	28,0	11,2	5,6	30,1	69,9

յում են հողի մասսայի փոշիացման առկայության մասին ութ դաշտյան ցանքաշրջանառության բոլոր դաշտերում և ամբողջ վեգետացիայի ընթացքում։

Դիսպերսականությունը կիրառվող միջոցառումների և մթնոլորտային պայմանների ազդեցության տակ ուժեղ փոփոխության է ենթարկվում։ Ջրա-

յած դրան, դիսպերսականության դինամիկայի տեսակետից, ցանքաշրջանառության առանձին դաշտերում նկատվում է որոշակի օրինաչափություն, որը կախված է ինչպե՛ս տվյալ դաշտում առվույտի մշակման, այնպե՛ս էլ խոտադաշտի վարից հետո բամբակի մշակման տևողությունից։

Ստորև № 2 աղյուսակում բերվում է մեր կատարած անալիզների մի մասը։

Աղյուսակ 2

Հողի դիսպերսականությունը %%-ով (1936 և 1937 թ. թ. էջմիածնում)

Ցանքաշրջ. դաշտերի համարը	Դաշտ	Շերտ	Մասնիկների տրամագիծը միկրոններով						
			50	20	10	5	2	1	0,5
I	Աշնացան + առվույտ (ենթացանք)	Վարելաշերտ	17,2	9,4	6,5	4,0	2,2	1,4	1,0
		Ենթավարելաշերտ	15'9	9'1	5,5	4,1	2,2	1,5	0,3
II	Առվույտ (տնտեսական օգտագործման 1-ին տարին)	Վարելաշերտ	16,0	8,0	5,0	3,7	2,2	1,0	0,5
		Ենթավարելաշերտ	17,2	9,6	5,6	2,9	2,9	1,0	0,5
III	Առվույտ (տնտեսական օգտագործման 2-րդ տարին)	Վարելաշերտ	11,9	5,0	2,9	2,1	1,2	0.9	0,5
		Ենթավարելաշերտ	12,5	4,9	3,3	2,5	1,5	0,9	0,4
IV	Բամբակ, ցանված ճմաշերտի վրա	Վարելաշերտ	12,4	5,1	3,0	1,7	1,2	0.7	0,6
		Ենթավարելաշերտ	13,4	5,4	3,6	2,2	1,2	0,9	0,4
V	Բամբակ, ցանված ճմաշերտը շուռ տալուց հետո	Վարելաշերտ	15,2	7,3	5,1	3,1	2.0	1,4	0,9
		Ենթավարելաշերտ	14,9	7,3	5,3	3,1	1,8	1,2	0,7
VI	Բամբակ, խոտադաշտը վարելուց երեք տարի հետո	Վարելաշերտ	16,6	8.4	5,8	3,4	2,0	1,7	0,7
		Ենթավարելաշերտ	14.9	7,8	4,7	3,1	1,7	1,5	0,7
VII	Բամբակ, խոտադաշտը վարելուց չորս տարի հետո	Վարելաշերտ	21,9	10 5	6,5	3,1	1,8	1,0	0,5
		Ենթավարելաշերտ	20,0	9,4	5,9	3,5	1,9	0,8	0,5
VIII	Գարն. գարի բամբակից հետո	Վարելաշերտ	17,3	9,6	6,2	4,1	2,3	1,1	0,5
		Ենթավարելաշերտ	17,7	8,6	6,2	3,8	2,3	1,4	0,7

Այս աղյուսակի տվյալներից պարզվում է հետևյալը.

1. Բոլոր ֆրակցիաներում և ցանքաշրջանառության բոլոր դաշտերում, իբրև ընդհանուր երևույթ, հողը ամենից քիչ դիսպերս մասնիկներ պարունակում է գարնանը, ամենից շատ՝ աշնան վերջում։ Ամառվա ամիսներին փոշիացած մասնիկները քանակապես միջին տեղն են բռնում։

2. Ինչպես վարելաշերտում, այնպես էլ ենթավարելաշերտում դիսպերս մասնիկների քանակը խոշոր ֆրակցիաներից դեպի ավելի մանր ֆրակցիաները պակասում է։

3. Առվույտի դաշտերում և ճմաշերտի վրա ցանած բամբակի հողամասում դիսպերս մասնիկների քանակը հողի վարելաշերտում ավելի պակաս է, քան ենթավարելաշերտում, ցանքաշրջանառության մնացած դաշտերում նկատվում է հակառակ պատկեր։

4. Ամենից քիչ դիսպերս մասնիկներ պարունակում է երկու տարի տնտեսական օգտագործման տակ եղած առվույտի և ճմաշերտի վրա ցանված բամբակի հողամասերից վերցրած հողը։ Դրանց հաջորդում է մեկ տարի տնտեսական օգտագործման տակ եղած առվույտի և շուռ տված ճմաշերտում ցանած բամբակի տակ գտնված հողը։

5. Ամենից շատ դիսպերս մասնիկներ պարունակում են այն հողամասերը, որտեղ բամբակը մի քանի տարի նույն տեղում ցանվում է անընդհատ։ Դրանց հաջորդում է գարու և աշնանացան ցորենի դաշտերի հողը։

Ագրեգատ կազմության և դիսպերսականության ուսումնասիրության տվյալների անալիզից պարզվում է, որ հողի ֆիզիկական հատկությունների լավացման և նրա բերրիության բարձրացման տեսակետից բազմամյա խոտը խոշոր դեր է կատարում։

Առվույտի դրական դերը, հողի ֆիզիկական հատկությունները լավացնելու տեսակետից, պարզ երևում է նաև արտադրության պայմաններում կատարած մեր հետազոտության տվյալներից։ Ուսումնասիրությունը տարվել է Հոկտեմբերյան շրջանի Լենինի անվան Հոկտեմբեր կոլխոզի այն հողերում, որոնք գտնվում են երկաթգծին կից։ Հողն այստեղ գորշ է, կուլտուր-ջրարբի, հումուսը 0—20 սմ շերտում կազմում է 2,1% և 20—40 սմ շերտում՝ 0,95%։ Ընդհանուր ազոտը 0—20 սմ շերտում կազմում է 0,107%, 20—40 սմ շերտում՝ 0,087%։ Յուրացվող ֆոսֆորական թթուն տատանվում է 0,025—0,055%-ի միջև։ Փորձնական տվյալները ցույց են տալիս, որ ազոտական և ֆոսֆորաթթվական պարարտանյութերը բամբակի բերքատվությունը բարձրացնում են 3- 5-ից մինչև 9,0 ց/հ։ Բարձր ագրոտեխնիկայի պայմաններում այդ էֆեկտիվությունն ավելի բարձր է։

Ագրեգատ կազմությունը որոշվել է հողի վարելաշերտում, ջրելուց առաջ (աղյուսակ № 3)։

Այս տվյալներից երևում է, որ ճմաշերտը հինգ տարի բամբակի տակ մնալուց հետո՝ քայքայվում է կնձիկների 43,7%-ը (58,1—14,4), ընդորում այդ քայքայումը տեղի է ունենում գլխավորապես մանր կնձիկների և հատիկային էլեմենտների հաշվին։ Որքան երկար է առվույտի մշակության տևողությունը, այնքան բարձր է կնձկային մասնիկների քանակությունը (առանձնապես մանր կնձիկների և կնձկային էլեմենտների)։

Առվույտին հաջորդող բամբակի դաշտում հողը՝ մշակման առաջին տարին ագրեգատ կազմության տեսակետից բռնում է առաջին տեղը, երկրորդ և երրորդ տարիներին՝ միջին տեղը և չորրորդ ու հինգերորդ տարիներին՝ վերջին տեղը։

Աղյուսակ 3

Հողի ագրեգատ կազմությունը (Հոկտեմբերյանում)

№ ը/կ	Բույս	Մշակման տևողությունը	Ագրեգատների մեծությունը մմ-ով				
			մինչև 3	3—1	1,0—0,5	0,5—0,25	Ընդամենը կնձկային էլեմենտներ
1	Բամբակ	5 տարի անընդհատ	1,5	5,6	3,3	4,0	14,4
		Առվույտից անմիջապես հետո 1-ին տարին	5,3	10,0	8,3	6,0	29,6
		Առվույտից հետո 2-դ տարին	3,1	8,4	6,8	7,5	25,8
		3-դ տարին	3,4	5,9	7,3	3,7	20,3
		4-րդ տարին	2,0	7,1	4,6	2,9	16,6
2	Առվույտ	Տնտեսական օգտագործման 2-րդ տարին	3,8	10,3	10,7	10,3	35,1
		Նույնը 3-դ տարին	5,0	7,5	20,7	10,1	43,3
		Նույնը 4-դ տարին	4,2	9,4	25,7	17,6	56,9
		Նույնը 5-դ տարին	4,4	8,0	24,8	20,9	58,1

Այս տվյալներն ստանալուց հետո մենք փորձեցինք որոշել հողի ստրուկտուրային դեֆիցիտը և ընդհանուր ծակոտկենության պատկերը բամբակի երկարատև մշակության տակ եղած հողում նախկին երրորդ, այժմ չորրորդ սովխոզում և ստացանք հետևյալ տվյալները (աղյուսակ № 4)։

Աղյուսակ 4

Բամբակի երկարատև մշակության ազդեցությունը հողի ստրուկտուրային դեֆիցիտի և ընդհանուր ծակոտկենության վրա (4-րդ սովխոզում)

№ ը/կ	Բամբակի մշակման տևողությունը առվույտից հետո (տարի)	Կայուն կնձիկների քանակությունը %%-ով		Ստրուկտուրային դեֆիցիտը վարելաշերտում	Ընդհանուր ծակոտկենությունը %%-ով
		0—22 սմ. շերտում	22—44 սմ. շերտում		
1	1 (ճմաշերտի վրա)	38,7	45,6	6,9	48,4
2	2 (ճմաշերտը շուռ տալուց հետո)	26,6	38,3	11,7	35,6
3	4 տարի	14,3	35,5	21,2	23,7

Այս աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ստրուկտուրային դեֆիցիտ տեղի ունի նույն իսկ ճմաշերտում (6,9%), որն աստիճանաբար մեծանալով՝ չորրորդ տարին կազմում է արդեն 21,2%։ Վարելաշերտից բացի՝ այդ նույն պրոցեսը տեղի է ունենում նաև ենթավարելաշերտում, սակայն անհամեմատ ավելի դանդաղ։ Դրանից էլ իջնում է նաև հողի ընդհանուր ծակոտկենությունը, այն տարբերությամբ միայն, որ այս հատկանիշի տեսակետից փոփոխությունները ավելի ուժեղ են արտահայտվում։

Բազմամյա խոտերի և առանձնապես նրանց խառնուրդի դերը հողի ստրուկտուրայի լավացման գործում ավելի ցայտուն կերպով երևում է Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամասում դրված փորձերի տվյալներից։ Ստորև №№ 5 և 6 աղյուսակներում բերվում են միայն 1937 թ. անալիզների տվյալները, որովհետև այդքանն էլ բավական է գնահատելու համար առանձին խոտաբույսերի և նրանց խառնուրդի դերը հողի բերրիությունը բարձրացնելու և հաջորդող բույսերի կյանքի պայմանները լավացնելու տեսակետից։

Ստացված տվյալներից պարզվում է հետևյալը.

1. Հողի ստրուկտուրան լավացնելու տեսակետից երեք տարի տնտեսական օգտագործման մեջ թողնված առվույտն ավելի բարձր ցուցանիշներ է տալիս, քան երկու տարի թողնված առվույտը։ Այդ առավելությունը նկատվում է 0—22 սմ և 22—40 սմ շերտերում և անհետանում է 40—60 սմ շերտում։

2. Ագրեգատ կազմությունը լավացնելու տեսակետից առաջին տեղը բռնում է առվույտի և ժիտնյակի խառնուրդը, երկրորդ տեղը՝ ժիտնյակը, երրորդ տեղը՝ առվույտը և չորրորդ տեղը՝ կորնգանը։ Ամենից վատ ցուցանիշ-

Աղյուսակ 5

Բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի ազդեցությունը հողի ագրեգատ կազմի վրա (Գյուղատնտեսական ինստիտուտի հողամասում)

Նախորդները 1933	1934	1935	1936	1937	Ֆրակցիաները	Մասնիկների մեծությունը մմ-ով	Շերտի խորութ. սմ. 0—22	22—40	40—60
Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Առվույտ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	1,1	1,4	0,8
					Միջին «	3—1	21,5	25,3	29,7
					Մանր «	1,0—0,5	27,1	26,0	23,2
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,25	14,7	14,6	15,6
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	64,4	67,3	69,3
Կորնգան առանց ծածկոցի	Կորնգան	Կորնգան	Բամբակ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	0,8	0,4	1,0
					Միջին «	3—1	17,7	18,9	25,1
					Մանր «	1—0,5	26,7	22,4	23,7
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,5	12,4	14,2	19,1
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	57,6	55,9	68,9
Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Բամբակ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	1,4	0,3	0,8
					Միջին «	3—1	15,6	15,0	22,6
					Մանր «	1—0,5	27,8	28,6	30,4
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,25	16.9	16,6	14,2
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	61,7	60,5	68,0
Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	0'7	0,7	0,7
					Միջին «	3 -1	10,3	12,6	26,1
					Մանր «	1—0,5	22,3	21,7	18,7
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,25	20,8	22,5	19,4
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	54,1	57,5	64,9
Առվույտ ժիտնյակի խառնուրդ առանց ծածկ.	Խոտի խառնուրդ	Խոտի խառնուրդ	Բամբակ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	1,3	1,0	0,8
					Միջին «	3—1	20,1	29,3	34,1
					Մանր «	1—05	36,1	30,0	31,1
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,25	13,5	12,2	14,0
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	71,0	72,5	80,0
Ժիտնյակ առանց ծածկոցի	Ժիտնյակ	Ժիտնյակ	Բամբակ	Բամբակ	Խոշոր կնձիկներ	Մինչև 3	1,5	0,7	1,0
					Միջին «	3—1	22,2	27,0	34,6
					Մանր «	1,0—0,5	26,3	28,4	29,2
					Հատիկային էլեմենտ.	0,5—0,25	14,6	13,0	10,8
					Ընդամենը կնձիկային էլեմենտներ	—	64,6	69,1	75,6

Աղյուսակ 6

Բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի ազդեցությունը հողի դիսպերսականության վրա (Գյուղատնտեսական ինստիտուտի հողամասում)

№ ը/կ	Նախորդները 1933	1934	1935	1936	1937	Շերտը	Մասնիկների մեծությունը միկրոններով 50	20	10	5	2	1	0,5
1	Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Առվույտ	Բամբակ	Վարելաշերտ	14,1	10,5	6,4	2,2	1,9	1,3	0,4
						Ենթավարելաշերտ	10,6	9,1	3,3	1,8	1,5	0,7	0,4
2	Կորնգան առանց ծածկոցի	Կորնգան	Կորնգան	Բամբակ	Բամբակ	Վարելաշերտ	15,9	11,5	7,3	3,4	1,9	1,5	0,7
						Ենթավարելաշերտ	12,5	7,2	4,1	2,8	2,5	1,8	0,8
3	Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Բամբակ	Բամբակ	Վարելաշերտ	14,3	11,0	4,1	3,3	1,5	0,8	0,5
						Ենթավարելաշերտ	11,6	8,9	4,5	2,7	1,1	0,6	1,0
4	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Վարելաշերտ	14,6	10,3	8,5	4,6	2,3	1,7	0,6
						Ենթավարելաշերտ	12,7	8,3	4,5	2,5	2,1	1,5	0,7
5	Առվույտ ժիտնյակի խառնուրդ առանց ծածկոցի	Խոտի խառնուրդ	Խոտի խառնուրդ	Բամբակ	Բամբակ	Վարելաշերտ	12,2	6,5	3,0	2,4	0,8	0,6	0,5
						Ենթավարելաշերտ	10,2	4,3	4,1	2,1	0,7	0,8	0,3
6	Ժիտնյակ առանց ծածկոցի	Ժիտնյակ	Ժիտնյակ	Բամբակ	Բամբակ	Վարելաշերտ	12,7	7,8	4,1	2,6	1,6	0,9	0,5
						Ենթավարելաշերտ	12,0	6,0	3,0	3,4	1,1	0,8	0.4

ներ ունի այն հողամասը, որտեղ բամբակը մշակվում է 1932 թվից անընդհատ։ Այս առավելությունները առանձնապես լավ աչքի են ընկնում հողի 0—22 սմ և 22—40 սմ շերտերում։

3. Ուսումնասիրված ֆրակցիաներից ամենից մեծ տոկոս կազմում են միջին և մանր կնձիկները, խոշոր կնձիկները չնչին տոկոս են կազմում, հատիկային էլեմենտները միջին տեղ են գրավում։

Կնձկային էլեմենտները խորության հետ միասին քանակապես ավելանում են, բայց այդ ավելացումն արտահայտվում է թույլ կերպով (առանձնապես 0—22 և 22—40 սմ շերտերում)։

4. Դիսպերսականության տվյալներն ավելի համոզիչ կերպով ցույց են տալիս խոտադաշտին հաջորդող բամբակի աճեցողության ու զարգացման պայմանների լավացման գործում առվույտի և ժիտնյակի խառնուրդի կարևորագույն դերը։ Այս հատկանիշի տեսակետից ևս իր դրական էֆեկտով առաջին տեղը բռնում է խոտախառնուրդը, երկրորդ տեղը՝ ժիտնյակը, երրորդ տեղը՝ առվույտը, չորրորդը՝ կորնգանը։

Դիսպերս մասնիկների քանակը բոլոր հողամասերում՝ հողի վարելաշերտում ավելի մեծ է, քան ենթավարելաշերտում։ Այդ տարբերությունն ավելի ուժեղ արտահայտվում է այն հողամասերում, ուր բամբակը միևնույն հողամասում մշակվում է հինգ տարի անընդհատ առվույտից հետո և երկու տարի՝ կորնգանից հետո։

Հումուսի, ազոտի և նիտրատների պարունակությունը ութդաշտյան ցանքաշրջանառության դաշտերում (էջմիածնում)

Հումուսի և ազոտի քանակությունը, ինչպես այդ երևում է № 7 աղյուսակի տվյալներից, այնքան էլ մեծ չէ և խորության հետ պակասում է։ Հումուսը և ազոտը որոշ չափով ավելի են խոտադաշտին անմիջապես հաջորդող բամբակի դաշտում, բայց հետագա տարիներին՝ բամբակի մշակման ազդեցության տակ աստիճանաբար պակասում են։

Նիտրատների քանակը մեծ չափով կախված է նմուշ վերցնելու ժամանակից, խոտադաշտին հաջորդող բամբակի մշակման տևողությունից, ջրային ռեժիմից և մի շարք այլ պայմաններից։ Սակայն, իբրև ընդհանուր երևույթ, միշտ էլ ճմաշերտին հաջորդող բամբակի դաշտում ավելի շատ նիտրատներ են պարունակվում, քան բամբակի մշակման երկրորդ և հետագա տարիներին, այսինքն, նիտրատների նկատմամբ ևս նկատվում է նույն օրինաչափությունը, ինչ որ հումուսի նկատմամբ. բազմամյա խոտից հետո որքան երկար ժամանակ է մշակվում բամբակը, այնքան ավելի է պակասում նիտրատների քանակությունը։

Հումուսը, ազոտը և նիտրատները վեգետացիայի ընթացքում որոշվել են 3 անգամ—6/5, 12 6 և 25 9։ Հումուսը որոշվել է Կոմարովայի մեթոդով, ազոտը՝ ըստ Կյելդալի։ Աղյուսակում բերվում են միայն միջին տվյալները։

Եթե համեմատենք այս աղյուսակի տվյալները հողի ստրուկտուրային վիճակը պատկերող աղյուսակների տվյալների հետ, դժվար չէ տեսնել, որ բամբակի երկարատև մշակության և ստրուկտուրայի աստիճանական վատացման հետևանքով նվազում են բույսերի համար մեծ արժեք ներկայացնող սննդանյութերը և այդ հասկանալի է միանգամայն։ Վատ ստրուկտուրա ունեցող հողում աերոբիոզիսը և անաերոբիոզիսը միմյանց փոխարինում են հաջորդաբար, որովհետև ջուրն ու օդը միմյանց նկատմամբ անտագոնիստներ են և սննդառության ռեժիմի տեսակետից աննպաստ պայմաններ են ստեղծում։ Դրան հակառակ, լավ ստրուկտուրա ունեցող հողում ջուրն ու օդը զբաղեցնում են հողի ընդհանուր մասսայի ընդհանուր ծավալի առանձին մասերը։ Նման հողում աերոբիոզիսը և անաերոբիոզիսը թափանցում են մեկը

Աղյուսակ 7

Նիտրատների, հումուսի և ազոտի քանակությունը էջմիածնի բամբակագործական կայանի ութդաշտյան ցանքաշրջանառության դաշտերում

№ ը/կ	Ցանքաշրջ. դաշտերի համարները	Դ ա շ տ	Շերտի խորութ. սմ-ով	Փորձի սկզբում		1937 թ.		
				Հումուսը %-ով	Ազոտը %-ով	Մեկ կգ. աբսոլ. չոր հողում նիտրատներ միլիգր-ով	Հումուսը %-ով	Ազոտը %-ով
1	I	Աշնանացան ցորեն + առվույտ (ենթացանք)	0—20 20—40 40—60	2,57 1,53 0,96	0,1224 0,1105 0,0655	37,8 16,9 9,9	2,55 1,52 1,00	0,1236 — —
2	II	Առվույտ (տնտես. օգտագործման 1-ին տարին)	0—20 20—40 40—60	« « «	« « «	40,3 18,7 10,1	2,54 1,50 0,99	0,1283 — —
3	III	Առվույտ (տնտես. օգտագծման 2 տարին)	0—20 20—40 40—60	« « «	« « «	61,3 20,8 12,2	2,56 1,52 0,98	0,1275 — —
4	IV	Բամբակ, ցանված ճմաշերտի իրա	0—20 20—40 40—60	« « «	« « «	87,4 31,2 20,4	2,71 1,80 1,11	0,2074 — —
5	V	Բամբակ, ճմաշերտը շրջելուց հետո	0—20 20—40 40—60	« « «	« « «	68,7 23,3 14,5	2,68 1,80 1,10	0,1401 — —
6	VI	Բամբակ, խոտադաշտը վարելուց 3 տարի հետո	0—20 20—40 40—60	« « «	« « «	53,6 19,5 10,7	2,62 1,67 0,99	0,1246 — —
7	VII	Բամբակ, խոտադաշտը վարելուց 4 տարի հետո	0—20 20—40 40—60	« « «	« « «	36,7 15,4 9,2	2,55 1,50 0,92	0,1219 — —
8	VIII	Գարն. գարի բամբակից հետո	0—20 20—40 40—60	« « «	« « «	44,4 16,6 11,3	2,53 1,49 0,91	0,1210 — —

մյուսի մեջ, կազմելով երկու անընդհատ զարգացող և տարբեր ուղղությամբ մեկը մյուսին լրացնող պրոցեսներ, որի հետևանքով բույսերի սննդառության ռեժիմի լավացման տեսակետից լավագույն միջավայր է ստեղծվում։ Հումուսը և ազոտը մեր կողմից որոշվել է նաև Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր կոլխոզի հողերում արտադրության պայմաններում։ Այստեղ ևս բամբակի մշակման ազդեցության տակ հումուսի և ազոտի քանակությունը սիստեմատիկորեն պակասում է, ընդորում առաջին երկու տարին այդ երևույթը

տեղի է ունենում համեմատաբար դանդաղ, իսկ հետագա տարիներին՝ ավելի ուժեղ (աղյուսակ № 8)։

Աղյուսակ 8

Բամբակի մշակման տևողության ազդեցությունը հումուսի, ընդհանուր ազոտի և յուրացվող ազոտի քանակության վրա (Հոկտեմբերյան)

	Բամբակի մշակման տևողությունը առվույտից հետո	% %			Ծանոթութ.
		Հումուս	Ազոտ ընդհանուր	Ազոտ յուրացվող (1 կգ. հողում միլիգրամներով)	
1	5 տարի անընդհատ	2,09	0,105	10,7	Հումուսը որոշվել է Կնոպի մեթոդով
2	4 տարի անընդհատ	2,25	0,139	12,6	
3	3 տարի անընդհատ	2,28	0.168	15,1	
4	2 տարի անընդհատ	2,37	0,182	21,4	
5	1 տարի	2,40	0,208	25,3	

Հողի ծակոտկենությունը, աերացիան, տեսակարար կշիռը եվ հիգրոսկոպիկությունը

Հողի բերրիությունը մեծ չափով պայմանավորված է նաև նրա ծակոտկենությամբ և աերացիայով, որոնք, իրենց հերթին, կախված են ցանքաշրջանառության մեջ մտնող այս կամ այն կուլտուրայի՝ հողի ստրուկտուրային վիճակի վրա ունեցած ազդեցությունից։

Ստորև № 9 աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ ըստ առանձին դաշտերի նշված էլեմենտների քանակական արտահայտությունը տարբեր է, սակայն այդ տարբերությունն այնքան էլ մեծ չէ։

Օդային ռեժիմը համեմատաբար ավելի լավ է ճմաշերտին անմիջականորեն հաջորդող բամբակի դաշտի, թե՛ վարելաշերտում և թե՛ ենթավարելաշերտում։

Դրանից քիչ հետ է մնում բազմամյա խոտերին հաջորդող բամբակի դաշտը մշակման երկրորդ տարին և առվույտի դաշտը՝ տնտեսական օգտագործման առաջին տարին։ Ցանքաշրջանառության մնացած դաշտերը բռնում են միջանկյալ տեղ։

Այսպիսով, հողի օդային ռեժիմի լավացման, հետևապես նաև միկրոբիոլոգիական պրոցեսների ուժեղացման տեսակետից ցանքաշրջանառության մեջ մտնող բազմամյա խոտի դրական դերը միանգամայն պարզ է։ Լավացնելով հողի ստրուկտուրան՝ բազմամյա խոտերը ուժեղացնում են գազափոխանակումը հողի և մթնոլորտի միջև, որը առաջնակարգ նշանակություն ունի բույսերի արմատների աճման, իսկ որ գլխավորն է, հողում ապրող և նրա սնընդառության ռեժիմի լավացման գործում վճռական դեր կատարող միկրոօրգանիզմների կենսագործունեության համար։

Աղյուսակ 9

Հողի ծակոտկենությունը, աերացիան, տեսակարար կշիռը և հիգրոսկոպիկությունը ցանքաշրջանառության տարբեր դաշտերում

№ ը/կ	Ցանքաշրջ. դաշտերի համարները	Դաշտ	Շերտի խորությունը սմ-ով	Ընդհանուր ծակոտկենությունը	Աերացիան	Տեսակարար կշիռը	Հիգրոսկոպիկությունը
1	I	Աշնանացան ցորեն + առվույտ (ենթացանք)	0—20 20—40	55.1 50,3	33,3 30,0	2,45 2,65	4,53 4,67
2	II	Առվույտ (տնտեսական օգտագործման 1 տարին)	0—20 20—40	50,1 47,4	27,8 24,9	2,40 2,55	4,55 5,30
3	IV	Բամբակ, ցանված ճմաշերտի վրա	0—20 20—40	60,3 55,4	37,7 33,6	2,43 2,56	4.61 5,30
4	V	Բամբակ, ցանված ճմաշերտը շուռ տալուց հետո	0—20 20—40	56,9 53,6	34,4 31,2	2,45 2,64	4,67 4,70
5	VII	Բամբակ խոտադաշտը վարելուց 4 տարի հետո	0—20 20—40	54,3 49,6	31,9 28,0	2,56 2,62	4,60 4,73
6	VIII	Գարնանացան գարի, բամբակից հետո	0—20 20—40	54,9 50,0	32,7 27,8	2,50 2,52	4,67 4,83

Հողի ջրային եվ օդային պայմանները

Հողի ջրային և օդային հատկությունները նրանում ընթացող բոլոր պրոցեսներում, հետևապես և կուլտուրական բույսի կյանքում, խոշորագույն դեր են կատարում։ Այդ հատկություններով պայմանավորված են հանքային հողմնահարման և օրգանական նյութերի քայքայման պրոցեսների արագությունն ու ուղղությունը, ստացված նյութերի շարժունությունը և ընդհանրապես այն բոլոր պրոցեսները, որոնցով պայմանավորված է հողի բերրիությունը և կուլտուրական բույսերի աճեցողությունն ու զարգացումը։ Յուրաքանչյուր մոմենտում հողում պարունակված ջրի քանակը, ինչպես նաև ջրի և օդի փոխհարաբերությունը, կախված է մի շարք արտաքին պայմաններից և հողի իր բնույթից։ Չնայած դրան, բազմամյա խոտաբույսերի ազդեցության տակ հողի ջրային և օդային ռեժիմներում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունը պարզ կերպով վկայում է խոտադաշտի կարևորագույն դերի և խոտախառնուրդը ցանքաշրջանառության մեջ մտցնելու անհրաժեշտության մասին։

Հողի ջրային և օդային ռեժիմը մենք որոշել ենք Հոկտեմբերյանում և Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամասում։

Հողի լրիվ խոնավունակությունը որոշվել է փամփուշտներում հողը հագեցնելու եղանակով, աերացիան՝ պիկնոմետրիկ եղանակով։

№ 11 աղյուսակում բերվում են տվյալներ նաև հումուսի պարունակության մասին, որովհետև հողի ջրային և օդային պայմանների փոփոխությունները մեծ չափով կախված են նաև նրանում պարունակված հումուսի քանակից, որն իր հերթին պայմանավորված է մշակվող խոտի տեսակից և մշակման տևողությունից։

Խոնավությունը յուրաքանչյուր անգամ որոշվել է ջրելուց առաջ և հետո, հողի «քեշի» ժամանակ, բոլոր հողամասերում։

№ 10 աղյուսակի տվյալներից երևում է, որ առվույտին հաջորդող բամբակի դաշտերում առաջին և երկրորդ տարին հողը անհամեմատ ավելի շատ խոնավություն է պարունակում, քան մյուս դաշտերում, որտեղ բամբակը միևնույն հողում անընդհատ մշակվում է 3, 4 և 5 տարի։ Ուշադրության արժանի է նաև այն, որ բամբակի մշակման առաջին և երկրորդ տարիներին հողում պարունակած խոնավությունն այնպիսի մեծ տատանումներ չի տալիս, ինչպես մյուս դաշտերում, սա բույսերի նորմալ զարգացման համար մեծ նշանակություն ունի։ Խոտադաշտին հաջորդող բամբակի դաշտում մաքսիմում խոնավություն պարունակվում է 1-ին տարին, մինիմում՝ 5-րդ տարին։ Ընդհանրապես նկատվում է, որ խոտադաշտի վարից հետո որքան ավելի երկար ժամանակ է տևում բամբակի մշակությունը, այնքան ավելի քիչ ջրի պաշար է պարունակվում հողում։ Այդ օրինաչափությունը նկատվում է ինչպե՛ս հողի վարելաշերտում, այնպե՛ս էլ ավելի խոր շերտերում։

Աղյուսակ 10

Բամբակի մշակման տևողության (առվույտից հետո) ազդեցությունը հողի խոնավության վրա (Հոկտեմբերյան)

№ ըստ կարգի	Բույսը	Մշակման տևողությունը	Նմուշ վերցնելու ժամանակը	Խոնավությունը %-ով ըստ շերտերի (սմ)				
				0—20	20—40	40—60	60—80	80—100
1	Բամբակ	Հինգ տարի անընդհատ	Ջրելուց առաջ	8,2	10,4	9,0	9,4	8,5
			Ջրելուց հետո	14,6	15,8	12,1	9,5	8,7
2	Բամբակ առվույտից հետո	1 տարի	Ջրելուց առաջ	13,4	15,2	16,4	11,3	8,9
			Ջրելուց հետո	16,6	18,2	17,3	11,5	9,7
3	«	2 «	Ջրելուց առաջ	12,3	14,9	15,2	10,9	9,8
			Ջրելուց հետո	15,8	17,3	15,9	11,4	8,8
4	«	3 «	Ջրելուց առաջ	11,6	12,2	13,6	10,8	10,3
			Ջրելուց հետո	15,4	17,0	14,8	11,6	9,9
5	«	4 «	Ջրելուց առաջ	9,0	11,5	10,8	9,7	9,1
			Ջրելուց հետո	15,1	16,4	13,1	10,2	10,3

Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամասում (աղյուսակ № 11) բոլոր ցուցանիշների տեսակետից առվույտի և ժիտնյակի խառնուրդի դրական ազդեցությունը պարզ արտահայտվում է մի քանի տարի։ Այդ խոտերի խառնուրդը զգալի չափով լավացնում է հողի ֆիզիկական հատկությունները, որի մասին վկայում են հողի ծակոտկենության, աերացիայի, ագրեգատ վիճակի

Աղյուսակ 11

Բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի ազդեցությունը հողի ջրային և օդային պայմանների վրա (Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամաս)%%-ով

№	Նախորդները					Շերտի խորութ. սմ-ով	Լրիվ խոնավունակությունը	Աերացիան	Դաշտային խոնավութ.	Հիգրոսկոպիկությունը	Կարծր փազայի տեսակարար կշիռը	Հումուսը
	1933	1934	1935	1936	1937							
1	Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Առվույտ	Բամբակ	0—20 20—40 40—60	55.9 61,7 62,6	35,1 33,4 33,4	14,3 23,2 22,4	4,3 4,6 5,1	2,5 2,5 2,5	2,3 1,9 1,5
2	Կորնգան առանց ծածկոցի	Կորնգան	Կորնգան	Բամբակ	Բամբակ	0—20 20—40 40—60	56,2 60,5 61,0	26,5 24,1 22,2	15.3 16,8 19,9	4,0 4,6 4,8	2,6 2,5 2,5	1,8 1,6 1,4
3	Առվույտ առանց ծածկոցի	Առվույտ	Առվույտ	Բամբակ	Բամբակ	0—20 20—40 40—60	57,1 60,6 60,5	36,3 32,2 32,2	14,6 15,4 19,6	3,5 3,5 4,2	2,6 2,5 2,6	1,9 1,5 1,5
4	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	Բամբակ	0—20 20—40 40—60	52,1 60,1 61,1	40,7 37,0 34,8	13,7 15,8 19,1	3,6 3,7 4,3	2,5 2,5 2,5	1,8 1,6 1,5
5	Առվույտ ժիտնյակի խառն. առանց ծածկ.	Խոտախառնուրդ	Խոտախառնուրդ	Բամբակ	Բամբակ	0—20 20—40 40—60	55,6 62,4 66,7	36,0 34,6 32,6	17,6 18,5 19,8	4,2 4,8 5,0	2,5 2,5 2,5	2,5 1,6 1,5
6	Ժիտնյակ առանց ծածկոցի	Ժիտնյակ	Ժիտնյակ	Բամբակ	Բամբակ	0—20 20—40 40—60	51,5 59,5 60,1	26,1 25,3 23,7	17,5 19,2 19,4	4,0 4,3 4,6	2,5 2,6 2,9	2,4 1,5 1,3

և դիսպերսականության որոշման տվյալները։ Այդ տվյալներից երևում է, որ խոտախառնուրդը մեծացնում է հողի ծակոտկենությունը և կայուն ստրուկտուրային հատիկների քանակը, փոքրացնում դիսպերսականությունը և լավացնում աերացիան։

Մինչ այժմ ստացված տվյալները ցույց են տալիս նաև, որ բացի ազոտի շարժուն ձևերի և օդային ու ջրային պայմանների փոփոխություններից, խոտախառնուրդի ազդեցության տակ ավելանում է նաև հումուսի քանակը, այսինքն՝ տեղի են ունենում հողի հատկությունների արմատական ավելի խոր փոփոխություններ։ Այդ փոփոխությունների դրական ազդեցությամբ էլ բացատրվում են մշակվող բամբակի բարձր բերքատվությունը և ստացված հումքի բարձր որակական ցուցանիշները։

Խոտադաշտի դրական ազդեցությունը շատ մեծ է նաև ջրովի հողերում։ Բազմամյա խոտերի խառնուրդի ազդեցության տակ ստեղծված հողի կայուն ստրուկտուրային վիճակը և ջրելու նորագույն ձևերի կիրառումը խիստ պակասեցնում են հողը հաճախակի ջրելու անհրաժեշտությունը, որ մեր պայմաններում շատ մեծ նշանակություն ունի նաև եղած ջրային ռեսուրսները ավելի ռացիոնալ օգտագործելու տեսակետից։

Բազմամյա խոտերի և կուլտուրաների ճիշտ հաջորդականության դերը մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից (ցանքաշրջանառության մեջ և ցանքաշրջանառությունից դուրս)

Հողի էֆեկտիվ բերրիությունը պայմանավորված է ոչ միայն բույսերի զարգացման անհրաժեշտ պայմանների առկայությամբ և նրանց լավագույն փոխհարաբերությամբ, այլ և բույսերի կյանքում բացասական դեր կատարող պայմանների վերացմամբ։ Այդ պայմաններից են՝ մոլախոտերը, հիվանդությունները և վնասատուները։

Բամբակացան շրջանների հողերը մեծ չափով վարակված են կոճղարմատավոր և այլ տիպի մոլախոտերով, որոնք գյուղատնտեսությանը խոշոր վնաս են պատճառում։ Գոյություն ունեցող պայմաններում հնարավոր բոլոր միջոցներով մոլախոտերի ոչնչացումը այդ շրջանների կոլխոզների կարևորագույն խնդիրներից մեկն է։ Մոլախոտերի դեմ պայքարելու առաջնահերթ միջոցներից մեկն էլ խոտադաշտային ցանքաշրջանառությունների արմատացումն ու նրանց մեջ բույսերի ճիշտ հաջորդականություն սահմանելն է։

Բամբակացան շրջաններում կիրառվող խոտադաշտային ցանքաշրջանառություններում մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից, բարձր ագրոտեխնիկայից բացի, մեծ դեր է կատարում նաև խոտադաշտը, որը զբաղված է առայժմ առվույտով, իսկ հետագայում զբաղված է լինելու առվույտի և ժիտնյակի կամ առվույտի և ֆրանսիական ռայգրասի խառնուրդով։

Ստորև բերվում են Էջմիածնի, Հոկտեմբերյանի և Ջանգիբասարի շրջաններում մեր կատարած դիտողությունների և փորձերի տվյալները, որոնք պարզում են բազմամյա խոտաբույսերի դերը մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից (աղյուսակներ №- №- 12, 13 և 14)։

Աղյուսակ 12

Մոլախոտերի քանակը առվույտի ցանքերում (միջինը)

№	Շրջան	Գյուղ կոլխոզ	Մոլախոտերի քարակը մեկ քառ. մ.			
			Տնտ. օգտագործմ. 1 տարին	Տնտ օգտագործմ. 2 տարին	Տնտ. օգտագործմ. 3 տարին	Տնտ. օգտագործմ. 4 տարին
1	Ջանգիբասար	Ղարխուն, Վորոշիլովի անվան կոլխոզ	—	4,5	4,0	6,3
2	Հոկտեմբերյան	Հոկտեմբեր, Վ. Ի. Լենինի անվան կոլխոզ	15,6 18,3	9,9 10,1	9,2 —	— —
3	Էջմիածին	Բամբակագործական կայան	9,6 10,8	7,3 6,8	— 5,5	— —

Աղյուսակ 13

Առվույտի ներազդեցությունը մոլախոտերի վրա բամբակի ցանքերում

№	Շրջան, գյուղ	Բամբակի մշակման տևողությունը առվույտից հետո	Մոլախոտերի քանակը մեկ քառ. մետրում երրորդ քաղհանից առաջ
1	Հոկտեմբեր, Հոկտեմբերյանի շրջան	5 տարի անընդհատ	8,8
		4 « «	10,4
		3 « «	6,1
		2 « «	4,7
		1 «	3,2

Մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն տվյալները, որ ստացվել են բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի փորձարկման ժամանակ՝ Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամասում։ Այդ տվյալները, բերքատվության տվյալների հետ միասին, կարևոր են բամբակի լավագույն նախորդներ ընտրելու համար։

Ստացված տվյալներից պարզ երևում է, որ առվույտը մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից մեծ նշանակություն ունի։

Փորձում մասնակցող բազմամյա խոտերից ամենից բարձր էֆեկտ տալիս է առվույտի և ժիտնյակի խառնուրդը, որին հաջորդում է առվույտը, և ապա կորնգանը և ժիտնյակը։

Աղյուսակ 14

Բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի դերը մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից (*Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամաս*)

№	Կուլտուրա	Մոլախոտերի քանակը մեկ քառ. մ.					Ծանոթութ.
		1933	1934	1935	1936	1937	
1	Առվույտ	73,4	35,6	9,4	26,7	36,4	1935 թվից սկսած բամբակը ստացել է լավ խնամք
2	Առվույտ	61,5	39 5	18,0	—	—	
3	Կորնգան	114,3	43,4	51,4	—	—	
4	Առվույտ ժիտնյակի խառնուրդով	78,5	22,7	14,9	—	—	
5	Ժիտնյակ	95,6	63,6	39,1	—	—	
6	Բամբակ	193,0	164,5	25,6	14,3	2,8	

Բամբակը ևս մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից բազմամյա խոտաբույսերից հետ չի մնում, որովհետև բամբակի ցանքերում քաղհանի և կուլտիվացիայի միջոցով ավելի հեշտ է ոչնչացնել մոլախոտային բուսականությունը (առանձնապես կոճղարմատավոր մոլախոտերը), քան բազմամյա խոտաբույսերի ցանքերում։ Չնայած դրան, բամբակի երկարատև մշակությունը միևնույն տեղում առաջացնում է բերքատվության անկում, որովհետև վատանում են հողի ֆիզիկական և մյուս հատկությունները, հետևապես և բույսերի նորմալ աճման ու զարգացման պայմանները։

Ուշադրության արժանի է նաև այն, որ չորս և հինգ տարի տնտեսական օգտագործման մեջ մնացած առվույտն ավելի պակաս էֆեկտ է տալիս, քան երեք տարի մնացած առվույտը։

Այսպիսով, փորձերի և դիտողությունների տվյալներից պարզվում է, որ բազմամյա խոտերը և նրանց խառնուրդը, ճիշտ ագրոտեխնիկա և լավ խնամք կիրառելու դեպքում, համարյա ամբողջապես մաքուր են լինում մոլախոտերից տնտեսական օգտագործման երկրորդ-երրորդ տարին, որից հետո նրանք սկսում են թույլ զարգանալ և նորից վարակվել մոլախոտերով։

Ելնելով պետական պլանային առաջադրանքներից՝ առաջատար կուլտուրայի՝ բամբակի քանակական և որակական ցուցանիշների բարձրացման վերաբերյալ և հաշվի առնելով բազմամյա խոտաբույսերի վերը նկարագրած առանձնահատկությունները՝ խոտադաշտային ցանքաշրջանառությունների մեջ խոտերը տնտեսական օգտագործման մեջ պետք է թողնել 2 տարուց ոչ ավելի և սակավ դեպքերում միայն երեք տարի։ Շատ տեսակի մոլախոտեր այդ ժամանակ ոչնչանում են բոլորովին, որովհետև խոտի հետ քաղվում են տարեկան 4—5 անգամ նախքան պտուղ կամ սերմ առաջացնելը։ Պարզ է, որ բազմամյա խոտաբույսերը մոլախոտերի դեմ հաջող կարող են պայքարել այն

դեպքում միայն, երբ ցանվում են լավ մշակված հողում, և հետագայում էլ ապահովվում է ցանքերի բարձրորակ խնամքը։ Լավ չմշակված ու վատ նախապատրաստված հողում և ցածրորակ ագրոտեխնիկայի պայմաններում՝ բազմամյա խոտաբույսերի ցանքերում մոլախոտերը չեն ճնշվում և աչքի են ընկնում սերմերի ու ստորերկրյա բազմացման օրգանների մեծ արտադրողականությամբ։

Ցանքաշրջանառության մեջ բազմամյա խոտաբույսերի նշանակությունը մշակվող կուլտուրաների բերքի բարձրացման տեսակետից

Խոտադաշտի խոշոր դերը առանձնապես ցայտուն կերպով երևում է բամբակի բերքատվության տվյալներից։ Անալիզի ենթարկելով խոտադաշտի ազդեցության և հետազդեցության տվյալները՝ դժվար չէ գալ այն եզրակացության, որ գոյություն ունեցող ցանքաշրջանառություններում բամբակի լավագույն նախորդ հանդիսանում են բազմամյա խոտաբույսերը և նրանց խառնուրդը (աղյուսակ № № 15 և 16)։

Աղյուսակ 15

Բազմամյա խոտերի և նրանց խառնուրդի համեմատական էֆեկտիվությունը բամբակի բերքատվությունը բարձրացնելու տեսակետից

(*Գյուղատնտեսական Ինստիտուտի հողամաս*)։

№ ըստ կ	Նախորդը	Բամբակի բերքը (կգ.) ճմաշերտը շուռ տալու տարին փորձամարգում	Մեկ կնգուղի կշիռը գր. (հնդավորի)		
			Առաջին բերքահավաք	Երկրորդ բերքահավաք	Երրորդ բերքահավաք
1	Առվույտ	2,9	4,5	4,4	3,8
2	Կորնգան	2,2	4,8	4,3	4,0
3	Առվույտ ժիտնյակի խառնուրդով	3,3	5,0	4,8	4,6
4	Ժիտնյակ	1,8	4,8	4,8	3,3
5	Բամբակ	1,2	4,4	3,8	3,5

Ստացված տվյալներից պարզ երևում է, որ Հայաստանի բամբակացան շրջաններում (Արարատյան հարթավայրում) ճիշտ խոտադաշտային ցանքաշրջանառության արմատացումը, նրա արագ և լրիվ իրացումը և խոտին հատկացված դաշտը խոտախառնուրդով զբաղեցնելը վճռական նշանակություն ունեն հողի բերրիության պայմանները լավացնելու, մոլախոտերի դեմ պայքարելու, մշակվող բոլոր բույսերի բերքատվությունը բարձրացնելու ու կայուն դարձնելու և այդ բոլորի հետևանքով պետական պլանային առաջադրանքները ժամանակին և անթերի կատարելու գործում։

Աղյուսակ 16

Բազմամյա խոտաբույսերի ազդեցությունը բամբակի բերքատվության վրա

№	Շրջան	Գյուղ	Կոլխոզ	Բերքը ց/հ				
				Ճմաշերտի վրա	Շուռ տված ճմաշերտում	Բազմամյա խոտաբույսից հետո 3-դ տ.	Նույնը 4-դ տարին	Նույնը 5-դ տարին
1	Ջանգիրասար	Ն. Ղարխուն	Վորոշիլովի անվան	17,8	18,2	15,4	—	—
2	Հոկտեմբերյան	Հոկտեմբերյան	Լենինի անվան	15,4	14,8	12,5	8,3	—
				15,0	14,5	13,2	—	—
				18,5	15,4	12,6	10,3	8,1

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ցանքաշրջանառության մեջ առվույտին անմիջականորեն հաջորդող բամբակի դաշտն ագրեգատ կազմության տեսակետից ունենում է լավագույն ցուցանիշներ։ Բամբակի մշակման երկրորդ տարին և առվույտի տնտեսական օգտագործման առաջին տարին հողն ունենում է համարյա միատեսակ ցուցանիշներ և բռնում է երկրորդ տեղը։ Ամենից վատ ցուցանիշներ ունենում է այն դաշտը, որտեղ բամբակը մի քանի տարի անընդհատ հաջորդում է բամբակին։ Միատեսակ ցուցանիշներ ունենում են գարու դաշտը բամբակից հետո և աշնանացանի դաշտը առվույտի ենթացանքով (աղյուսակ №-№- 1—5)։

Վարելաշերտը և ենթավարելաշերտը միմյանցից քիչ են տարբերվում, սակայն որոշ ստրուկտուրային դեֆիցիտ նկատվում է բոլոր ուսումնասիրված հողամասերում։

Նմանօրինակ պատկեր ստացվում է նաև արտադրության պայմաններում կատարած ուսումնասիրություններից (աղյուսակ № 3)։ Որքան երկար է տեվում առվույտի մշակությունը, այնքան ավելի մեծ է լինում կնձկային էլեմենտների քանակը։ Դրան հակառակ, որքան ավելի երկար է տևում բամբակի մշակությունն առվույտից հետո, այնքան ավելի վատանում է հողի ստրուկտուրան։ Այսպես, 5 տարի անընդհատ բամբակ մշակելու դեպքում քայքայվում է ճմաշերտի կայուն կնձիկների 43,7%-ը։

№ 4 աղյուսակի տվյալներից պարզվում է նաև, որ առվույտից հետո բամբակի մշակման չորրորդ տարին ստրուկտուրային դեֆիցիտը կարող է հասնել մինչև 21,2 %։ Կնձկային էլեմենտների քայքայման պրոցեսը հողի ենթավարելաշերտում տեղի է ունենում ավելի դանդաղ, քան վարելաշերտում։ Դրա հետևանքով ընկնում է նաև հողի ծակոտկենությունը, այն տարբերությամբ միայն, որ այս ցուցանիշի տեսակետից առանձին հողամասերում փոփոխություններն արտահայտվում են ավելի ուժեղ։

2. Ամենից քիչ դիսպերս մասնիկներ՝ բոլոր ֆրակցիաներում և ցանքաշրջանառության բոլոր դաշտերում, իբրև ընդհանուր կանոն, նկատվում է գարնանը, ամենից շատ՝ աշնանը։ Ամառային ամիսները բռնում են միջին տեղը։

Ինչպես վարելաշերտում, այնպես էլ ենթավարելաշերտում դիսպերս մասնիկների տոկոսը խոշոր ֆրակցիաներում ավելի մեծ է, քան մանր ֆրակցիաներում։

Առվույտի դաշտի և առվույտին հաջորդող բամբակի հողամասի վարելաշերտում դիսպերս մասերի քանակն ավելի պակաս է, քան ենթավարելաշերտում։ Ցանքաշրջանառության մնացած դաշտերում դիսպերս մասնիկների քանակն ավելի մեծ է հողի վարելաշերտում։

Ամենից քիչ դիսպերս մասնիկներ պարունակում են ցանքաշրջանառության այն դաշտերը, որոնք զբաղված են առվույտով և առվույտին անմիջականորեն հաջորդող բամբակով։ Դիսպերս մասնիկներով ամենից հարուստ են այն հողամասերը, որտեղ մի քանի տարի անընդհատ մշակվում է բամբակ։ Մնացած հողամասերը բռնում են միջին տեղը (աղյուսակներ № № 2 և 6)։

3. Առվույտին անմիջականորեն հաջորդող բամբակի դաշտերում նկատվում է հումուսի և ազոտի զգալի քանակություն, որը սակայն բամբակի մշակման ազդեցության տակ աստիճանաբար նվազում է։ Նույնը նկատվում է նաև նիտրատների նկատմամբ (աղյուսակներ № № 7, 8)։ Այդ նվազման աստիճանը կախված է ճմաշերտի օգտագործման տևողությունից և պայմանավորված է գլխավորապես հողում եղած օրգանական ազոտի կորուստով և հողի ֆիզիկական հատկությունների վատացմամբ։

4. Բազմամյա խոտի դրական ազդեցությունը՝ հողի ընդհանուր ծակոտկենության և աերացիայի լավացման տեսակետից նկատվում է առվույտի տնտեսական օգտագործման, ինչպես և ճմաշերտի օգտագործման (առվույտի դաշտը վարելուց հետո), թե առաջին և թե երկրորդ տարին։ Այդ ազդեցությունն արտահայտվում է և վարելաշերտում, և ենթավարելաշերտում։ Մնացած հատկանիշների լավացման տեսակետից՝ առանձին դաշտերի միջև տարբերությունները թույլ են արտահայտվում (աղյուսակ № 9)։

5. Արտադրության պայմաններում առվույտին հաջորդող բամբակի դաշտն I և II տարիներում շատ ավելի խոնավություն է պարունակում, քան մնացած դաշտերը։ Բացի դրանից, այդ դաշտերում խոնավության ուժեղ տատանումներ չեն նկատվում, որ շատ կարևոր է բույսերի նորմալ զարգացման համար։ Որքան բամբակի մշակման տևողությունը երկարում է, այնքան էլ հողում պարունակած ջրի պաշարը համեմատաբար նվազում է (աղյուսակներ №-№ 10 և 11)։

6. Մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից (աղյուսակներ № № 12, 13 և 14) առվույտի դերը խոշոր է։ Տնտեսական օգտագործման III և IV տարիներին առվույտի ցանքերում մոլախոտերի քանակը մոտ երկու անգամ պակասում է (10,8 փոխարեն 5,5%)։

Չորս տարի տնտեսական օգտագործման տակ եղած առվույտը զիջում է երկու և երեք տարի օգտագործման տակ եղած առվույտին (II տարին՝ 4,5, III տարին՝ 4,0, իսկ IV տարին՝ 6,3)։

Առվույտից հետո ճմաշերտի օգտագործման առաջին տարին մոլախոտերի քանակը բամբակի դաշտում 2—3 անգամ ավելի պակաս է լինում, քան IV և V տարիներին (I տարին՝ 3,2, IV տարին՝ 10,4)։ Սակայն, առվույտը մեծ դրական ազդեցություն ունենում է այն դեպքում, երբ ապահովվում է խոտի ուժեղ զարգացումը ցանքի հենց առաջին տարուց։ Սակավ կուլտուրական հողերում և վատ ագրոտեխնիկայի պայմաններում ստացվում է թույլ և նոսրացած խոտածածկոց, որը չի կարողանում ապահովել մոլախոտերի դեմ տարվող պայքարի լիակատար հաջողությունը։

Առվույտից բացի, գարնանացան և աշնանացան հացահատիկների համար լավագույն նախորդ հանդիսանում է նաև լավ մշակված և պարարտացված բամբակի դաշտը։

7. Առվույտի, իբրև բամբակի նախորդի, դրական ազդեցությունը և հետազդեցությունը հաստատվում է բոլոր դիտողություններով։ Այդ հետազդեցությունն աստիճանաբար նվազում է և ուժեղ չափերի է հասնում IV և V տարիներին (բամբակի բերքը 15,4 ցենտներից իջնում է 8,3 ցենտների, կամ 18,5 ցենտներից՝ 10,3 ցենտների (աղյուսակներ № № 15 և 16)։

8. Մեր այս աշխատության մեջ շարադրված ամբողջ նյութից պարզ երևում է, որ բամբակացան շրջանների պայմաններում միևնույն հողերում բամբակի երկարատև մշակությունը առաջացնում է հողի ստրուկտուրայի սիստեմատիկ և անխուսափելի քայքայում և բերրիության անկում, որն առանձնապես ուժեղ սկսում է երևան գալ բամբակի մշակման երրորդ, չորրորդ տարիներից։ Այդ պայմաններում հողի ստրուկտուրայի պարբերական վերականգնման և լավացման հարցը կոլխոզների և հողային օրգանների ամենօրյա առաջնակարգ խնդիրներից մեկը պետք է համարել։ Մեր փորձերը ցույց են տալիս, որ այդ նպատակին հասնելու լավագույն միջոցը ցանքաշրջանառությունների մեջ խոտադաշտը առվույտի և ժիտնյակի խառնուրդով զբաղեցնելն է, որը հողը հարստացնում է հավասարապես բաշխված և թարմ գոյացած հումուսի պաշարով։

Միանգամայն պարզ է, որ հողի բերրիության պայմանների լավացման, մշակվող կուլտուրաների բերքատվության բարձրացման և ինքնարժեքի իջեցման պրոբլեմը չի կարող լուծվել միայն խոտադաշտային ցանքաշրջանառությունների արմատացմամբ, բազմամյա խոտերի մշակմամբ և հողի ստրուկտուրայի լավացմամբ։ Այդ պրոբլեմի լուծման գործում մեծ դեր են կատարում նաև աշխատանքի ճիշտ կազմակերպումը, աշխատանքների լայն մեխանիզացիան, հանքային և օրգանական նյութերի ճիշտ օգտագործումը, լավագույն սորտերի արմատացումը, սերմաբուծական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և ագրոտեխնիկական աշխատանքների ողջ կոմպլեքսի անթերի կիրառումը։

Г. Х. Агаджанян

СЕВООБОРОТЫ ХЛОПКОВЫХ РАЙОНОВ АРМЯНСКОЙ ССР И ИХ РОЛЬ В ПОДНЯТИИ ПЛОДОРОДИЯ ПОЧВЫ

Работы по изучению севооборотов хлопковых районов Арм. ССР нами начаты в 1931 г. и закончены в 1938 году. Характер изменения физических и других свойств почвы под влиянием люцерны и других многолетних трав изучался, главным образом, в восьмипольном хлопковом севообороте, заложенном Эчмиадзинской хлопковой опытной станцией в 1935 году, и на участке Сельскохозяйственного Института в городе Ереване, где многолетние травы были высеяны с 1933 года.

Результаты изучения дают возможность сделать следующие выводы:

1. Хлопчатник по люцерновому пласту по агрегатности имеет самые лучшие показатели. Хлопчатник по обороту пласта и люцерна первого года хозяйственного пользования занимают второе место и имеют почти одинаковые показатели. Самые худшие показатели имеет поле, где несколько лет подряд высевается хлопчатник, одинаковые показатели имеют ячмень после хлопчатника и озимая пшеница+люцерна (Табл. №№ 1—5).

Пахотный и подпахотный слои мало отличаются друг от друга, однако некоторый структурный дефицит наблюдается на всех изученных участках.

Такая же картина наблюдается в работах по изучению агрегатного состава в условиях производства (Таблица № 3). Чем больше продолжительность пребывания люцерны, тем выше количество комковатых элементов. Наоборот, чем длительнее период культуры хлопчатника после люцерны, тем больше ухудшается структура почвы. Так, после пяти лет культуры хлопчатника после люцерны разрушается 43,7% комков, при чем это разрушение происходит, главным образом, за счет мелких комков и зернистых элементов.

Структурный дефицит имеется даже в почве из-под хлопчатника по пласту (6,9%), который все возрастает и на четвертый год возделывания хл-ка доходит до 21,2% (Табл. № 4). Одновременно с разрушением комковатых элементов в пахотном слое тот же процесс происходит в подпахотном слое, но гораздо медленнее. В зависимости от этого падает также общая скважность, с той только разницей, что по данному признаку на участках различного количества лет пользования после люцерны изменения выражены более сильно.

2. Наименьшее количество дисперсных частиц по всем фракциям и по всем клиньям севооборота, как общее явление, наблюдается весной, наибольшее—в конце осени. Данные определений в летние м-цы занимают промежуточное положение.

Как в пахотном, так и в подпахотном слоях процент дисперсных частиц при переходе от крупных к более мелким фракциям уменьшается. Это уменьшение наблюдается по анализам как 1936, так и 1937 годов.

На клиньях люцерны и хлопчатника по пласту, в пахотном слое дисперсных частиц меньше, чем в подпахотном слое, на остальных же клиньях дисперсных частиц больше в пахотном слое.

Меньше всего дисперсных частиц имеют клинья севооборота, занятые люцерной и хлопчатником по пласту. Самые высокие цифры дисперсных частиц имеют делянки, где хлопчатник несколько лет подряд высевается бессменно, остальные клинья занимают промежуточное положение (Таблицы № № 2 и 6).

3. В посевах хлопчатника по пласту наблюдается наличие значительного количества гумуса и азота, которое, однако, под влиянием возделывания ха-ка постепенно уменьшается. То же наблюдается в отношении нитратов (Таблицы № № 7, 8). Степень этого уменьшения зависит от продолжительности пользования люцернового пласта и обусловливается, главным образом, утерей органического азота и ухудшением физических свойств почвы.

4. По общей скважности и аэрации преимущество наблюдается в посевах хлопчатника по пласту и по обороту пласта, как в пахотном, так и подпахотном слоях. Эти же признаки выражены также в посевах люцерны первого года хозяйственного пользования. В отношении же улучшения других свойств почвы (уд. вес, гигроскопичность) разница между отдельными полями слабо выражена (Таблица № 9).

5. В условиях производства влажность почвы из-под хлопчатника, идущего первым и вторым после люцерны, намного выше влажности почв остальных участков. Кроме того, влажность на этих участках характеризуется отсутствием резких колебаний, что очень важно для нормального развития растений. Чем больше число лет возделывания хлопчатника после люцерны, тем меньше относительный запас влаги в почве (Таблицы № № 10 и 11).

6. В отношении борьбы с сорняками (Таблицы 12, 13 и 14) люцерна имеет огромное значение. В посевах люцерны III и IV годов хозяйственного пользования количество сорняков уменьшается приблизительно в 2 раза (5,5% вместо 10,8%).

По своей эффективности люцерна четвертого года хозяйственного пользования уступает люцерне второго и третьего годов хозяйственного пользования (в посевах люцерны второго года пользования 4,5, третьего года 4,0 и четвертого года 6,3).

После распашки люцерны на полях хлопчатника по пласту и обороту пласта сорняков бывает в два раза меньше, чем в посевах хлопчатника на

четвертый и пятый годы возделывания (в I год 3,2, IV год 10,4). Однако, большое положительное влияние люцерны проявляется лишь в том случае, если обеспечивается сильное развитие травы с первого же года жизни. На менее культурных почвах и при плохой агротехнике получается изреженный и слабый травостой, в результате чего не обеспечивается полный успех борьбы с сорняками.

Кроме люцерны, хорошим предшественником для яровых и озимых зерновых является хорошо обработанное и удобренное поле хлопчатника.

7. Положительное действие и последействие люцерны, как предшественника для хл-ка, проявляется при всех наблюдениях. Последействие люцерны постепенно снижается, при чем сильное падение наблюдается на IV и V годы возделывания хл-ка после распашки люцерны (урожай хл-ка с 15,4 ц/га спускается до 8,3 ц/га, или с 18,5 ц/га до 10,3 ц/га. Таблицы № № 15 и 16)

ЛИТЕРАТУРА

1. *Аваев М.* 1937 г. „Значение пара в правильных травопольных севооборотах совхозов и колхозов". Журнал соц.—реконстр. сельского хозяйства № 8.

2. *Агаджанян Г. Х.* 1940 г. „К изучению влияния многолетних трав и их смеси на физические свойства почвы и на урожай хлопчатника". Сборн. научн. тр. Ботан. общ-ва Армении, вып. 4, Ереван.

3. *Астапов С. В.* 1928 г. „Очерки по изучению физических свойств почвы".

4. *Белов А. И.* 1931 г. „Культура люцерны в Средней Азии", Ташкент.

5. *Белов А. И.* 1934 г. „Посев и уход за молодой и старой люцерной". Ташкент.

6. *Болтникова М.* 1937 г. „Люцерна, как восстановитель плодородия почвы". Журнал химиз. соц. земл, № 10.

7. *Виленский Д.* 1936 г. „Влияние влажности почвы при ее обработке на прочность почвенной структуры". Физика почв. Труды Советской секции Международной ассоциации Почвоведов. Огиз-Сельхозгиз, Москва.

8. *Вильямс В. Р.* 1937 г „Травопольная система земледелия и минеральная агрохимия". Журнал химиз. соц.—земл. № 10.

9. *Вильямс В. Р.* 1937 г. „Значение травопольного севооборота, как единственной системы земледелия социалистического сельскохозяйственного производства". Журнал соц. реконструкция сельск. хозяйства № 11—12.

10. *Гедройц К. К.* 1926 г. „К вопросу о почвенной структуре и ее сельскохозяйственном значении". Известия ГИОА, т. IV, № 3.

11. *Гедройц К. К.* 1933 г. „Положение вопроса о структуре почв". Труды советской секции Международной ассоциации почвоведов, т. 1, Сельхозгиз.

12. *Гельцер Ф. Ю.* 1936 г. „Значение физических свойств почвы в условиях орошаемого земледелия Средней Азии и факторы, их обусловливающие". Физика почв. Труды Советской Секции МАП. Огиз-Сельхозгиз, Москва.

13. *Гельцер Ф. Ю. Белякова Е. Чернышева З.* 1937. „Роль органического вещества в структурообразовании почв". Химиз. соц. земледелия № 7.

14. *Гельцер Ф. Ю. Павлов Г. И.* 1937 г. „За травопольные севообороты". Журнал химиз. соц. земледелия, № 10.

15. *Егоров М. А.* 1926 г. „Коэфициент дисперсности почвы при разных условиях". С. хоз. оп. дело № 2 (8).

16. *Иоффе Р. Я.* 1930 г. „К вопросу о восстановлении плодородия почвы культурой люцерны". Ташкент.

17. *Кочерин В. А.* 1930 г. „Климатический очерк Эриванской равнины. Материалы к общей схеме использования водных ресурсов Кура-Араксинского бассейна". Вып. I, Тифлис.

18. *Квасников В. В.* 1927 г. „Влияние структуры почвы на ее физические, химические и биологические свойства". Труды Самарского с/х. Ин-та.

19. *Квасников В. В.* 1928 г. „Структура почвы, как фактор урожайности культурных растений". Научно-агрономический журнал № 7—8.

20. *Кирсанов А. Т.* 1937 г. „Учет свойств почв при введении правильных севооборотов". Журнал химиз. соц. земл. № 10.

21. *Константинов П. Н.* 1932 г. „Люцерна и ее культура в Юго-восточных частях СССР". Самара.

22. *Константинов П. Н.* 1933 г. „Житняк". Самара.

23. *Константинов П. Н.* 1936 г. „Житняк и люцерна". Журнал соц. реконстр. сельского хозяйства № 4.

24. *Качинский Н. А.* 1931 г. „Структура почвы, как один из факторов ее урожайности". Сельхозгиз.

25. *Кудряшев В.* 1937 г. „К вопросу о введении правильных севооборотов на легких почвах". Журнал химиз. соц. земл. № 10.

26. *Меерсон Г. М.* 1937 г. „О хлопковых севооборотах в районах поливного земледелия". Журнал химиз. соц. земл. № 9.

27. *Мириманян Х. П.* 1929 г. „Почвы Эчмиадзинской опытной станции". Из. Гос. Университета, № 5, Эривань.

28. *Мириманян Х. П.* 1929 г. „К выяснению возможности улучшения физических свойств почв хлопковых районов Армении". Хлопковое дело, № 11, Ташкент.

29. *Мириманян Х. П.* 19 г. „Продолжительность последействия люцерны на хлопковых полях ССР. Армении".

30. *Некрасов П. А.* 1936 г. „Агрофизические методы оценки почвообрабатывающих машин и орудий". Физика почв. Труды сов. секции Междунар. ассоциации почвоведов. Огиз-Сельхозгиз.

31. *Павлов Г. И.* 1930 г. „Метод агрегатного анализа и агрегатный состав почвы". Труды Ак. Кавакской опытнооросительной станции, вып. 6, Ташкент.

32. *Павлов Г. И.* 1930 г. „Динамика строения пахотного горизонта в условиях орошаемого земледелия и факторы, ее обусловливающие". Труды Ак. Кавакской опытно оросительной станции, вып. 6, Ташкент.

33. *Петров Е. Г.* 1927 г. „К вопросу об изучении водопроницаемости почвы". Научно-агрономический журнал № 4.

34. *Саввинов Н. И.* 1931 г. „Структура почвы и ее прочность на целине, перелоге и старопахотных участках". Гос. Изд. с. хоз. и колхозн. кооп. литературы, Москва.

35. *Саввинов Н. И.* 1936 г. „Влияние многолетних трав и некоторых агротехнических приемов на прочность структуры почвы в разных зонах". Физика почв в СССР Труды сов. секции МАП. Огиз-Сельхозгиз, Москва.

36. *Сердюков В. В.* 1930—1931 г. „О некоторых специальных сорных растениях Закавказья". Труды по прикладной ботанике, генетике и селекции, т. XXV, вып. 4.

37. *Соболев Ф. С.* 1927 г. „Наблюдения над изменениями дисперсности почвы в полевых условиях при различной обработке". Научно-агрон. журнал № 2.

38. *Тюлин А. Ф.* 1928 г. „Вопросы структуры. Агрегатный анализ, как подсобный метод для оценки реальной структурности почвы". Агрохимич. отдел Пермской с. хоз. Оп. Станции, вып 2.

39. *Тюлин А. Ф.* 1929 г. „Вопросы почвенной структуры. Влияние набухания почвы на точность определения капиллярной и некапиллярной скважности методом насыщения почвы водой". Пермь.

40. *Тюлин А. Ф. и Скляр А. И.* 1933 г. „Влияние давления на образование и изменение агрегатов в почве". Физико-химия почв. Труды ВИУА, вып. 2.

41. *Тюлин А. Ф.* 1933 г. „Генезис почвенной структуры и методы ее определения". Физико-химия почв. Труды ВИУА, вып. 2.

42. *Тюлин А. Ф.* 1933 г. „Об условиях образования и методах определения почвенной структуры". Труды ВИУА. Физико-химия почв.

43. *Тюлин А. Ф., Бирюкова Е. В.* 1933 г. „Структура почвы и удобрения" Журнал Химиз. соц. земл. 2.

44. *Тюлин А. Ф.* 1936 г. „О методах качественного и количественного определения агрегатов в почве". Физика почв в ССР. Труды советской секции МАП. Москва, Огиз, Сельхозгиз.

45. *Фигуровский И. В.* 1930 г. „Краткий климатический очерк Кура-Араксинского бассейна". Вып. 1, Тифлис.

46. *Фотеев С.* 1937 г. „О введении правильных севооборотов в колхозах орошаемых районов". Соц. рек. с. хоз. № 8.

47. *Хананян С. Х.* 1936 г. „Культура люцерны в условиях орошения". Изд. Вс. Акад. с. х. наук им. В. И. Ленина. Москва—Ленинград.

48. *Чувиков В.* 1937 г. „О введении правильных севооборотов". Журнал соц. реконстр. с. хоз-ва № 9—10.

Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ
ընդհանուր երկրագործության ամբիոն
Երևան

Армянский с.-х. институт
кафедра общего земледелия
Ереван

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 г. Сборник научных трудов

Գ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱԽՈՐԴՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄԸ

Պարտիայի և կառավարության բազմաթիվ որոշումները ցանքաշրջանառության կիրառման մասին հրամայողական պահանջ են դնում մեր առաջ՝ բազմակողմանիորեն ուսումնասիրել ցանքաշրջանառության կիրառման հետ կապված մի շարք ագրոտեխնիկական և կազմակերպչական խնդիրներ։

Հիմք ունենալով այդ որոշումները և Սովետական ականավոր գիտնական ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքը խոտադաշտային ցանքաշրջանառության մասին՝ գտանք անհրաժեշտ ՀՍՍՌ Սևանի ավազանի լեռնային շրջանների պայմաններում ուսումնասիրել նախորդների դերը հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման մեջ։ Աշխատել ենք պարզել նախ բազմամյա խոտերի հարաբերական արժեքը ցանքաշրջանառության մեջ տարբեր հողային պայմաններում։ Ուսումնասիրությունը կատարվել է Սևանի ավազանում տարածված կորնգանի և առվույտի վրա։ Կորնգանից և առվույտից բացի, ուսումնասիրվել է նաև կարտոֆիլի, վիկի, կտավհատի, որպես նախորդների թողած ազդեցությունը։ Փորձերը կենտրոնացված են եղել Նոր-Բայազետի շրջանի Սարուխան գյուղի՝ Բերիայի անվան կոլխոզում։ Ուսումնասիրությունը կատարվել է 1936—1937 թվերին կոլխոզի ցանքաշրջանառության դաշտերում։ Այդ ցանքաշրջանառությունը ընդունվել էր 1935 թվին և ուներ կուլտուրաների հետևյալ հաջորդականությունը. 1. Ցել, 2. Աշնանացան ցորեն, 3. Գարնանացան հացահատիկ՝ բազմամյա խոտի ենթացանքով, 4. Բազմամյա խոտ, 5. Գարնանացան հացահատիկ, 6. Շարքահերկ բույսեր և 7. Գարնանացան հացահատիկ։

1. ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սարուխանի օդի տարեկան միջին ջերմությունը կազմում է մոտ 5—6° C, իսկ ջերմության գումարը ամբողջ վեգետացիայի ընթացքում (մայիսից—սեպտեմբեր ներառյալ) տատանվում է 1700°—2100°-ի սահմաններում: Մաքսիմում ջերմությունը տատանվում է 24,7°—32,3° սահմաններում: Ջերմության մինիմումը տատանվում է—22,3°-ի և—32,3°-ի միջև: Պարզ է, որ այդ թվերը տարբեր կլինեն շրջանի բարձրադիր և ցածրադիր մասերում: Գարնանային վերջին ցրտահարությունը տեղի է ունենում մեծ մասամբ մայիսի I տասնօրյակում, բայց պատահում է նաև II տասնօրյակում: Աշնանային առաջին ցրտերը լինում են սեպտեմբերի վերջին, կամ հոկտեմբերի I տասնօրյակում: Սառնամանիքային օրերի թիվը տատանվում է 170—200-ի միջև:

Քամիների կրկնողության տեսակետից խոշոր տարբերություն կա շրջանի ծովափնյա և մյուս մասերի միջև: Այն ժամանակ, երբ Նորադուզում (ծովափ) խաղաղ օրերի թիվը ամսվա ընթացքում երեքից չի անցնում, Բայազետում՝ ծովափից 4 կիլոմետր հեռու այդ թիվը տատանվում է 1—3-ից մինչև 5—9 օրերի սահմաններում: Քամիները այստեղ մեծ մասամբ տաք և չոր են և հաճախ երաշտի պատճառ են դառնում: Կարևոր է նաև հիշատակել, որ հյուսիսային քամիները առանձնապես հաճախ լինում են հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, որ նույնպես բացասաբար է անդրադառնում հացահատիկների, կարտոֆիլի և մի շարք այլ կուլտուրաների զարգացման վրա:

Մթնոլորտային տեղումները Նորադուզում կազմում են 570 մմ, Նոր-Բայազետում՝ 466 մմ, Սարուխանում՝ 460-ից 500 մմ, միջինը՝ 411 մմ: Ամենից շատ տեղումներ լինում են ապրիլ, մայիս և հունիս ամիսներին:

Ձյան շերտը բարակ է, մինչդեռ այն չափազանց կարևոր է աշնանացան հացահատիկների պահպանման և հողում խոնավություն կուտակելու տեսակետից: Սարուխանում ձյան ծածկոցը տափաստանային գոտու հարթ տեղերում հասնում է 40—50 սմ, իսկ դրանից բարձր տեղերում՝ 50-ից 70 սմ հաստության: Սառնամանիքային օրերի թիվն այստեղ տատանվում է 108-ի և 200-ի միջև, իսկ միջինը հավասար է 181-ի:

Անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի տվյալներ 1935 և 1936 թվերի օդերևութաբանական պայմանների մասին, որովհետև 1936 թվի պայմանները խիստ տարբերվել են վերը բերած բազմաթիվ տարիների միջին տվյալներից, իսկ այդ հանգամանքը անշուշտ զգալի ազդեցություն է թողել փորձերի արդյունքների վրա:

Վեգետացիայի շրջանի ջերմության գումարը 1936 թ., սկսած մայիսից մինչև օգոստոս ամիսը ներառյալ, հավասար է եղել 1850° C-ի: Միջին ջերմաստիճանը ըստ առանձին ամիսների հետևյալ պատկերն է ունեցել՝

Ապրիլ	5,4°	Հուլիս	15,6°
Մայիս	8,4°	Օգոստոս	14,8°
Հունիս	12,0°	Սեպտեմբեր	9,9°

Գարնանային վերջին ցրտահարությունը տեղի է ունեցել ապրիլի 28-ին, իսկ աշնանային առաջին ցրտահարությունը՝ սեպտեմբերի 18-ին:

Գարնանային վերջին ցրտահարության հետևանքով՝ ծովի մակերևույթից 2100 մետր և նրանից բարձր մասերում գտնվող աշնանացան և վաղ ցանված գարնանացան հացահատիկների վերերկրյա մասերը մեծ մասամբ ցրտահարվեցին: Դրա հետևանքով բույսերի աճը զգալի չափով ձգձգվեց: Ինչպես այս ցրտահարության, նույնպես և 1936 թ. մթնոլորտային տեղումների առատության հետևանքով մոլախոտերը (հատկապես պոչուկը) ուժեղ զարգացան և ճնշեցին կուլտուրական բույսերին, որի հետևանքով ստացվեց սպասվածից ցածր բերք, իսկ աշնանային առաջին ցրտահարությունից (25/9) մեծ չափով տուժեցին հատկապես կարտոֆիլի ցանքերը:

1936 թվին մթնոլորտային տեղումներն ըստ առանձին ամիսների հետևյալ պատկերն են ունեցել՝

	I տասնօր.	II տասնօր.	III տասնօր.
1. Ապրիլ	15,6 մմ.	6,0 մմ.	11.5 մմ.
2. Մայիս	80,6 «	71,1 «	26,3 «
3. Հունիս	96,1 «	33,8 «	21,8 «
4. Հուլիս	19,0 «	29,9 «	15,6 «
5. Օգոստոս	2,3 «	— «	— «
6. Սեպտեմբեր	— «	24,0 «	14,8 «

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների եղել է՝

Ապրիլին	69,0%	Հուլիսին	79,0%
Մայիսին	76,0%	Օգոստոսին	72,0%
Հունիսին	76,0%	Սեպտեմբերին	69,0%

Տաք և ուժեղ քամիներից 1936 թ. հացահատիկները չեն տուժել, բացառությամբ աշորայի: Աշորան զգալի չափով տուժեց տոթի հետևանքով, որովհետև հատիկի կազմակերպման շրջանում երկարատև անձրևներին հաջորդեց ջերմաստիճանի ուժեղ բարձրացում, որի հետևանքով հատիկները լավ չլցվեցին:

2. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բերիայի անվան կոլխոզի հողերն ունեն հետևյալ պատկերը.

Քյավառչայի հովտում գտնվում են ալյուվյալ հողեր իրենց մի քանի փոփոխակներով: Քյուզաչիից մինչև Սարուխան և Սարուխանից դեպի Կարմիր գյուղերի միջև ընկած հողերը, որոնք ընդգրկում են «Ղռաճներ», «Ղոբուներ» և «Պալիտակ» կոչվող սառնանները, ալյուվիալ, ավազախառը շագանակագույն հողեր են: Սարուխանից դեպի Բադիկյան, «Սևահողեր», «Մեչի ճանապարհի վերև», «Ջայլաղներ», «Մոլիզ» կոչված սառնաններում գտնվում են սև գույնի, հումուսային, խոնավ, մարգագետնային, տիղմով հարուստ հողեր: Յուրաքանչյուր տարի ամբողջ հովիտը ողողվում է սելավների ջրով, առանձնապես գարնանը:

Դրանցից վեր՝ բավականին լայն շերտով ընկած են սևահողեր՝ արտահայտված կարբոնատային հորիզոնով: Այս տիպի հողերը գտնվում են գյուղից 2150—2300 մ բարձրության վրա, սկսած «Սարի կառներ» կոչված

սառնայից մինչև «Գելակերներ», «Հոլկներ» կոչվող ամենաբարձրադիր սառ-նաների հողերը։ Դրանից վեր՝ մինչև 2400 մ բարձրություն գտնվում են տի-պիկ սևահողեր, իսկ էլ ավելի վեր՝ ճիմակալած լեռնամարգագետնայինսուբ ալպիական հողեր։

Այսպիսով Սարուխանում կան մեծ մասսիվներով (100—200 հեկտար) սա-հողային այնպիսի տիպեր, որոնք բնորոշ են Սևանի ավազանի համար, ուս-տի փորձերի արդյունքներից ստացված եզրակացությունները հնարավոր է տարածել նաև ավազանի մյուս շրջանների վրա։

Մեթոդիկան

Ուսումնասիրությունները կատարվել են ներքին և միջին գոտիներում, որովհետև վերին գոտում կորնգանի և առվույտի ցանքեր չկային։ Անալիզների համար հողի նմուշները վերցվել են բույսերի թփակալման, հասկակալման և հասունացման ֆազերում։ Ֆենոլոգիական դիտողությունները կատարվել են ամբողջ վեգետացիայի ընթացքում։

Բույսերի ուսումնասիրության հետ միասին ուսումնասիրվել են նաև մո-լախոտները։ Ուսումնասիրվել են մոլախոտերի տեսակները, ընդհանուր քա-նակը մեկ քառակուսի մետրում և ընդհանուր քաշը մեկ հեկտար տարածու-թյան վրա՝ ցենտներներով։ Բերքահավաքից մի քանի օր առաջ վերցվել են մեծ քանակի փնջեր՝ անալիզի համար։

Ուսումնասիրվող դաշտերում ցանված է եղել Սիսիանի կորնգան և Ապա-րանի առվույտի պոպուլյացիա։ Բոլոր դաշտերում ցանվել է գարնանացան ցո-րենի «Կարմրահատ» սորտը։ Այդ սորտում գերակշռում է փափուկ ցորենին պատկանող erythrospermum տարատեսակը։

Գարնանացան «Ղըլըչի» գարու մեջ գերիշխում է nutans տարատեսակը, որը կազմում է համարյա 100 %, չնչին քանակությամբ պատահում է նաև medicum տարատեսակը։

Բոլոր անալիզները կատարվել են Գյուղատնտեսական Ինստիտուտի ընդ-հանուր երկրագործության ամբիոնի լաբորատորիայում։

Առանձին աշխատանքների մեթոդիկան և տեխնիկան բերում ենք փոր-ձերի արդյունքները նկարագրելիս։

Նախորդների ուսումնասիրության արդյունքները 1936 թվին

Նախորդների ազդեցության ուսումնասիրությունը կատարվել է Սա-րուխան գյուղի կոլխոզի «Սարի կտորներ» կոչված սառնայում, տի-պիկ սևահողերում, որոնք ունեն հզոր վարելաշերտ (45—60 սմ), լավ ար-տահայտված ստրուկտուրա, ջրաթափանցիկ են, մոլախոտերով վարակված են միջին չափով, վեգետացիայի ընթացքում ջրվում են 2—3 անգամ սելավի ջրերով, վերջին ջուրը տրվում է հուլիսի II դեկադում։ Սառնայի հողերը գտնվում են ծովի մակերևույթից 2100—2250 մետր բարձրության վրա։

Որպես նախորդ ուսումնասիրվել են կորնգանը և առվույտը, որոնց մշակման տևողությունը նույն դաշտում եղել է 2—3 տարի։ Խոտադաշտի վարից հետո ուսումնասիրվել է ճմաշերտի ազդեցությունը և հետազդեցությունը գարնա-նացան հացահատիկների բերքատվության վրա։ Բացի բազմամյա խոտերից, որպես նախորդներ ուսումնասիրվել են նաև վիկը, կտավհատը և անընդհատ մշակվող հացահատիկները։ Բոլոր նախորդներից հետո ցանվել է գարնանա-ցան ցորեն և գարնանացան գարի։

Բոլոր դաշտերում կատարվել են հետևյալ ագրոձեռնարկումները՝ աշ-նանը կատարվել է ցրտահերկ 20—22 սմ խորությամբ, վաղ գարնանը ցա-քանվել է, ցանքի նախօրյակին կատարվել է կրկնավար և մայիսի 5-ին՝ ցանք շարքացանով։ Գարնանացան ցորենի ցանքի նորման եղել է 170 կգ մեկ հեկտարին, իսկ գարնանացան գարունը՝ 180 կգ։ Հետագա մշա-կությունը բոլոր դաշտերում նույնն է, այն է՝ ցանքից հետո հողը տափանվել է, ջրվել է սելավի ջրով 2 անգամ, քաղհանվել է մեկ անգամ։ Բերքահավա-քը կատարվել է գերանդիով սեպտեմբերի 7—8-ին։

Աշխատությանս մեջ բերած բերքատվության տվյալները փաստացի բեր-քի տվյալներ են, որոնք լրացվել են քառակուսի մետրերից վերցրած փնջերի անալիզների տվյալներով։

Կորնգանի, որպես նախորդի, ազդեցությունը մոլախոտերի վրա

Նախորդների ազդեցությունը մոլախոտերի վրա ուսումնասիրելու նպա-տակով՝ հացահատիկների բերքահավաքից մի քանի օր առաջ վերցվել են քառ. մետրերից փնջեր, որոնց անալիզը կատարվել է լաբորատորիայում (աղյուսակ № 1)։

Կորնգանի, որպես նախորդի ազդեցությունը հացահատիկների բերքի վրա

Նախորդների ազդեցությունը՝ բույսերի զարգացման, բերքի որակի և քանակի վրա պարզելու նպատակով վեգետացիայի ընթացքում կատարվել են մի շարք դիտողություններ, իսկ բերքահավաքից հետո կատարվել են լա-բորատոր անալիզներ։ Որոշվել է բույսերի բարձրությունը, թփակալումը, հա-տիկների բացարձակ կշիռը և հիվանդություններով վարակված լինելու չա-փը (Աղյուսակ № 2)։

Այս աղյուսակների արդյունքները ցույց են տալիս, որ կորնգանից հե-տո առաջին տարին մեկ հեկտար տարածությունից ստացվել է հատիկի բերք 20,5 ցետներ գարնանացան ցորեն և 20,35 ցենտներ գարնանացան գարի։ Կորնգանից հետո, երկրորդ տարին ստացվել է 14,47 ցենտներ, իսկ անընդհատ հացահատիկի դեպքում 4,4 ցենտներ գարնանացան ցորենի հա-տիկի բերք։

Կորնգանից հետո հացահատիկի դաշտը առաջին տարին համարյա թե չի վարակվել ժանգով և մրիկով, մինչդեռ մյուս դաշտերը տվել են վարակվածու-թյան բարձր տոկոս։

Երկրագործության չարիք հանդիսացող մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից կորնգանը լավագույն նախորդներից մեկն է։ Կորնգանի վարից հետո հացահատիկների ցանքերում նրանց մշակման առաջին և երկրորդ տա-

Աղյուսակ 1

Նախորդների ազդեցությունը և հետազդեցությունը մոլախոտերի վրա (1936)

№ №	Մոլախոտերի տեսակները	1933—35 թ. կորնգան, 1936 թ. գարն. ցորեն	1933—35 թ. կորնգան, 1936 թ. գարնան գարի	1931—34 թ. կորնգան, 1934 թ. գարն. գարի, 1935—36 թ. գարն. ցորեն	1932—35 թ. հացահատիկա-կորնգանային խառնուրդ, 1936 թ. գարն. ցորեն	1932—33 թ. կորնգան, 1935 թ. գարն. գարի, 1936 թ. գարն. ցորեն
1	Avena fatua և Av. Ludoviciana	—	0,35	15,28	8,8	13,28
2	Cirsium incanum	—	3,25	1,57	0,33	—
3	Vicia sativa	0,14	7,0	7,0	10,0	8,57
4	Convolvulus arvensis	6,7	5,75	4,43	10,66	2,57
5	Lolium persicum	17,4	3,75	31,45	37,1	2,0
6	Silene conoidea	3,57	0,75	2,43	10,3	5,71
7	Gypsophila elegans	0,28	1,75	78,5	22,6	4,14
8	Medicago sativa	—	0,75	13,71	38,3	5,85
9	Brassica napus	26,85	8,0	16,28	1,33	4,85
10	Centaurea picris	0,57	—	—	—	—
11	Equisetum sp.	1,0	—	—	6,83	—
12	Polygonum aviculare	—	0,5	0,29	4,83	3,71
13	Lathyrus aphaca	—	2,5	9,2	—	1 14
14	Cyn dactylon	—	5,76	—	—	—
15	Polygonum Convolvulu	—	0,5	—	—	1,71
16	Lallemantia sp.	—	—	3,41	—	0,86
17	Agropyrum repens	—	2,25	—	—	—
18	Myosotis sp.	—	2,50	—	9,3	—
19	Cephalaria sp.	—	2,25	—	0,3	—
20	Caucalis daucoid	—	—	4,14	5,5	5,71
21	Veronica sp.	—	—	2,14	15,5	2,85
22	Այլ մոլախոտեր	2,1	5,75	5,14	91,5	13,4
23	Ընդամենը մոլախ. քանակը 1 $м^2$	58,61	53,35	195,06	286,28	76,37
24	Մոլախ. կշիռը (օդային չոր) g/հ.	1,2	1,8	5,7	6,2	2,2

Աղյուսակ 2

Նախորդների ազդեցությունը բերքի քանակի և որակի վրա (1936)

Նախորդներ և հետազոտվող ցանքը	Բույսերի միջին բարձրությունը սմ-ով	Թփակալումը	Բերք g/հ: Ընդամենը	Որից: Ծղոտ	Որից: Հատիկ	1000 հատիկի կշիռը գ-ով	Վարակվածությունը %%-ով: Ժանգ	Վարակվածությունը %%-ով: Մրիկ
33—35 թ. կորնգան 36 թ. գարնան ցորեն	92,42	1,7	56,9	36,4	20,2	—	—	0,28
33—35 թ. կորնգան 36 թ. գարնան գարի	77,25	1,6	45,47	25,12	20,35	51,5	—	—
32—34 թ. կորնգան, 35 թ. գարնան գարի, 36 թ. գարն. ցորեն	88,57	1,5	45,7	31,23	14,47	27,95	Ուժեղ	1,5
31—33 թ. կորնգան, 34 թ. գարնան գարի, 35—36 թ. գարն. ցորեն	74,0	1,5	21,9	13,66	7,61	25,05	24,42	1,5
32—35 հացահատիկ, 36 թ. գարն. ցորեն.	71,0	1,5	14,23	9,83	4,4	—	17,5	1,33

րին մոլախոտերը ինչպես ընդհանուր քանակի, նույնպես քաշի տեսակետից փոքր տոկոս են կազմում, մինչդեռ մյուս դաշտերում նրանք մեծ քանակությամբ են տարածված։ Մոլախոտերը պակաս են նաև հացահատիկների մշակման երկրորդ և երրորդ տարիներին։ Այսպես, կորնգանից հետո հացահատիկների ցանքերի մեկ քառ. մ եղել է 53—76 մոլախոտ (1,2—2,2 g/հ), իսկ հացահատիկների մոնոկուլտուրայի դեպքում 286 մոլախոտ (6,2 g/հ): Բացի այդ, կորնգանից հետո հացահատիկների ցանքերում մեծ մասամբ այնպիսի մոլախոտեր են լինում, որոնք ցանքերին մեծ վնաս պատճառել չեն կարող, իսկ հացահատիկի երկարատև մշակման դեպքում գերակշռում է պոչուկը, որը ցանքերին մեծ վնաս է պատճառում։

Առվույտի, որպես նախորդի ազդեցությունը մոլախոտերի վրա

Ուսումնասիրությունը կատարվել է նույն հողամասում, որտեղ ուսումնասիրվել է չորս դաշտ, յուրաքանչյուրը 0,65—0,75 հեկտար տարածությամբ։

Փորձահողամասերը ունեցել են հետևյալ նախորդները.

Առաջին դաշտում 1932—1934 թ. թ. եղել է առվույտ, 1935 թ.՝ գարնանացան գարի, 1936 թ.՝ գարնանացան ցորեն։ Երկրորդ դաշտը 1931—1933

թվականներին զբաղված է եղել առվույտով, 1934 և 1935 թ. թ. այդտեղ ցանվել է գարնանացան գարի, 1936 թվին՝ գարնանացան ցորեն։ Երրորդ դաշտում 1933 թվին ցանվել է կարտոֆիլ, 1934 թվին՝ աշնանացան Ուկրաինկա ցորեն, 1935 թվին՝ վիկ, 1936 թվին՝ գարնանացան ցորեն։ Չորրորդ դաշտում 1933 թվին եղել է գյուղացիական ցել, 1934 թվին գարնանացան ցորեն, 1935 թվին՝ կտավհատ, 1936 թվին՝ գարնանացան ցորեն։

Ցրտահերկը, գարնան նախացանքային աշխատանքները, ցանքի խնամքը և բերքահավաքը կատարվել են այնպես, ինչպես կորնգանի ուսումնասիրության վարիանտում։

Ստորև բերում ենք առվույտի թողած ազդեցությունը մոլախոտերի, հիվանդությունների, բերքի որակի ու քանակի վրա (Աղյուսակներ №№ 3 և 4)։

№№ 3 և 4 աղյուսակների տվյալները ցույց են տալիս հետևյալը.

Կորնգանի վարից հետո առաջին տարին ստացվել է 20,2 ցենտներ գարնանացան ցորենի հատիկ և 36,4 ցենտներ ծղոտ, երկրորդ տարին՝ 14,47 ցենտներ հատիկ և 31,23 ցենտներ ծղոտ, մինչդեռ առվույտի դաշտում ամենաբարձր բերքը եղել է 10,59 ցենտներ հատիկ և 24,15 ցենտներ ծղոտ։

Հացահատիկների բարձր բերքատվությունն ապահովելուց բացի, Ն. Բայազետի պայմաններում՝ կորնգանն ավելի լավ է պայքարում մոլախոտերի դեմ, քան առվույտը։ Կորնգանից հետո հացահատիկների ցանքերում օդային չորության հասցրած մոլախոտերի կշիռը եղել է մեկ հեկտարում 1,2—2,2 ցենտներ, իսկ առվույտից հետո՝ 3,7—6,4 ցենտներ։

Առվույտից հետո մոլախոտերը գերակշռել են նաև ընդհանուր քանակի տեսակետից։

Մյուս նախորդներից առաջնությունը պատկանում է կտավատին, ապա վիկին, քանի որ կտավատից հետո ստացվել է մեկ հեկտարից 11,0 ցենտներ հատիկ և 20,44 ցենտներ ծղոտ, իսկ վիկից հետո 7,9 ցենտներ հատիկ և 29,4 ցենտներ ծղոտ։ Բացի ցածր բերքից, վիկից հետո դաշտը ուժեղ վարակված է եղել նաև ժանգով և մրիկով։ Այս դրությունն չի կարելի ամբողջապես վերագրել վիկին, անշուշտ այստեղ վճռական դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ վիկից հետո դաշտի հիմնական վարը կատարվել է ցանքի նախօրյակին, իսկ կտավատից հետո արված է եղել ցրտահերկ։ Բացի դրանից վիկից առաջ 1934 թ. այդ դաշտը զբաղեցրած է եղել գարնանացան ցորենով, որի պատճառով դաշտն ուժեղ վարակված է եղել մոլախոտերով, իսկ կտավատի նախորդը եղել է աշնանացան «Ուկրաինկա» ցորեն, որը համեմատաբար լավ է պայքարում մոլախոտերի դեմ։

Նախորդների ուսումնասիրության արդյունքները 1937 թվին

1937 թվին ուսումնասիրությունները կատարվել են «Դֆտիկներ» կոչվող սառնայի հողերում, որոնք նույնպես տիպիկ սևահողեր են, սնդանյութերով հարուստ, ունեն հզոր վարելաշերտ, գտնվում են ծովի մակերևույթից 2050—2200 մ բարձրության վրա, կիսաչորային են։

1937 թ. ուսումնասիրությունները կատարվել են 6 դաշտի վրա, ըստ որում որպես նախորդ վերցվել են մեկ, երկու և երեք տարի առաջ վարված

Աղյուսակ 3

Առվույտի ազդեցությունը և հետազդեցությունը մոլախոտերի վրա (1936)

№№	Մոլախոտերի տեսակները	Դաշտի նախորդները և հետազոտվող ցանքը			
		1932—34 թ. առվ. 1935 թ. գ. գարի 1936 թ. գ. ցորեն	1931—33 թ. առվ. 1934—35 թ. գարն. գարի 1936 թ. գ. ցորեն	1933 թ. կարտոֆիլ 1934 թ. աշնանա- ցան ցորեն 1935 թ. վիկ 1936 թ. գ. ցորեն	1933 թ. ցել 1934 թ. աշնանա- ցան ցորեն 1935 թ. կտավատ 1936 թ. գ. ցորեն
1	*Avena fatua* և *Av. Ludoviciana*	38,4	58,8	44,21	15,43
2	*Convolvulus arvensis*	3.2	0,85	2,0	6,86
3	*Vicia sativa*	8,8	5,57	3,5	2,14
4	*Silene conoidea*	1,8	0,14	2.0	46,29
5	*Gypsophila elegans*	17,8	20,14	21,0	2,28
6	*Lolium persicum*	2.2	15,14	14,5	1,14
7	*Polygonum aviculare*	4,0	0,57	—	0,14
8	*Polygonum sp.*	0,8	—	—	3,14
9	*Medicago sativa*	2,2	4,71	2,25	2,57
10	*Lathyrus aphaca*	0,6	4,0	2,0	20,71
11	*Brassica napus*	2,2	11,43	19,75	1,14
12	*Veronica sp.*	1,0	0,14	2,0	0,71
13	*Cirsium incanum*	0,4	—	—	1,0
14	*Lallemantia iberica*	—	—	—	0,28
15	*Salvia verticillata*	—	—	—	0,48
16	*Myosotis sp.*	0,8	1,29	—	—
17	*Chenopodium album*	0,4	—	—	—
18	*Caucalis daucoides*	7,0	4,14	10,75	—
19	*Polygonum convolvulus*	—	1,57	—	—
20	Այլ մոլախոտեր	1,2	2,14	1,0	1,59
21	Ընդամենը մոլախ. քանակը 1 մ²	92,8	130,62	124,96	105,9
22	Մոլախ. կշիռը օդային չորության վիճակում (ց/հ.)	2,4	3,7	5,5	2,5

Աղյուսակ 4

Առվույտի ազդեցությունը և հետազդեցությունը բերքի վրա (1936)

Դաշտի №	Նախորդները և հետազոտվող ցանքը	Նորմալ զարգաց. բույսերի քանակը %	Թփակալումը	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Ընդամենը	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Ծղոտ	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Հատիկ	1000 հատիկի կշիռը գր.	Վարակվածությունը %% ով: Ժանգով	Վարակվածությունը %% ով: Մրիկով
1	1932—34 թ. թ. առվույտ 35 թ. գարն. գարի 36 թ. գարն. ցորեն	81,4	1,6	29,52	18,98	10,54	27,4	18,2	1,4
2	1931—33 թ. թ. առվույտ 34—35 թ. թ. գարն. գարի. 36 թ. գարն. ցորեն	84,3	1,3	34,74	24,15	10,59	27,5	15,28	1,86
3	1933 թ. կարտոֆիլ 34 թ. աշն. ցորեն 1935 թ. վիկ 36 թ. գարն. ցորեն	80,9	1,5	22,57	14,67	7,9	29,1	Ուժեղ	1,75
4	1933 թ, ցել 1934 թ. գարն. ցորեն 1935 թ. կտավհատ 1936 թ. գարն. ցորեն.	80,8	1,4	32,04	20,44	11,6	28,50	3,85	1,0

կորնգան և առվույտ, ինչպես նաև կարտոֆիլ և անընդհատ հացահատիկներ։
Յուրքանչյուր դաշտ ունեցել է 0,45—0,75 հեկտար տարածություն, բոլոր
դաշտերում էլ ցանվել են գարնանացան հացահատիկներ՝ ցորեն և գարի։

Բոլոր դաշտերում կատարվել է ցրտավար 22—25 սմ խորությամբ, վաղ
գարնանը փոցխվել է մեկ հետք, ապրիլի 10-ին և 11-ին կատարվել է կրրկ-
նահերկ 13—15 սմ խորությամբ, իսկ 15-ին և 16-ին՝ շարքացանով ցանք։

Գարնանացան ցորենը ցանվել է 170 կգ/հ նորմայով, իսկ գարնանացան
գարին՝ 180 կգ/հ: Ցանքից հետո կատարվել է 1—2 անգամ քաղհան մինչև
բույսերի խողովակակալելը։ Ցանքերը ջրվել են մեկ անգամ՝ հուլիսի 18-ին,
սելավի ջրով։ Ըստ ֆենոլոգիական դիտողությունների՝ բույսերը ծլել են ապ-
րիլի 28,ին, թփակալել՝ հունիսի 4-ին, հասկակալել՝ հունիսի 30-ին և հա-
սունացել՝ օգոստոսի 27-ին։ Բերքահավաքը կատարվել է սեպտեմբերի 3-ին
և 5-ին. կալսումը կատարվել է կալսիչ մեքենայով։

Ստորև բերում ենք 1937 թ. փորձերից ստացված արդյունքները ըստ
դաշտերի՝ նշելով տարբեր նախորդների ազդեցությունը բերքատվության
ցուցանիշների, մոլախոտերի և հիվանդությունների վրա (աղյուսակներ
№ № 5 և 6)։

1937 թվի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս հետևյալը.
Կորնգանը վարելուց հետո հողամասը օգտագործման առաջին տարին

Աղյուսակ 5

Նախորդների ազդեցությունը բույսերի զարգացման ցուցանիշների, բերքի և հիվանդություններով վարակվածության աստիճանի վրա

Դաշտի №	Նախորդները	Նորմալ զարգացած բույսերի քանակը %	Թփակալումը	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Ընդամենը	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Ծղոտ	Բերքը մեկ հեկտարից ցենտներով: Հատիկ	1000 հատիկի կշիռը գրամով	Վարակվածությունը %%-ով: Ժանգով	Վարակվածությունը %%-ով: Մրիկով
1	1934—36 թ. թ. կորնգան 1937 թ. գարնանացան ցորեն	84,5	1,8	61,8	33,5	28,3	53,7	Թույլ	0,3
2	1934—36 թ. կորնգան 1937 թ. գարնանացան գարի	79,8	1,7	57,4	31,2	26,2	53,6	Թույլ	—
3	1933—1935 թ. կորնգան 1936 թ. գարնանացան ցորեն 1937 թ. գարնանացան գարի	75,3	1,6	49,2	26,1	23,1	44,3	Միջակ	—
4	1932—34 թ. կորնգան 1935 թ. գարնանացան ցորեն 1936 թ. գարնանացան գարի 1937 թ. գարնանացան ցորեն	74,2	1,7	42,2	27,5	14,7	34,1	Միջակ	1,5
5	1932—1935 թ. առվույտ 1935 թ. գարնանացան գարի 1936 թ. գարնանացան ցորեն 1937 թ. գարնանացան ցորեն	73,4	1,6	28,9	18,4	10,5	29,9	Ուժեղ	—
6	1935 թ. գարնանացան հացահատիկ 1936 թ. կարտոֆիլ 1937 թ. գարնանացան ցորեն	71,7	1,4	29,5	17,9	11,6	30,4	Միջակ	1,7

Աղյուսակ 6

Նախորդների ազդեցությունը մոլախոտերի վրա (1937)

№ №	Մոլախոտերի տեսակները	1934—36 թ. կորնգան, 1937 թ. գարն. ցորեն	1934—36 թ. կորնգան, 1937 թ. գարն. գարի	1933—35 թ. կորնգան, 1936 թ. գարն. ցորեն, 1937 թ. գարն. գարի	1932—34 թ. կորնգան, 1935 թ. գարն. ցորեն, 1936 թ. գարն. գարի, 1937 թ. գարն. ցորեն	1932—34 թ. առվույտ, 1935 թ. գարն. գարի, 1936 թ. գարն. ցորեն, 1937 թ. գարն. ցորեն	1935 թ. գարն. հացահատ., 1936 թ. կարտոֆիլ, 1937 թ. գարն. ցորեն
1	*Avena fatua* և *Av. Ludoviciana*	—	0,85	4,12	11,17	29,8	21,67
2	*Convolvulus arvensis*	4,11	5,29	6,02	9,17	14,34	11,45
3	*Vicia sativa*	0,13	1,18	4,9	6,14	7,5	9,3
4	*Silene conoidea*	3,97	4,32	7,2	—	1,02	9,93
5	*Gypsophila elegans*	—	—	2,0	2,21	4,05	3,39
6	*Lolium persicum*	1,17	4,11	7,13	9,87	—	10,21
7	*Polygonum aviculare*	—	—	2,1	3,1	3,19	—
8	*Polygonum hydropiper*	—	—	3,47	—	3,98	1,4
9	*Medicago sativa*	3,1	—	—	6,3	—	—
10	*Lathyrus aphaca*	—	2,5	—	0,32	3,17	—
11	*Brassica napus*	17,3	18,0	11,3	27,3	—	18,15
12	*Veronica sp.*	—	—	—	2,1	4,3	—
13	*Cirsium incanum*	1,7	2,55	4,41	10,37	11,3	6,8
14	*Lallemantia sp.*	—	—	3,21	2,96	5,37	7,12
15	*Salvia sp.*	—	—	0,57	—	3,21	2,97
16	*Myosotis sp.*	0,47	1,19	3,10	7,27	10,02	9,16
17	*Chenopodium album*	—	2,31	5,3	8,93	6,23	—
18	*Polygonum convolvulus*	3,2	6,29	9,37	10,32	11,19	5,17
19	*Caucalis daucoides*	—	—	0,94	3,07	5,12	—
20	Այլ մոլախոտներ	10,2	11,3	16,03	20,3	22,3	19,01
21	Ընդամենը մոլախ. քանակը 1 մ²	45,35	59,89	91,17	140,85	146,09	135,76
22	Մոլախ. կշիռը օդային չորության վիճակում (գ/մ²)	0,2	1,03	1,65	1,97	2,13	2,11

ապահովել է 28,3 ց/հ գարնանացան ցորենի և 26,2 ց/հ գարնանացան գարու հատիկի բերք։ Օգտագործման երկրորդ տարին ստացվել է 23,1 ց/հ գարնանացան գարու, իսկ երրորդ տարին 14,7 ց/հ գարնանացան ցորենի հատիկի բերք։ Մինչդեռ առվույտից հետո դաշտը օգտագործման երրորդ տարին ապահովել է 10,5 ց/հ գարնանացան ցորենի բերք։ Անգամ կարտոֆիլը, որպես գարնանացան ցորենի նախորդ, ավելի մեծ բերք է ապահովել, քան առվույտի դաշտը օգտագործման երրորդ տարին, տալով յուրաքանչյուր հեկտարից 11,6 ց/հ գարնանացան ցորենի բերք։

Բարձր է կորնգանի դաշտի թողած ազդեցությունը նաև բույսերի բարձրության (կորնգանից հետո դաշտում կուլտ. բույսերի միջին բարձրությունը եղել է 79,8 սմ, առվույտից հետո՝ 73,4 սմ) և թփակալման էներգիայի (համապատասխան 1,7 և 1,6) վրա։ 1000 հատիկի քաշը կորնգանից հետո եղել է 34,1—53,7 գր, առվույտից հետո՝ 29,9 գր։

Ուշադրավ է նաև այն հանգամանքը, որ կորնգանից հետո գարնանացան ցորենը չի տուժել, կամ չնչին չափով է տուժել ժանգից և մրիկից, մինչդեռ առվույտից հետո հացահատիկի ցանքերը վարակված են եղել ուժեղ, կարտոֆիլից հետո վարակվածությունը միջակ աստիճանի է եղել։

Բերքատվության ցուցանիշներից բացի, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, կորնգանը լավ է պայքարում նաև մոլախոտերի դեմ։ Օդային չորության հասցրած մոլախոտերի կշիռը կորնգանից հետո հողի օգտագործմանը առաջին տարին եղել է 0,2 ցենտներ, երկրորդ տարին՝ 1,1 ցենտներ, երրորդ տարին՝ 1,97 ցենտներ։ Առվույտից հետո հողի շահագործման երրորդ տարին այդ կշիռը եղել է 2,13 ցենտներ, իսկ կարտոֆիլից հետո՝ 2,11 ցենտներ։ Համանման դրություն գոյություն ունի նաև մոլախոտերի ընդհանուր քանակի տեսակետից։

Եզրակացություն

Նոր-Բայազետի շրջանի Սարուխան գյուղում կատարած նախորդների ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է գալ հետևյալ եզրակացության։

1. Բազմամյա թիթեռնածաղկավոր բույսերից կորնգանը Ն. Բայազետի շրջանի պայմաններում հողի բերրիության բարձրացման և հացահատիկային կուլտուրաների բարձր ու կայուն բերք ստանալու հիմնական միջոցներից մեկն է, հետևապես նա պետք է խոշոր տեղ գրավի խոտադաշտային ցանքաշրջանառության մեջ։ Ցանքաշրջանառության մեջ կորնգանի տևողությունը պետք է լինի 2—3 տարի, ամենից լավ արդյունք ստացվում է, երբ այն թողնվում է երեք տարի։

2. Օգտագործման առաջին տարին (ճմաշերտում) լավ է ցանել գարնանացան ցորեն։ Օգտագործման երկրորդ տարին նույնպես ստացվում է հացահատիկային կուլտուրաների (գարնանացան ցորենի և գարու) բարձր բերք, իսկ երրորդ տարին բերքը խիստ պակասում է։ Ուստի բազմամյա խոտից հետո երրորդ տարին հացահատիկ չպետք է ցանել, այլ այդ դաշտը

պետք է տրամադրել շարքահերկ կուլտուրաներին, այն է՝ կարտոֆիլին, ծխախոտին և բանջարանոցային բույսերին։

3. Բազմամյա թիթեռնածաղկավոր բույսերից Ն. Բայազետի շրջանում առվույտը չի կարող փոխարինել կորնգանին, որովհետև բոլոր ցուցանիշների տեսակետից իր ազդեցությամբ և հետազդեցությամբ առվույտը խիստ հետ է մնում կորնգանից։

4. Անասնապահության բազայի ապահովման տեսակետից ևս առաջնությունը պատկանում է կորնգանին, որովհետև կորնգանը մեկ վեգետացիայի ընթացքում տալիս է 40—50 ցենտներ չոր խոտի բերք, իսկ առվույտը՝ 25—30 ցենտներ։

5. Գարնանացան հացահատիկների լավագույն նախորդներ են նաև կարտոֆիլը, իսկ ագրոտեխնիկայի գործադրման դեպքում վիկը, ինչպես նաև կտավհատը։

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ
Ընդհանուր երկրագործության ամբիոն
Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5 1948, Сборник научных трудов

ԱՍԼԱՆՅԱՆ Ե. Ե.

ԽԱՂՈՂԻ ՈՍԿԵՀԱՏ ՍՈՐՏԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոսկեհատը (Խարջին) Հայկական ՍՍՌ խաղողի ստանդարտային հիմնական սորտ է։ Այդ սորտն առանձնապես մեծ նշանակություն ունի Հայաստանի արդյունաբերական այգեգործական գլխավոր գոտում, որտեղ նրա բերքը հիմնականում օգտագործվում է մադերա, պորտվեյն և խերես տիպի գինիներ պատրաստելու համար։

Ոսկեհատ սորտի համար գործ են ածում՝ Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերական այգեգործական շրջաններում խարջի, խարջու, կանաչկենի, Նախիջևանի ԱՍՍՌ-ում՝ կատվի աչք, փիշի գյոզի անունները։ Այդ սինոնիմներից ամենից տարածվածը «խարջի» սինոնիմն է, որն առաջացել է թուրքական խարջ (խառջ, խարճ) բառից։ Ըստ Աճառյանի (14) խարջ բառն ունի հետևյալ նշանակությունը՝ 1. «Ծախք», 2. «Նախնական նյութ, որմե բան մը կը պատրաստվի». «Շաղախ, ծեփ». 4. «Մեկու մը կարենալ ընելիք բանը»։ «Խարջ» ադրբեջաներեն նշանակում է նաև տուրք։ Երկրորդ նշանակությունն ամենից լավ է՝ արտահայտում այդ սինոնիմի իմաստը։

Ոսկեհատի մշակությունը շատ հին է, սակայն այդ առթիվ մեր տրամադրության տակ չկան ճիշտ տվյալներ նրա ծագման և սկզբնական մշակման վայրի մասին։

Ոսկեհատ սորտի՝ բացառապես Հայկական ՍՍՌ-ի Արարատյան դաշտավայրի արդյունաբերական այգեգործական գոտում տարածված լինելը հիմք է ծառայում ենթադրելու, որ այդ սորտն իսկապես սկիզբ է առել հենց այդ վայրում, և որ նրա հայրենիքը հանդիսանում է Արարատյան դաշտավայրը, որտեղից և նա մուծվել է նաև Ադրբեջանական ՍՍՌ (Կիրովաբադի շրջան, Նախիջևանի ԱՍՍՌ)։

Ըստ խաղողի այգիների 1940 թվի Համամիութենական հաշվառման տվյալների՝ առ 1940 թվի օգոստոսի 1-ը, Հայկական ՍՍՌ-ում Ոսկեհատ սորտը կազմում էր Ռեսպուբլիկայի խաղողի այգիների տարածության 33,04 տոկոսը, այսինքն այգիների $1/3$ մասը (5)։ Ոսկեհատը հիմնականում տարածված է Աշտարակի (90,47 տոկոս), Էջմիածնի (80,0 տոկոս), Կոտայքի

(52,67 տոկոս), Բերիայի (47,62 տոկոս), Ջանգիբասարի (33,01 տոկոս) և Հոկտեմբերյանի (20,62 տոկոս) շրջաններում։

Նախիջևանի ԱՍՍՌ-ում Ոսկեհատը մշակում են գլխավորապես Նախիջևանում և նրա շրջակա գյուղերում։ Ըստ Բաշինջաղյանի (4) Ոսկեհատը փոքր տարածություններով պատահում է նաև Կիրովաբադի շրջանում։ ՍՍՌՄ-ի այգեգործական մյուս շրջաններում Ոսկեհատը կարելի է հանդիպել միայն ամպելոգրաֆիական կոլեկցիաներում։

Իր տնտեսական-տեխնոլոգիական մի շարք արժեքավոր հատկությունների շնորհիվ Ոսկեհատը Հայկական ՍՍՌ-ում խիստ աչքի է ընկնում, որպես բարձրորակ գինու լավագույն սորտ և այդ տեսակետից տեղական սորտերի շարքում նա առաջին տեղն է գրավում։ Նա մտցված է Աշտարակի, Բերիայի, Էջմիածնի, Արտաշատի, Հոկտեմբերյանի և Կոտայքի շրջանների խաղողի ստանդարտ ասորտիմենտի ցուցակի մեջ և նախատեսվում է տարեց տարի նրա տնկարկները լայն չափով ընդարձակել։

Ըստ իր մորֆոլոգիական հատկանիշների և բիոլոգիական հատկությունների Ոսկեհատը պատկանում է Vitis vinifera proles orientalis Negr. *էկոլոգո-սիստեմատիկական խմբին, այսինքն խաղողի արևելյան սորտերի խմբին (11)։*

II. ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոսկեհատ սորտի ստորև բերվող նկարագրությունը կատարված է Բերիայի շրջանի այգիներում։

Նկարագրությունը ստուգվել և ճշտվել է նաև Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջաններում։

1. ՄԱՏՂԱՇ ՇԻՎԸ

Երկարության միջինը, նկարագրության օրը, եղել է 25 սանտ.։

Թավոտություն—*Մատղաշ շիվն առաջին հայացքից լերկ է թվում։ Գագաթը և առաջին երկու տերևիկների*) ստորին մակերեսը ծածկված են ոստայնանման մազմզուկների նոսր ցանցով, իսկ տերևիկների վերին մակերեսը, գլխավոր ջղերի երկարությամբ՝ ծածկված է նույնանման, բայց համեմատաբար կարճ մազմզուկներով։ Երկրորդ հարկի տերևիկները (3, 4, 5) վերևի կողմից լերկ են, համարյա առանց մազմզուկների, ներքևի կողմից թավոտության հետքերով, որոնք 5—6-րդ տերևներից սկսած բոլորովին անհետանում են։ Առաջին և երկրորդ տերևիկների կոթունը և շվի ծայրը ծածկված են ոստայնանման մազմզուկների նոսր ցանցով, որը դեպի շվի հիմքը գնալով հետզհետե նոսրանում և վերջը ի սպառ անհետանում է։*

Գույնը—*Մազմզուկները սպիտակ-մոխրագույնավուն են, գագաթը և առաջին երկու տերևիկները գինեկարմիր, ատամիկները և կտրվածքները՝ եզրապատված են վառ կարմրագույն նեղ շերտով։ Շվի ցածի տերևները մուգ-կանաչ կամ կանաչ են։ Առաջին երկու տերևիկների ջղերը կանաչ են, իսկ*

ցածի տերևներինը՝ գինեկարմիր. ջղերի մանր ճյուղավորությունները՝ դեղնականաչավուն են, տերևների կոթունը՝ գինե-կարմիր։ Շվի առանցքի վերին մասը դրսի կողմից գինե-կարմիր է, ներսից՝ մուգ կանաչ։ Հանգույցները ավելի մուգ են, քան միջհանգույցները։ Շվի առանցքը գնալով դեպի հիմքը, աստիճանաբար կանաչ գույն է ընդունում երկայնակի նեղ գինե-կարմիր շերտերով։ Բեղիկները գինե-կարմիր են։

Լրացուցիչ հատկանիշներ—*Տերևիկները կլորավուն են, համեմատաբար թույլ արտահայտված բլթակներով, տերևակիցներն անգույն։ Ատամները եռանկյունաձև են, պարզ արտահայտված։*

Բնաշվերի առանցքը մուգ կարմիր է։

Ծաղկաբույլը տեսանելի է դառնում շատ վաղ՝ մեծ մասամբ բողբոջումից մի օր հետո, երբեմն հենց բողբոջման օրը։ Նրա գագաթն այդ փուլում դարչնագույն է կամ մանուշակագույն, որը հետագայում փոխվում է կանաչ գույնի։ Նա ծածկված է ոստայնանման մազմզուկների նոսր ցանցով։ Կոթունը գինե-կարմիր գույնի է։

2. ՄԻԱՄՅԱ ՄԱՏԸ

Միամյա մատը հարթ է, բավական խիտ բնափայտով։ Միջին չափերն են—երկարությունը 107 սմ, հաստությունը հիմքում՝ 7,7 մմ, 9—10-րդ միջհանգույցում՝ 5,0 մմ։ Միջհանգույցները մատի փայտացած մասում դեղնավուն-դարչնագույն են, համեմատաբար մուգ երկայնակի շերտերով։ Հանգույցները լավ արտահայտված են, ավելի մուգ գույնի, քան միջհանգույցները։ Միջհանգույցների երկարության միջինը՝ 9—12-րդ հանգույցներում 5,2 սմ է (3, 4—8, 6 սմ)։

3. ՏԵՐԵՎԸ

Տերևի ընդհանուր բնութագիրը—*Ոսկեհատ սորտի տերևները միջին մեծության են, հինգ լավ արտահայտած բլթակներով, սովորաբար հավասար երկարության ու լայնության, երբեմն ավելի լայն. տերևի երկարությունն է՝ 13,3 սմ (9,6—17,1 սմ), լայնությունը՝ 13,2 սմ (9,8—17,2 սմ), երկարության և լայնության հարաբերությունը՝ 1,0 (0,8—1,1)։ Թիթեղը կլորավուն է, կոշտ,-կոպիտ, բավական խիտ, համարյա հարթ, մեծ մասամբ թույլ բարձրացած կողերով, որոնք ծանծաղ ձագար կամ նավակ են կազմում, երբեմն թիթեղն ամբողջական է։ Թիթեղի վերին մակերեսը մուգ կանաչ է, թույլ փայլով, հարթ, երբեմն թույլ ցանցակնճոտ, ստորին մակերեսը՝ բաց կանաչ։*

Վերին կտրվածքները—*սովորաբար խորն են՝ կազմելով վերին ջղի երկարության 0,5-ը (0,3—0,7)։ Կտրվածքները ընդհանրապես բաց են, քնարաձև նեղ բերանով, կամ քնարաձև զուգահեռ կողերով, երբեմն կլորավուն կամ երկարացած, V-աձև, բոլոր դեպքերումն էլ սուր կամ սրված հիմքով, երբեմն կտրվածքները փակ են, լայն-էլիպսաձև, ձվաձև կամ ոսպաձև լու-*

ռանցքով, հազվադեպ՝ առանց լուսանցքի։ Կտրվածքի հիմքի հեռավորությու-նը տերևի գլխավոր ջղերի բաժանման կետից՝ միջինը 4,2 սմ (2,2—6,8 սմ) է։

Ստորին կտրվածքները—*Միջին խորության են՝ կազմելով ստորին ջղի երկարության 0,6-ը (0,4—0,8), բաց, սուր հիմքով, հազվադեպ՝ փակ, ընդ-հանրապես նույն ձևի, ինչ վերին կտրվածքները։ Կտրվածքի հիմքի հեռավո-րությունը գլխավոր ջղերի բաժանման կետից՝ միջինը 3,8 սմ (2,2—6,0 սմ) է։*

Կոթունային կտրվածքը *խորն է, ընդհանրապես բաց, երբեմն փակ։ Բացը՝ քնարաձև կամ կամարաձև է, սովորաբար սուր հիմքով, հազվադեպ կլորավուն հիմքով, փակը՝ ձվաձև կամ կլորավուն լուսանցքով։*

Ատամները—*լավ արտահայտված են, բավականին մեծ։ Առաջին կարգի ատամներն ընդհանրապես նեղ եռանկյուն են, երբեմն ներգոգ սրունք-ներով կամ եռանկյուն սուր գագաթով։ Եզրի ատամները նույնպես եռան-կյուն սուր գագաթով են։ Ատամի բարձրության և հիմքի լայնության հարա-բերությունը՝ 0,8 (0,5—1,2)։*

Թավոտությունը—*Տերևները լերկ են, ջղերը ներքևի մակերեսում պատած են կարճ մազմզուկներով։*

Բլթակները—*լավ արտահայտված են. ծայրի բլթակը՝ եռանկյունաձև է. համեմատաբար լայն, երբեմն ենթաբլթակներով։ Բլթակի երկարությունը՝ մի-ջինը 5,4 սմ։ Լայնությունը՝ լայն մասում 6,3 սմ (4,1—9,5 սմ) է, հիմքում՝ 3,9 սմ (2,2—6,5 սմ)։ Ծայրի բլթակի անկյունը՝ 90—95° և ավելի։*

Տերևակոթը—*լերկ է, հիմքում կանաչ, մնացածը՝ գինե-կարմիր կամ մանուշակագույն, ավելի կարճ, քան կենտրոնական ջիղը, կազմելով նրա եր-կարության 0,8—0,9-ը։ Երկարությունը՝ 7,8 սմ (5,1—14,6 սմ)։*

Ջղերը—*հիմքում, թե վերևի և թե տակի կողմից՝ գինե-կարմիր են, մնա-ցած մասը վերևի կողմից կանաչ է, իսկ ներքևից բաց-կանաչավուն։ Կենտ-րոնական ջղի երկարությունն է 9,4 սմ (6,8—13,4 սմ)։*

4. ԾԱՂԿԱԲՈՒՅԼԸ ԵՎ ԾԱՂԻԿԸ

Ծաղկաբույլը—*միջին մեծության, խիտ, առաջանում է 2—7 հանգույց-ներում, մեծ մասամբ՝ չորրորդ (68,3 տոկոս) և երրորդ (21,2 տոկոս) հան-գույցներում։ Ծաղկաբույլերի կոկոնների քանակը տատանվում է բավական լայն սահմաններում՝ 380-ից մինչև 1434, միջինը՝ 846։*

Կոկոնները—*տակառաձև են, դեպի գագաթը լայնացած, կանաչ կամ կանաչ դեղնավուն։*

Ծաղիկը—*հերմաֆրոդիտ է, լավ արտահայտված առէջքներով և վարսան-դով։*

Պսակը—*կազմված է 5—6 իրար հետ միացած կանաչ պսակաթերթե-րից, բացվում է սովորական եղանակով՝ ներքևից, պատահում են առանձին ծաղիկներ, որոնք բացվում են աստղաձև՝ վերևից, սակայն այդ ծաղիկներից պտուղներ չեն գոյանում։*

Բաժակը—*սկավառակաձև է, ընդհանրապես խորը, երբեմն ծանծաղ, սրծաթագույն երիզով։*

Ծաղկակալը—*համարյա անտեսանելի է։*

Նեկտարանոցները—*լավ արտահայտված են, բավական մեծ ու լայն, նարնջագույն։*

Առէջները—*5—6 հատ են, երբեմն՝ 7—8։ Առէջքի և վարսանդի երկա-րության հարաբերությունը 1,25, հազվադեպ՝ 1,0, փոշանոթները մեծ մասամբ բացվում են պսակի տակ՝ նախ քան ծաղկի բացվելը։*

Սերմնարանը—*կանաչ է, լայն-կոնաձև, հազվադեպ նեղ-կոնաձև, երբեմն՝ ասիմետրիկ։*

Սռնակը—*համեմատաբար հաստ է, նույն գույնի, ինչ սերմնարանը, ընդ-հանրապես կոնաձև, երբեմն՝ գլանաձև։*

Սպին—*լավ արտահայտված է, սկավառակաձև, մեջտեղում ծանծաղ ակոսով։ Փոշոտումը կատարվում է ընդհանրապես մինչ ծաղկի բացվելը (կլեյստոգամիա)։*

5. ՈՂԿՈՒՅԶԸ

Ոսկեհատ սորտի ողկույզն ընդհանրապես շատ խիտ է, և խտության հե-տևանքով հաճախ պտուղների մի մասը կորցնում է իր ձևը. չոր քարքարոտ հողերում միջակ խտության է։ Ողկույզը միջին մեծության է, երկարությունը՝ 14,8 սմ (11,3—18,2), լայնությունը՝ 13,5 սմ (8,8—19,1 սմ), երկարության և լայնության միջին հարաբերությունը՝ 1,1։ Քաշը տատանվում է բավական լայն սահմաններում՝ 120 գրամից մինչև 380 գրամ և ավելի, միջինը՝ 225 գրամ։ Ողկույզն ընդհանրապես լայն-կոնաձև է, մեկ կամ երկու կողմից թևա-վոր։ Թևերն ընդհանրապես լավ զարգացած են՝ հասնելով ողկույզի եր-կարության կեսին և ավելի, առաջին թևի երկարությունը՝ 7,6 սմ (4,6—10,2 սմ) է, երկրորդինը՝ 7,3 սմ (3,4—10,1 սմ), պատահում են նաև գլանա-ձև և անորոշ ձևի ողկույզներ։ Մեկ ողկույզի պտուղների միջին քանակը 156 է։

Ողկույզակոթը—*լերկ է, միջին հաստության, շատ կարճ. երկարությունը միջինը 2 սմ (0,9—3,2 սմ), փայտացող, պտղի ֆիզիոլոգիական լրիվ հա-սունության շրջանում՝ դեղնա-դարչնավուն, հազվադեպ՝ կարմիր։*

Ջանչը—*դեղին-կանաչավուն, լերկ։*

Պտղակոթը—*կանաչ կամ դեղնականաչավուն, միջին հաստության, կարճ՝ 0,7 սմ երկարության, դարչնագույն նոսր ելունդներով։*

Բարձիկը—*լայն կոնաձև է դարչնագույն ելունդներով։*

Վրձինը—*անգույն է, հյութալի, 4 մմ երկարության։*

6. ՊՏՈՒՂԸ

Պտուղը—*գնդաձև է, իսկ շատ խիտ ողկույզների պտուղները խտության պատճառով կողքերից և հիմքից սեղմված են լինում։ Գույնը սպիտակադեղ-նավուն, արևի կողմը՝ ոսկեգույն կամ սաթագույն։ Միջին մեծության, ծա-վալը 2 խսմ (1,5—2,8 խսմ), քաշը 2,2 գր. (1,6—3,0 գր)։ Երկարությու-*

նը 15,2 մմ է (13,5—17,1 մմ), լայնությունը՝ 15,2 մմ (13,4—17,1 մմ):

Մաշկը—միջին հաստության, թափանցիկ է, նուրբ, դարչնագույն, փոքր կետերով, պատած է մոմաշերտով, համեմատաբար հեշտությամբ անջատվում է:

Պտղամիսը—դեղին-կանաչավուն է, հյութալի, նուրբ, շատ քաղցր (24—26 տոկոս շաքար), դուրեկան համով և լավ արոմատով: Հյութն անգույն է: Սերմերը՝ 1—4, հաճախ 3 հատ են:

7. ՍԵՐՄԸ

Ոսկեհատի սերմերը գորշ դարչնագույն են, երկարությունը՝ 6,1 մմ (5,4—6,7 մմ), լայնությունը՝ լայն մասում 4,3 մմ (3,4—4,6 մմ), հաստությունը՝ 2,8 մմ (2,4—4,6 մմ): Երկարության և լայնության հարաբերությունը՝ 1,43 (1,28—1,62): 100 սերմի կշիռը օդային չորության վիճակում՝ 2,7 գրամ է:

Մարմինը—տանձաձև է, երբեմն երկար կլորավուն, կիսաշրջանաձև կողերով, հազվադեպ զուգահեռ կողերով. երկարությունը՝ 4,1 մմ:

Խալազան—կլորավուն, կամ թեթև ձվաձև է, լավ արտահայտված, բավական մեծ, տեղավորված է սերմի մարմնի մեջտեղում կամ վերևի $1/3$ մասում, ավելի մոտ է, քան մեջքի կողմը:

Կտուցը—կարճ կոնաձև կամ հատած կոնաձև է, բաց-դարչնագույն կամ դեղնավուն-դարչնագույն, չորացած վիճակում՝ գորշ, մինչև երկարության (2 մմ): Սերմի կտուցի և մարմնի երկարության հարաբերությունը՝ 0,5 է:

Ակոսները—լավ արտահայտված են, խորը, բավականին լայն, ցրվող, գագաթին չհասնող, ծայրերը դեպի դուրս թեքվող:

Գագաթը—խոր թմբանման է, երբեմն ծանծաղ, հազվադեպ՝ համարյա թե հարթ:

Սերմի կարը—լավ է արտահայտված:

III. ԱԳՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ՎԵԳԵՏԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՖԱԶԵՐԸ

Ոսկեհատի վեգետացիոն շրջանը և նրա առանձին ֆազերը բնութագրելու համար օգտագործված են ՍՍՌՄ-ի այգեգործական երեք տարբեր գոտիների կատարած ֆենոլոգիական դիտողությունների տվյալները (Հայկական ՍՍՌ, Ուզբեկական ՍՍՌ, Նախիջևանի ԱՍՍՌ): Հայկական ՍՍՌ-ում դիտողությունները կատարել ենք Բերիայի շրջանում՝ Թաիրովի անվան սովխոզի այգիներում: Ուզբեկական ՍՍՌ-ի համար օգտագործել ենք Համամիութենական բուսաբուծական ինստիտուտի Միջին-Ասիական կայանի (Տարնաու) ֆենոլոգիական դիտողությունների տվյալները: Դիտողությունները տարվել են այդ կայանի կոլեկցիոն հողամասում, որտեղ կա այդ սորտից ընդամենը 40 վազ: Նախիջևանի ԱՍՍՌ-ի համար բերված են Ադրբեջանական այգե-գինեգործական

Աղյուսակ 1

Ոսկեհատ սորտի վեգետացիոն փազերն այգեգործական տարբեր գոտիներում, ըստ տարիների

Այգեգործական շրջանը և դիտողության վայրը	Տարի	Բողբոջների բացվելու սկիզբը	Ծաղկման սկիզբը	Ծաղկման վերջը	Ծաղկման տևողությունը օրերով	Պտուղների հասունացման սկիզբը	Պտուղների ֆիզիոլոգիական լրիվ հասունացումը	Տերևաթափի վերջը (վաղերի աշնան քունը)	Բողբոջումից մինչև պտուղների լրիվ հասունացումը՝ օրերով	Բողբոջումից մինչև տերևաթափը (այգեթափը) օրերով	Ջերմությունների գումարը՝ բողբոջումից մինչև պտուղների լրիվ հասունացումը (10°-ից բարձր)
Թաիրովի անվան սովխոզ (Հայկական ՍՍՌ)	1937	16/4	30/5	16/6	17	10/8	21/9	8/11	158	206	3379,5°
	1938	22/4	28/5	16/6	19	7/8	26/9	13/11	157	205	3408,6°
	1939	19/4	25/5	6/6	12	31/7	17/9	10/11	151	205	3243,3°
	1940	13/4	27/5	12/6	16	3/8	16/9	17/11	156	218	3362,9°
	1941	9/4	22/5	8/6	17	1/8	15/9	1/10	159	175	3475,4°
Միջինը		16/4	26/5	12/6	16,2	4/8	19/9	4/11	156,2	201,8	3373,9°
Տաշկենտ՝ Տարնաու (Ուզբեկական ՍՍՌ) Համամիութենական Բուսաբուծական Ինստիտուտի կայան	1931—37	20/4	28/5	—	—	26/7	21/9	—	154	—	—
	1939	12/4	27/5	—	—	—	—	—	—	—	—
	1940	6/4	22/5	—	—	21/7	1/9	—	148	—	—
Միջինը		16/4	27/5	—	—	25/7	17/9	—	152,8	—	—
Նախիջևան՝ (Նախիջ. ԱՍՍՌ)	1940	18/4	28/5	4/6	7	23/7	—	14/11	—	210	—

փործնական զոնալ կայանի տվյալները։ Ֆենոլոգիական դիտողությունների տվյալները, ամփոփված են № 1 աղյուսակում։

Թաիրովի անվան սովխոզում Ոսկեհատի բողբոջների բացվելը սկսվում է ապրիլ ամսվա կեսին՝ 16-ին (5 տարվա միջինը), մասսայական բողբոջումը՝ ապրիլի 20-ին։ Աղյուսակից երևում է, որ բողբոջման ժամկետների տատանումն ըստ տարիների կազմում է Թաիրովի անվան սովխոզում՝ 13 օր, Տաշկենտում՝ 14 օր։

Ոսկեհատի ծաղկումը սկսվում է մայիսի վերջին տասնօրյակում, մասսայական ծաղկումը՝ հունիսի սկզբին։ Ծաղկման տևողությունը տատանվում է 12—19 օրերի միջև, կազմելով միջինը՝ 16,2 օր, (Թաիրովի անվան սովխոզ)։ Մեկ վազի ծաղկման տևողության միջինը՝ 12,1 օր, իսկ մեկ ծաղկաբույլինը՝ 5,9 օր։

Պտուղների հասունացումը սկսվում է Թաիրովի անվան սովխոզում օգոստոս ամսվա սկզբին, Տաշկենտում և Նախիջևանում՝ հուլիսի վերջին տասնօրյակում։ Պտուղների ֆիզիոլոգիական լրիվ հասունացումը ընդհանրապես տեղի է ունենում սեպտեմբերի երկրորդ կեսին, իսկ արդյունաբերական հասունացումը՝ սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին։

Ոսկեհատի վեգետացիոն շրջանի տևողությունը Թաիրովի անվան սովխոզում տատանվում է 175—218 օրերի սահմաններում, միջինը (1937—1941 թվականների տվյալներով) 201,8 օր։ 1941 թ. վեգետացիայի վաղ ընդհատվելը հետևանք է աշնան ցրտահարության, որ տեղի ունեցավ սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին։ Ընդհանրապես խաղողի վազի բնական տերևաթափ Հայկական ՍՍՌ-ի այգեգործական հիմնական շրջաններում չի նկատվում, հոկտեմբերի երկրորդ կեսից սկսած միայն վազերի ստորին տերևները որոշ չափով դեղնում են։ Ոսկեհատի, ինչպես և բոլոր մյուս սորտերի վեգետացիան, սովորաբար ընդհատվում է աշնան ցրտահարության կամ թաղելու հետևանքով։ Որպես կանոն, Ոսկեհատի, ինչպես և մյուս սորտերի վազերը թաղում են կանաչ վիճակում՝ մինչև տերևաթափը, սովորաբար՝ հոկտեմբերի կեսից մինչև նոյեմբերի երկրորդ կեսը։

Ի լրումն ֆենոլոգիական դիտողությունների, ստորև բերում ենք 1937—1941 թ. թ. վեգետացիոն ժամանակաշրջանի ջերմության գումարն ըստ Ոսկեհատ սորտի առանձին ֆազերի (աղյուսակ 2)։ Միջնօրական ջերմության գումարը հաշվել ենք Երևանի օդերևույթաբանական կայանի տվյալների համաձայն։

2. ՄԱՏԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ (ՓԱՅՏԱՑՈՒՄԸ)

Ոսկեհատի մատերը ՀՍՍՌ-ի պայմաններում ընդհանրապես լրիվ չեն հասունանում, չնայած, որ նրա վեգետացիոն ժամանակաշրջանը բավական երկար է և օգտավետ ջերմության գումարը՝ բարձր։ Չոր, քարքարոտ և թեթև հողերում, «ղռերում» և լանջերի վրա մատերի փայտացումը ընթանում է համեմատաբար լավ և առանձին տարիներում փայտացումը հասնում է 100 տոկոսի։ Հարթ տեղերում, ծանր և համեմատաբար խոնավ հողերում մատերի փայտացումը դանդաղ է ընթանում, սակայն մի շարք աբորիգեն սորտերի

Աղյուսակ

Միջնօրական ջերմության գումարը (10° ից բարձր) Ոսկեհատ սորտի վեգետացիոն ժամանակաշրջանում

№	Զարգացման ֆազերը	Տարիներ 1937	1938	1939	1940	1941	Միջինը
1	Բողբոջների բացվելուց մինչև ծաղկման սկիզբը	678,7	606,0	635,4	653,3	667,0	648,1
2	Ծաղկման սկզբից մինչև ծաղկման վերջը	317,7	365,9	247,0	326,9	360,4	323,6
3	Ծաղկումը վերջանալուց մինչև պտուղների հասունացման սկիզբը	1352,6	1290,0	1281,1	1249,6	1363,5	1307,4
4	Պտուղների հասունացումն սկսվելուց մինչև նրանց ֆիզիոլոգիական լրիվ հասունությունը	1030,5	1146,7	1079,8	1133,1	1084,2	1094,9
5	Պտուղների ֆիզիոլոգիական լրիվ հասունությունից մինչև վեգետացիայի ընդհատվելը (վազերի թաղելը)	667,3	457,6	715,3	763,5	307,5	582,2
	Ընդամենը՝ բողբոջների բացվելն սկսվելուց մինչև վեգետացիայի ընդհատվելը (վազերի թաղելը)	4046,8	3866,2	3958,6	4126,4	3782,6	3956,2

Ոսկեհատ սորտի վեգետացիայի ամբողջ ժամանակաշրջանի միջնօրական ջերմության գումարը ըստ տարիների տատանվում է 3782,6°-ից (1941 թ.) 4126,4-ի (1940 թ.) սահմաններում, միջինը՝ 3956,2°.

հետ համեմատած՝ ավելի լավ։ Թաիրովի անվան սովխոզի պայմաններում մատերի փայտացումը պտուղների ֆիզիոլոգիական լրիվ հասունության ֆազում հասնում է 70 տոկոսի, իսկ այգիների թաղելու ժամանակ՝ 80—85 տոկոսի։ Նախիջևանի պայմաններում, պտուղների լրիվ հասունության ֆազում, Ոսկեհատի մատերը փայտացած են լինում 80—85 տոկոսով, իսկ տերևաթափի ժամանակ՝ 90—95 տոկոսով։

3. ԱՃԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Ոսկեհատ սորտի աճեցողությունը տատանվում է բավական լայն սահմաններում և հիմնականում կախված է արտաքին պայմաններից և մշակությունից։ Աշտարակի, Բերիայի, Էջմիածնի շրջանների որոշ այգիներում Ոսկեհատն ունի համեմատաբար ուժեղ աճեցողություն, և նրա միամյա մատերը բերքահավաքի ժամանակ (1/X—15/X) հասնում են 1,5—2 մետր երկարության. լանջերի վրա, չոր, քարքարոտ հողերում (Բերիայի շրջան՝ Դալմա) նրա աճեցողությունը համեմատաբար թույլ է, և միամյա մատերի միջին երկարությունը՝ 70—80 սմ, իսկ Թաիրովի անվան սովխոզի պայմաններում՝ մասսայական բերքահավաքի ժամանակ 100—110 սմ։

Ոսկեհատը կարելի է դասել միջակ աճեցողություն ունեցող սորտերի շարքին։ Աճեցողության տեսակետից նա մոտենում է տեղական մի շարք

սորտերին՝ (Ճիլար, Գառան դմակ, և այլն), սակայն Երևանի, Մսխալի, Արաքատի սորտերից թույլ է աճում, իսկ Նազելի, Կախեթ, Կարճ մատ սորտերից՝ ուժեղ:

4. ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԼՐԻՎ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ-ի պայմաններում Ոսկեհատը՝ տեղական և ներմուծած սորտերի հետ համեմատած, բոլորից ուշ է սկսում պտղաբերել և այդ տեսակետից նա գրավում է վերջին տեղը: Առաջին բերքը տալիս է սովորաբար տնկելու չորրորդ տարին, իսկ լրիվ բերքատվության նա հասնում է միայն 7—8-րդ տարում, մինչդեռ մշակության նույն պայմաններում մի շարք սորտեր նորմալ բերք են տալիս արդեն 5—6-րդ տարում:

5. ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բերքատվությունը տարբեր շրջաններում—Ըստ գրական տվյալների Ոսկեհատը բերրի սորտ է:

Ոսկեհատի բերքատվությունը բնութագրելու համար, մենք օգտագործել ենք Թաիրովի անվան սովխոզի և Աշտարակի, Բերիայի, Էջմիածնի շրջանների կոլխոզների այգիների բերքատվության վերաբերյալ եղած տվյալները: Այդ վերջինների և մեր սեփական դիտողությունների հիման վրա կարելի է ընդունել, որ տեղական ու ներմուծած սորտերի շարքում Ոսկեհատը բերքատվության տեսակետից իսկապես առաջնակարգ տեղերից մեկն է գրավում:

Ստորև բերում ենք տվյալներ այդ սորտի բերքատվության մասին (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ոսկեհատ սորտի բերքատվությունը Թաիրովի անվան սովխոզում

Հողամասերի №-ը	Հողամասի տարածությունը հեկտարով	Վազերի քանակը մեկ հեկտար տարածության վրա	Ոսկեհատի վազերի քանակը հողամասում %%-ներով	Բերքատվությունը ըստ տարիների (ց/հ)				Չորս տարիների միջինը
				1938	1939	1940	1942	
9	2,0	1423	85,2	100,0	130,0	135,0	81,0	111,5
14	2,7	2360	72,4	101,0	109,0	122,2	146,7	119,7
15	1,5	2153	85,9	101,0	110,5	116,2	66,7	98,6
Միջինը		1979	78,8	100,7	116,5	124,5	98,1	109,9

Աղյուսակից երևում է, որ Ոսկեհատ սորտի բերքատվությունը խիստ տատանվում է թե ըստ առանձին հողամասերի և թե ըստ տարիների: Երեք հողամասերի միջին բերքատվությունը մեկ հեկտարից բոլոր տարիների համար կազմում է 109,9 ցենտներ (66,7—146,7 ցենտներ):

Ըստ Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսի տվյալների (7) Աշտարակի շրջանի Դիմիտրովի անվան կոլխոզը (Օշական) 1938—1939 թվականներին ստացել է մեկ հեկտարից 82,5 ցենտներ խաղողի միջին բերք, ըստ որում Ոսկեհատ սորտն այդ կոլխոզում կազմում է այգիների ընդհանուր տարածության 93,6 տոկոսը (5):

Էջմիածնի շրջանի «Պայքար» կոլխոզը (Ագավնատուն) նույն տարիներին ստացել է հեկտարից 80,46 ցենտներ խաղող: Ոսկեհատն այգիներում կազմում է 94,3 տոկոս, առանձին հողամասերից 1939 թ. ստացվել է 110—115 ցենտներ բերք (2): 1940 թ. Ոսկեհատն այդ կոլխոզում տվել է 105 ցենտներ խաղող:

Բերիայի շրջանի Վորոշիլովի անվան կոլխոզի առանձին այգիներից, որտեղ հիմնական սորտը Ոսկեհատն է, 1939 թ. 1 հեկտարից ստացվել է մինչև 180 ցենտներ խաղող:

Ինչպես երևում է վերևում բերած տվյալներից, Ոսկեհատի բերքատվությունը տատանվում է բավական լայն սահմաններում՝ 66-ից մինչև 180 ցենտներ հեկտարին, միջին բերքը 90 ցենտներ է: Վերևում բերված միջինից ցածր բերք ստանալու հիմնական պատճառն այն է, որ ագրոմիջոցառումների կոմպլեքսը ժամանակին, լրիվ ու որակով չի կատարվում: Համապատասխան ագրոտեխնիկիա (մասնավորապես էտը և ձևավորումը) կիրառելու և ժամանակին հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարելու դեպքում հնարավոր է ուժեղ չափով բարձրացնել այդ սորտի բերքատվությունը:

Բ. Պտղաբերությունը.—Ոսկեհատի պտղաբերությունը բնութագրելու համար օգտագործել ենք Թաիրովի անվան սովխոզում մեր երեք տարվա (1940—1942 թվերի) կատարած հետազոտությունների տվյալները: Շվերի ու ողկույզների քանակի հաշվառումը և դիտողությունները կատարել ենք յուրաքանչյուր տարի 30-ական վազի վրա: Ստացված տվյալներն ամփոփված են ստորև բերած № 4 աղյուսակում, որտեղ համեմատության համար բերում ենք նաև Համամիութենական Բուսաբուծական Ինստիտուտի Միջին-Ասիական կայանի և Ադրբեջանական Այգե-գինեգործական փորձնական զոնալ կայանի տվյալները Ոսկեհատի պտղաբերության վերաբերյալ:

Աղյուսակից երևում է, որ այդ սորտի պտղաբերության գործակիցը կազմում է՝ Հայկական ՍՍՌ-ում 0,55 (0,44—0,67), Տաշկենտում 0,52, Նախիջևանում 0,87, միջինը երեք գոտիների համար 0,65, այսինքն մեկ շիվը տալիս է միջին հաշվով 0,65 ողկույզ: Մեկ շվի պտղաբերությունը կազմում է 123,2 գրամ (99,0—156,6 գրամ), մեկ վազինը՝ 6,79 կիլոգրամ (3,88—9,40 կիլոգրամ):

Աղյուսակ 4

Ոսկեհատ սորտի պտղաբերությունը այգեգործական տարբեր շրջաններում

Շրջանը և բերքի հաշվառման վայրը	Վազերի ձևավորումը և տնկման խտությունը	Բեռնավորումը՝ վազի շվերի միջին քանակը	Տարիներ	Պտղաբերող շվերի %-ը	Պտղաբեր շվերի %-ը: Մեկական ողկույզով	Պտղաբեր շվերի %-ը: Երկուական ողկույզով	Պտղաբեր շվերի %-ը: Երեքական ողկույզով	Պտղաբերության գործակիցը	Ողկույզների միջին կշիռը գրամներով	Մեկ շվի պտղաբերությունը՝ գրամներով	Մեկ վազի միջին բերքը՝ կիլոգրամներով	Հաշվարկված բերքը՝ հեկտարին ցենտներով
Հայկական ՍՍՌ Թաիրովի անվան սովխոզ	Թմբային սիստեմ Մեկ հեկտարի վրա 1704 վազ	63	1940	44,4	34,7	9,7	—	0,54	220	118,8	7,48	127,4
		71	1941	35,2	26,8	8,4	—	0.41	225	99,0	7,03	119,8
		58	1942	57,0	47,0	10,0	—	0,67	175	117,2	6,80	115.9
Միջինը		64		45,5	36,2	9,3	—	0,55	207	111,7	7,10	121,0
Ուզբեկական ՍՍՌ Տաշկենտ (Տարնաու)	Հովհար լարերի վրա, խտությունը 2,5×2,0 մետր		1940					0,52	195	101,4	3,88	77,6
Նախիջևան՝ Ջերժինսկու անվան կոլխոզ	Թմբային այգի, խտությունը՝ 2,5×1,5 մետր	50—70	1940					0,87	180	156,6	9,40	250,6
Միջինը		62		45,5	36,2	9,3	—	0,65	194	123,2	6,79	149,7

Գ. Փոխարինող շվերի և բնաշվերի պտղաբերությունը.— *Փոխարինող բողբոջներից առաջացած շվերի քանակի մոտավորապես 10 տոկոսը պտղաբեր է. առանձին դեպքերում վերջինների քանակը հասնում է մինչև 20 տոկոսի: Բնաշվերը (հոռաշվերն) ընդհանրապես անբերրի են:*

Դ. Տաղկաթափի և մանրապտղության աստիճանը.—*Պտղակալման տոկոսը, որպես կանոն, ցածր է թե ազատ փոշոտման և թե ինքնափոշոտման պայմաններում: Պտղակալման աստիճանը բնութագրող տվյալները բերում ենք հետևյալ աղյուսակում, որտեղ համեմատության համար տալիս ենք նաև տվյալներ Սպիտակ մուսկատ սորտի վերաբերյալ: Աշխատանքը կատարել ենք Թաիրովի անվան սովխոզում 1937—1941 թվերին (Աղյուսակ 5):*

Աղյուսակից երևում է, որ ուսումնասիրված սորտի պտղակալումն ինքնափոշոտման պայմաններում տատանվում է 15,8 տոկոսից մինչև 25,2 տոկոսը, միջինը՝ 19,7 տոկոս:

Համարյա նույնպիսի պտղակալում այդ սորտն ունի նաև ազատ փոշոտման պայմաններում (19,8 տոկոս): Նույնանման պայմաններում Սպիտակ մուսկատի պտղակալման տոկոսը զգալի չափով բարձր է՝ հասնելով 41,7-ի, այսինքն գերազանցում է Ոսկեհատին երկու անգամից ավել: Չնայած համեմատաբար ցածր պտղակալման տոկոսին, Ոսկեհատի փորձի տակ դրած ողկույզները եղել են շատ խիտ և ունեցել են նորմալ մեծության պտուղներ: Բերած տվյալները ցույց են տալիս, որ նրա ծաղիկների 80 տոկոսը նորմալ կերպով թափվում է և չնայած այդ հանգամանքին, այնուամենայնիվ տալիս է մաքսիմալ խտության ողկույզներ:

Սպիտակ մուսկատի բարձր պտղակալումը (41,7 տոկոս) պետք է բացատրել ծաղկաբույլի կոկոնների պակաս քանակությամբ (290 հատ, Ոսկեհատինը՝ 846 հատ):

Ոսկեհատ սորտի մանրապտղությունը շատ թույլ է արտահայտվում: Մանր, անկորիզ պտուղները կազմում են ողկույզի պտուղների ընդհանուր քանակի շուրջ 5 տոկոսը (2,8—8,7 տոկոս), որը ողկույզի ընդհանուր խտության վրա համարյա ոչ մի ազդեցություն չի թողնում:

Ե. ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Ոսկեհատն ուժեղ վարակվում է միլդյու և օիդիում հիվանդություններով և այդ հիվանդություններին դիմանալու տեսակետից նա տեղական և ներմուծված սորտերի շարքում վերջին տեղն է գրավում (Ռոլով, 12): Ցածր բերքը շատ հաճախ հետևանք է միլդյուի դեմ ոչ ժամանակին և վատ որակով կատարած սրսկումների: Միլդյուով Ոսկեհատն առանձնապես ուժեղ է վարակվում Արտաշատի շրջանի ցածրադիր մասում, որտեղ այդ հիվանդության զարգացման համար պայմաններն ավելի նպաստավոր են:

Աղյուսակ 5

Ոսկեհատ և Սպիտակ մուսկատ սորտերի պտղակալման ատիճանը

Տարի	Հետազոտված ծաղկաբույլերի քանակը	Ծաղկաբույլի ծաղիկների միջին քանակը	Մեկ ողկույզի վրա առաջացած պտուղները — Քանակը: Նորմալ	Մանր	Ընդամենը	%-ը՝ հաշված կոկոնների ընդհանուր քանակից: Նորմալ	Մանր	Ընդամենը
Ոսկեհատ՝ ազատ փոշոտման պայմաններում								
1938	5	827	141	8	149	17,05	0,97	18,02
1940	5	746	147	14	161	19,7	1,9	21,6
Երկու տարվանը		786	144	11	155	18,4	1,4	19,8
Ոսկեհատ՝ ինքնափոշոտման պայմաններում								
1937	12	813	157	12	169	19,3	1,5	20,8
1938	10	1091	165	8	173	15,1	0,7	15,8
1939	10	746	136	8	144	18,2	1,1	19,3
1940	10	865	147	6	153	17,0	0,7	17,7
1941	10	714	175	5	180	24,5	0,7	25,2
Բոլոր տարիներինը՝	52	846	156	8	164	18,8	0,9	19,7
Սպիտակ մուսկատ՝ ինքնափոշոտման պայմաններում								
1937—1941	20	290	111	10	121	38,3	3,4	41,7

Տեմերենիկովա-Բաբայանը (13) պարզել է, որ իր կողմից ուսումնասիրված տեղական 14 սորտից օիդիումով ամենից ուժեղ վարակվողը Ոսկեհատն է։

Օիդիումով վարակվում են գլխավորապես Ոսկեհատի ողկույզները։ Վարակվում են նաև շվերը և տերևները։ Հարթ տեղերում, համեմատաբար ծանր և խոնավ հողերում, անձրևային եղանակներին, Ոսկեհատի ողկույզները ուժեղ չափով փթում են։

Վնասատուներից ողկույզակերն է ամենից շատ վնաս հասցնում։ Հայկական ՍՍՌ-ում մշակվող սորտերից Ոսկեհատն այս տեսակետից էլ ամենաախտահարվող սորտն է։

7. ՈՍԿԵՀԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

Հողի հանդեպ Ոսկեհատն այնքան պահանջկոտ չէ։ Նա լավ աճում ու բերք է տալիս տարբեր հողերում, բացառությամբ խոնավ, աղուտ և ծանր հողերից։ Առանձնապես բարձր քանակով ու որակով բերք է ստացվում Աշտարակի, Բերիայի, Էջմիածնի շրջաններում և Արտաշատի շրջանի հյուսիսարևմտյան մասում՝ կրով հարուստ, քարքարոտ, ավազա-կավային հողերում։ Հենց այդ շրջաններումն է, որ դրանից ստանում են բարձրորակ թունդ և դեսերտի գինիներ։ Ամենից լավ գինիներ ստացվում են հարավ և հարավ-արևմտյան լանջերի այգիներից։ Ցածրադիր տեղերում, որտեղ հողը համեմատաբար խոնավ է և ծանր, Ոսկեհատը տալիս է ցածր որակի բերք, բացի այդ, նա այդ պայմաններում ուժեղ վարակվում է սնկային հիվանդություններով (միլդյու, օիդիում) և ողկուզակերով։

IV. ՏՆՏԵՍԱ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Իր պտուղների բարձր շաքարայնության և համեմատաբար ցածր թթվության շնորհիվ Ոսկեհատը օգտագործվում է թունդ և դեսերտի գինիներ պատրաստելու համար։ Սա հիմնականում գինու սորտ է, նա տալիս է խերես, մադերա և պորտվեյն տիպի գինիներ, որոնք ՍՍՌՄ-ում թունդ գինիների շարքում առաջնակարգ տեղերից մեկն են գրավում։

1. ՈՂԿՈՒՅԶԻ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Այդ սորտի ողկույզի և պտուղների մեխանիկական կազմությունը բնութագրելու համար օգտագործել ենք Թաիրովի անվան սովխոզում Աղիզյանի կատարած անալիզների տվյալները և Միջին Ասիական կայանի (Տաշկենտում) ստացված տվյալները։ Բերիայի շրջանում յուրաքանչյուր տարի անալիզ է արված 10 ողկույզ, Տաշկենտում՝ 17 ողկույզ։ Անալիզների միջին տվյալներն ամփոփել ենք № 6 աղյուսակում։

Բերիայի շրջանի պայմաններում այդ սորտի չանչի տոկոսը՝ հաշված միողկույզի կշռից ըստ տարիների տատանվում է 3,2—4-ի սահմաններում, միջինը՝ 3,6։ Պտղամսությունը և հյութը 88,5 տոկոս է (87,3 մինչև 89,4 տոկոս), Տաշկենտում՝ 90,24 տոկոս։

Աղյուսակ 6

Ոսկեհատ սորտի խաղողի մեխանիկական անալիզի տվյալները

Շրջանը և վայրը, որտեղ կատարված է անալիզը	Տարի	Ընկալիքի համար վերցրած ողկույզի միջին կշիռը գրամներով	Ողկույզի պտուղների միջին քանակը	Ողկույզի կազմությունը %%-ով՝ հաշված ողկույզի միջին կշռից: Պտուղների %-ը	Չանչի %-ը	Մաշկի %-ը	Սերմերի %-ը	Պտղանյութի և հյութի %-ը	100 պտղի կշիռը՝ գրամներով	100 սերմի կշիռը՝ գրամներով	100 գրամ ողկույզին համապատասխանող պտուղների քանակը (պտղային ցուցանիշ)	Պտղանյութի և հյութի կշռի հարաբերությունը մաշկի կշռին (կազմության ցուցանիշ)	Պտղանյութի և հյութի կշռի հարաբերությունը՝ չանչի, մաշկի և սերմերի կշռին (կառուցվածքային ցուցանիշ)
Բերիայի շրջան՝ Թաիրովի անվան Սովխոզ (Հայկական ՍՍՌ)	1930	363,0	251	96,5	3,5	3,8	3,7	89,0	139,5	2,8	69,1	23,1	8,1
	1931	164,7	82	96,8	3,2	4,1	3,3	89,4	194,4	3,9	49,8	21,6	8,4
	1933	236,8	155	96,5	3,5	3,5	4,0	89,0	147,5	3,1	65,4	25,4	8,2
	1938	186,8	105	96,3	3,7	3,7	4,2	88,4	171,3	3,3	56,2	23,9	7,6
	1939	227,3	138	96,0	4,0	4,0	4,7	87,3	158,2	3,4	60,7	21,8	6,9
	1940	280,0	207	96,3	3,7	4,1	4,0	88,2	150,2	3,2	74,0	21,5	7,5
Միջինը՝		243,1	156	96,4	3,6	3,9	4,0	88,5	156,8	3,3	62,5	22,9	7,8
Տաշկենտ՝ Տարնաու (Ուզբեկական ՍՍՌ)	1938	194,88	173,64	98,73	1,27	4,90	2,89	90,94	110,80	2,87	89,10	18,55	10,03

2. ՔԱՂՑՈՒԻ, ԿՆՉԵՌԻ ԵՎ ՉԱՆՉԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵԼԸ

Քաղցուի, կնչեռի և չանչի ելը բնութագրելու համար օգտագործել ենք Արարատ տրեստի կենտրոնական լաբորատորիայի Աշտարակի շրջանում 1940 թ. կատարած փորձնական ստուգման տվյալները: Չանչերն անջատվել են Մաբիլի էկրաապոմպով, փլուշը մամլվել է Մաբիլի անընդհատ գործող մամլուլում: Քաղցուի շաքարը կազմել է 21,3 տոկոս (միջինը): Կշռային տոկոսը որոշվել է ըստ քաղցուի տեսակարար կշռի: Ստացված տվյալներն ամփոփել ենք № 7 աղյուսակում:

Աղյուսակ 7

Մեկ տոննա խաղողից ստացված քաղցուի և կնչեռի քանակը

Վայրը	Խաղողի վերամշակ. ժամանակը	Քաղցուի ելը: Դեկալիտրերով	Քաղցուի ելը: Կշռային տոկոսներով	Կնչեռի ելը: Կիլոգրամներով	Կնչեռի ելը: Կշռային տոկոսներով	Չանչի ելը: Կիլոգրամներով	Չանչի ելը: Կշռային տոկոսներով	Ձը հաշված կորուստը տոկոսն.
Աշտարակ	13/10—40 թ.	76,26	84,74	96,3	9,63	55,6	5,56	0,07
Օշական	11/10—40 թ.	75,05	82,85	118,8	11,88	46,2	4,62	0,65
Միջինը՝		75,65	83,80	107,5	10,75	50,9	5,09	0,36

Համեմատության համար տալիս ենք նաև քաղցուի ելն Աշտարակի շրջանի պայմաններում՝ ըստ Արարատ տրեստի 1937—1945 թվերի արտադրական ակտերի տվյալների: Փլուշը մամլվել է Մաբիլի անընդհատ գործող մամլուլներով: Ոսկեհատը կազմել է վերամշակված խաղողի ընդհանուր կշռի 95 տոկոսը:

Աղյուսակ 8

Քաղցուի արտադրական ելը՝ մեկ տոննա խաղողից, դեկալիտրերով

Վերամշակման վայրը	Տարիներ: 1937	1938	1939	1940	1941	1942	1943	1944	1945	Միջինը
Աշտարակ	72,1	70,5	66,0	74,3	70,0	75,8	71,3	72,3	78,1	72,3
Օշական	72,3	70,4	65,5	71,5	70,8	71,0	71,3	71,9	74,0	71,0
Ոսկեվազ	72,8	70,3	65,6	71,8	65,5	70,3	72,7	71,7	74,5	70,6
Միջինը	72,4	70,4	65,7	72,5	68,8	72,4	71,8	72,0	75,5	71,3

Քաղցուի ելը փորձնական ստուգման տվյալներով ընդհանուր արտադրական ելից համեմատաբար բարձր է: Այդ կարելի է բացատրել նրանով, որ խաղողի փորձնական վերամշակումն, ինչպես այդ երևում է ստուգող հանձնաժողովի համապատասխան արձանագրություններից, կատարվել է անձրևներից անմիջապես հետո և քաղցուն ունեցել է միայն 21,3 տոկոս շաքար, մինչդեռ ընդհանուր արտադրական վերամշակման պայմաններում քաղցուն եղել է ավելի էքստրակտիվ, պարունակելով միջինը 23 տոկոս շաքար:

1939 թ. քաղցուի ցածր ելը բացատրվում է նրանով, որ խաղողն ուժեղ վարակված էր սնկային հիվանդություններով, ողկուզակերով և զանազան բորբոսանկերով:

ԽԱՂՈՂԱՀՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ոսկեհատը տալիս է բարձր տոկոս շաքար պարունակող և լավ արոմատով քաղցու՝ Բերիայի, Աշտարակի, Էջմիածնի, մասամբ Հոկտեմբերյանի շրջաններում և Արտաշատի շրջանի հյուսիս-արևմտյան մասում, որտեղ շաքարայնության տեսակետից ստանդարտային տեղական սորտերի շարքում նա գրավում է առաջին տեղը: Առանձնապես բարձր շաքարայնությամբ քաղցու է ստացվում լանջերի վրա, կրով հարուստ, քարքարոտ, կիսակավային, օդաթափանցիկ բաց-գորշագույն հողերում: Այդ հողերում, բարենպաստ տարիներում այս սորտի խաղողի հյութի շաքարի քանակը հաճախ հասնում է 26—27 տոկոսի, ուշ բերքահավաքի դեպքում անգամ 30 տոկոսի և ավելի: Ցածրադիր տեղերում, խոնավ և ծանր հողերում շաքարի տոկոսը համեմատաբար ցածր է և հավասար է 22—23, Կոտայքի շրջանում՝ 20 տոկոսի:

Խաղողահյութի թթվությունը համեմատաբար ցածր է և Ոսկեհատի տարածման հիմնական շրջաններում այն պտղի լրիվ ֆիզիոլոգիական հասունության փազայում կազմում է միջինը՝ 5,0—5,5 պրոմիլ (ըստ գինեթթվի):

Ոսկեհատի շաքարայնությունը և թթվությունը պտուղների հասունացման ընթացքում ուժեղ փոփոխության են ենթարկվում: Շաքարայնությունը պտուղների հասունացման սկզբից մինչև նրանց լրիվ հասունացումն անընդհատ բարձրանում է, թթվությունը՝ ընդհակառակը նվազում է: Շաքարի քանակն առանձնապես ցայտուն կերպով ավելանում է սեպտեմբեր ամսին: Թթվության ուժեղ նվազում նկատվում է հատկապես պտուղների հասունացման սկզբին, իսկ ֆիզիոլոգիական լրիվ հասունության ժամանակ թթուները չնչին չափով են պակասում: Ամենաբարձր շաքարայնություն և ամենացածր թթվություն նկատվում է հոկտեմբեր ամսին: Շաքարի քանակի հարաբերությունը թթուների քանակին՝ պտուղների հասունացման ընթացքում անընդհատ բարձրանում է, հոկտեմբերի առաջին կեսին կազմելով միջինը 5—5,5:

4. ԽԱՂՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՊՐՈԴՈՒԿՑԻԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ա. Պրոդուկցիայի տեսակը և գինու տիպը.—Աշտարակի շրջանում Ոսկեհատը հիմնականում օգտագործում են խերես և մադերա տիպի գինիներ պատրաստելու համար, մասամբ էլ՝ սեղանի «Ոսկեվազ» մարկայի գինու համար: Ոսկեհատից բարձրորակ պորտվեյն գինի է ստացվում Էջմիածնի շրջանում, մանավանդ Աղավնատան ենթաշրջանում: Բերիայի շրջանում Ոսկեհատ սորտից նույնպես բարձրորակ պորտվեյն և մադերա գինիներ են ստացվում: Կոտայքում, բնական պայմանների շնորհիվ այս սորտը տալիս է համեմատաբար պակաս քաղցրությամբ քաղցու, այդտեղ նրա բերքը հիմնականում օգտագործում են սեղանի գինիներ պատրաստելու համար: Նույն այդ շրջանում Ոսկեհատի գինին շամպայնի լավ մատերիալ է հանդիսանում:

Այս սորտն օգտագործվում է նաև որպես սեղանի խաղող, մանավանդ Բերիայի շրջանում: Սակայն, որպես այդպիսին նա ունի մի շարք պակասություններ, այն է՝ փոխադրունակությունը շատ ցածր է, ողկույզը շատ խիտ է, կորիզների տոկոսը բավական բարձր, հյութը շատ քաղցր և պակաս թթու:

Բ. Մասսայական բերքահավաքի ժամանակը.—Թունդ և դեսերտի գինիներ պատրաստելու համար Ոսկեհատի բերքը հավաքում են այն ժամանակ, երբ խաղողի հյութի շաքարայնությունը հասնում է Էջմիածնի և Բերիայի շրջաններում՝ 23—24 տոկոսի, Աշտարակի շրջանում՝ 22—23 տոկոսի: Այդպիսի շաքարայնություն Ոսկեհատն այդ շրջաններում ունենում է սեպտեմբերի վերջերին, հոկտեմբերի սկզբին: Թունդ և դեսերտի գինիներ պատրաստելու համար սրա բերքահավաքի լավագույն ժամկետը՝ հոկտեմբեր ամսվա առաջին կեսն է:

Գ. Պրոդուկցիայի օրգանոլեպտիկ և քիմիական բնութագիրը.—Ոսկեհատից պատրաստած գինիներն աչքի են ընկնում բարձր թնդությամբ, էքստրակտիվությամբ և ցածր թթվությամբ: Սրանից ստացված գինիները բարձր են գնահատվել մի շարք հեղինակների կողմից: Այսպես՝ Անդրոնիկով, Բալլաս, Վիսնիովսկի, Դևիցկի, Ռոլլով և ուրիշները Ոսկեհատը համարում են սպիտակ գինու լավագույն սորտ (1, 3, 6, 8, 12):

Սրա գինիները բարձր գնահատական են ստացել «Արարատ» տրեստի կենտրոնական դեգուստացիոն հանձնաժողովի կողմից:

Խաղողի մյուս սորտերի գինիների համեմատությամբ, սրա գինիները հեշտ են մադերիզացվում և խերեսացվում, իսկ թառամած խաղողից ստացվում է յուրահատուկ դեսերտի գինի, որն իր հատկություններով նմանվում է հունգարական (Տոկայի) գինիներին:

Ոսկեհատի երիտասարդ գինիների քիմիական կազմը բնութագրելու համար բերում ենք հետևյալ աղյուսակը (աղյուսակ 9):

Գինիների անալիզը կատարված է գարնանը՝ երկրորդ կտտումից հետո, այսինքն գինիների 6—8 ամսական հասակում: Բացի Կոտայքի շրջանից, մյուս բոլոր շրջաններում մշակվող Ոսկեհատի գինիներն աչքի են ընկնում իրենց խիստ բարձր թնդությամբ և համեմատաբար ցածր թթվությամբ: Առանձին հաջող տարիներում այդ գինիների բնական թնդությունը հասնում է 16°-ի և ավելի: Էջմիածնի շրջանում (Աղավնատուն) 1941 թվին Ոսկեհատի գինին ունեցել է 17—18° բնական թնդություն և 2—3 տոկոսի չափով չխմորված շաքար: Այդ գինիների բացառիկ բարձր թնդությունը ի միջի այլոց ցույց է տալիս և այն, որ Հայաստանի տեղական շաքարասնկերը խմորման մեծ եռանդ ունեն և շատ սպիրտադիմացկուն են:

Աղյուսակ 9

Ոսկեհատի գինիների քիմիական կազմը

	Տեսակարար կշիռը	Սպիրտը՝ ծավալային տոկոսներով	Գրամներով մեկ լիտրում: Էքստրակտ	Թթվությունը: Տիտրվող	Թթվությունը: Ցնդող	Թթվությունը: Չցնդող	Գինեթթու	Տանին	Գլիցերին	Շաքար	Մոխիր	Ֆոսֆորական թթու	PH	Անալիզների կատարողը
1. Աշտարակի շրջան														
Ութ տարվա միջինը	0,9935	14,42	30,0	6,02	0,77	5,06	0,97	0,44	9,52	2,0	3,07	0,45	3,6	Աղիդյան Է.
Մինիմում	0,9917	13,16	24,9	5,37	0,62	3,70	0,63	0,24	7,07	1,4	2,80	0,40		
Մաքսիմում	0,9983	15,43	34,7	6,74	1,29	5,79	1,74	0,96	13,70	3,3	3,20	0,50		
2. Բերիայի շրջան														
Հինգ տարվա միջինը	0,9949	14,10	28,9	6,13	0,93	4,98	0,87	0,27	9,69	2,4	3,67			
Մինիմում	0,9923	12,05	24,7	4,42	0,60	3,17	0,42	0,18	8,20	1,8				
Մաքսիմում	1,0004	15,55	32,7	7,45	1,40	5,71	1,64	0,37	11,23	3,7				
3. Էջմիածնի շրջան														
Տաս տարվա միջինը	0,9939	14,51	28,6	6,18	1,00	4,93	0,84	0,34	9,32	2,1	3,26	0,56	3,5	
Մինիմում	0,9914	13,51	21,5	4,75	0,58	3,89	0,43	0,15	6,20	1,2	2,75	0,40		
Մաքսիմում	0,9990	16,14	37,4	7,35	1,96	6,14	1,31	0,70	12,74	3,1	3,86	0,83		
4. Կոտայքի շրջան (ըստ «Արարատ» տրեստի կենտրոնական լաբորատորիայի տվյալների)														
1940 թ. միջինը	0,9929	12,0	24,2	5,25	1,02	3,98	2,40		0,84	1,09	2,30			
1944—1945 թ. միջինը		12,1		6,3	0,7									
1944—1945 թ. մինիմում		11,2		5,3	0,4									
1944—1945 թ. մաքսիմում		12,9		7,1	0,9									

Ոսկեհատի գինիների բարձր որակը մատնանշված է Սովետական Միության շատ մասնագետների կողմից և դեգուստացիայի ժամանակ շատ հաճախ այդ գինիները ստացել են 8,5—9,5 թվանշան:

Ոսկեհատի պորտվեյնները մուգ ոսկեգույն են և բավական էքստրակտիվ, ունեն թույլ արտահայտված պտղային արոմատ և հարմոնիկ համ: Նրանք երբեմն ենթարկվում են մադերիզացիայի, որը և հանդիսանում է Հայաստանի պորտվեյնների հիմնական բացը: Մադերաները լինում են մուգ թեյի գույնի, բարձր որակի, տիպիկ, նուրբ բույրով և դուրեկան հարմոնիկ համով: Ոսկեհատից պատրաստված մադերաները Հայաստանի թունդ գինիների շարքում գրավում են առաջին տեղը և իրենց բույրով շատ նման են իսկական մադերային:

Ոսկեհատից պատրաստած խերես տիպի գինիներն աչքի են ընկնում դուրեկան համով, շատ նուրբ բույրով, լավ արտահայտված խերեսային բնույթով և իրենց որակով մեր Միության մեջ գրավում են առաջնակարգ տեղերից մեկը:

Բացի վերը նշած գինիներից, Ոսկեհատից կարելի է պատրաստել նաև տոկայի տիպի բարձրորակ գինիներ, մանավանդ բերքն ուշ հավաքելու և այն որոշ չափով թառամեցնելու պայմանով (Հոկտեմբերյանի շրջան):

Ոսկեհատի թունդ գինիների քիմիական կազմի վերաբերյալ տվյալներն ամփոփված են № 10 աղյուսակում:

Աղյուսակ 10

Ոսկեհատի թունդ գինիների քիմիական կազմը

Գինու տեսակը	Բերքի տարին	Տեսակարար կշիռը 15 ջերմաստիճանում	Սպիրտը՝ ծավալային տոկոսներով	Շաքարը՝ գրամներով մեկ լիտրում	Թթվությունը գրամ/լիտրերով: Տիտրվող՝ ըստ գինեթթվի	Թթվությունը գրամ/լիտրերով: Ցնդող՝ ըստ քացախաթթվի	[illegible]
Մադերա	1938	1,0118	19,45	55,00	5,75	1,45	[illegible]
	1937	1,0109	19,45	52,10	5,80	1,30	
	1936	1,0100	19,68	54,00	5,20	1,68	
Պորտվեյն	1939	1,0290	19,80	96,00	5,00	1,20	
	1938	1,0290	19,80	98,00	4,80	1,00	
	1936	1,0266	19,90	97,00	5,25	1,00	
Խերես (կոնյակային)	1940	0,9972	20,00	35,40	4,60	1,15	

Հայկական ՍՍՌ-ի այգեգործական հիմնական շրջաններում (Աշտարակի, Բերիայի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի) Ոսկեհատից պատրաստած սեղանի գինիները լինում են բավական թունդ (13—15°), պակաս թթու, կոպիտ և ծանր, որոշ չափով դառը, սեղանի գինիներին ոչ բնորոշ բուկետով։ Հնացման երկրորդ տարում այդ գինիները հեշտությամբ ենթարկվում են մադերիզացիայի և խերեսացման։ Հայաստանում Ոսկեհատից սեղանի գինիներ պատրաստում են Կոտայքի շրջանում, որտեղ նրանք ունեն համեմատաբար պակաս թնդություն (մինչև 12°)։

5. ՈՍԿԵՀԱՏ ՍՈՐՏԻ ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԼՈՆՆԵՐԸ

Վարիացիաների և կլոնային կազմի տեսակետից Ոսկեհատը բոլորովին ուսումնասիրված չէ, առայժմ հայտնի է նրա միայն մի վարիացիա, որը «Ծտի խաղող» կամ «Մորի» է կոչվում։ Հին աշխատությունների մեջ այդ վարիացիան հայտնի է նաև «Իրինջի—Խարջի» անունով (8)։

«Ծտի խաղողը» հատ ու կենտ վազերով պատահում է Ոսկեհատի տարածման շրջաններում՝ մեկ հեկտարի վրա 2—3 վազ։ Այդ վարիացիայի բերքատվությունը ցածր է, չնայած որ մեկ վազի վրա եղած ողկույզների քանակը հասնում է 40—50-ի և ավելի։ Այդ վարիացիան իսկական Ոսկեհատից հիմնականում տարբերվում է նրանով, որ նրա ողկույզները փոքր են, պտուղները մանր ու անկորիզ և նա համեմատաբար վաղահաս է։ «Ծտի խաղողի» ծաղիկը նույնպես հերմաֆրոդիտ է և նրա պտուղների անկորիզությունը ըստ երևույթին հետևանք է ծաղիկների իգական օրգանների աննորմալ զարգացման։ Մորֆոլոգիական այլ հատկանիշներով «Ծտի խաղողը» շատ նման է իսկական Ոսկեհատին։ «Ծտի խաղողի» ողկույզը լինում է միջակ խտության, փոքր, երկարությունը 8 սմ, լայնությունը 7 սմ, միջին կշիռը 40—50 գրամ։ Պտուղը շատ մանր է՝ 6—7 մմ տրամագծով, 100 պտղի քաշը 26 գրամ է։ Ողկույզի վրա երբեմն պատահում են 2-5 լավ զարգացած և նորմալ մեծության կորիզավոր պտուղներ։ «Ծտի խաղողը» տնտեսական-տեխնոլոգիական տեսակետից առանձին արժեք չի ներկայացնում։

ՈՍԿԵՀԱՏ ՍՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Հայկական ՍՍՌ-ի այգեգործական հիմնական շրջաններում, կրով հարուստ, քարքարոտ, ավազակավային, թեթև, բաց-գորշագույն հողերի պայմաններում Ոսկեհատը շատ արժեքավոր և հեռանկարային սորտ է՝ խերես, մադերա և պորտվեյն տիպի գինիներ պատրաստելու համար։ Սրանից առանձնապես բարձրորակ գինիներ են ստացվում հարավային և հարավ-արևմտյան լանջերում։ Ուշ բերքահավաքի դեպքում սրանից ստացվում են նաև բարձրորակ հունգարական գինիներին նմանվող դեսերտի գինիներ։ Տեղական ստանդարտ սորտերի շարքում Ոսկեհատը, գինիների որակի տեսակետից, ամենայն իրավամբ գրավում է առաջին տեղը։ Ոսկեհատից պատրաստած գինիները մեծ հռչակ են ձեռք բերել ոչ միայն Հայկական ՍՍՌ-ում,

այլ և ՍՍՌՄ-ի այլ շրջաններում և խոշոր կենտրոններում։ Որպես բերքի և բարձրորակ գինու սորտ՝ Ոսկեհատն անպայմանորեն զարգացման մեծ հեռանկարներն ունի Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերական այգեգործական շրջաններում։ Այս սորտի արժանիքը նաև նրանումն է, որ բարձր որակի բերք է տալիս այնպիսի քարքարոտ, չոր հողերում—զառերում, որտեղ գյուղատնտեսական ուրիշ բույսեր մեծ դժվարությամբ են մշակվում։

Ոսկեհատի հիմնական թերություններն են՝

1. Սնկային հիվանդություններով (միլդյու, օիդիում), զանազան բորբոսանկերով և ողկուզակերներով ուժեղ վարակվելը և
2. Բերքատվության լրիվ շրջանին ուշ անցնելը։

Կլոնային սելեկցիայի և համապատասխան ագրոտեխնիկայի կիրառման, ինչպես և հիվանդությունների և վնասատուների դեմ ժամանակին պայքար կազմակերպելու միջոցով հնարավոր է զգալիորեն բարձրացնել Ոսկեհատ սորտի դիմացկունությունը հիվանդությունների և վնասատուների վերաբերմամբ։

Բերքատվության լրիվ շրջանին անցնելն արագացնելու համար անհրաժեշտ է Ոսկեհատի համար ընտրել համապատասխան ձևավորում և կիրառել դիֆերենցիալ էտ, ելնելով շրջանի կլիմայական և հողային պայմաններից։

Асланян Е. Е.

СОРТ ВИНОГРАДА ВОСКЕАТ

Проведено детальное изучение ведущего в Армянской ССР сорта винограда Воскеат* (старое название Харджи) в ботаническом, агробиологическом и хозяйственно-технологическом отношениях. Все разделы данной работы иллюстрированы цифровыми данными и соответствующими таблицами.

Воскеат—древнейший и вместе с тем самый распространенный сорт в Арм. ССР. Он занимает почти 1/3 площади всех виноградных насаждений Республики.

Цветок гермафродитный. Грозди средней величины, ширококонические, очень плотные. Ягоды средней величины, круглые (иногда ягоды деформируются от взаимного давления в грозди), беловато-желтые, на солнечной стороне золотистого или янтарного цвета, кожица непрочная, мякоть нежная, сочная, очень сладкая (сахаристость 24—26% и выше). Количество семян в ягоде чаще 3.

Воскеат высоко-качественный винный сорт, дает прекрасный материал для крепких вин типа херес, мадера и портвейн. В Котайкском районе он идет на выделку столовых вин.

Особенно высокого качества вина получаются при культуре Воскеат на

*) „Воскеат“ в переводе с армянского языка означает золотое зерно.

богатых известью, каменистых, песчанно-глинистых и легких светло-бурых почвах. При поздних сборах из Воскеат получаются оригинальные десертные вина, напоминающие токайские (Октемберянский район).

По качеству винной продукции среди стандартных аборигенных сортов Воскеат по праву занимает первое место.

Как урожайный и высококачественный винный сорт Воскеат безусловно имеет широкие перспективы развития в основных виноградарственных районах Арм. ССР.

Основные дефакты Воскеата—1) сильная поражаемость грибными болезнями (милдью, оидиум) и гроздевой листоверкой, 2) позднее вступление в пору полного плодоношения (на 7—8 году после посадки).

Применением клоновой селекции и дифференцированной агротехники указанные дефекты возможно устранить.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Андроников И. З.* Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии. Отдельный оттиск из VI выпуска „Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе“ Тифлис, 1896 г.
2. *Асланян Е. Е.* Высокое качество обрезки виноградных кустов (колхоз „Пайкар“ Армянской ССР). За высокие урожаи винограда. Всесоюзная Сельско-хозяйственная Выставка. Сельхозгиз, Москва, 1940 г.
3. *Баллас М.* Виноделие в России (историко-статистический очерк), часть III Восточное Закавказье. Издание Департамента Земледелия СПБ, 1897 г.
4. *Башинджагян С. З.* Материалы по изучению виноградного хозяйства Азербайджана, Ганджинский и Бакинский районы. Народный Комиссариат Земледелия АССР, Баку, 1930 г.
5. *Виноградарство Армянской ССР по данным Всесоюзной переписи* 1940 года. Управление народно-хозяйственного учета Армянской ССР, изд. УНХУ Арм. ССР, Ереван, 1941 г.
6. *Вясниовский В. И.* Ампелографическое описание главнейших сортов винограда Эриванской губернии. Вестник виноделия 1911 г. №№ 7, 9, 11.
7. *Всесоюзная Сельскохозяйственная Выставка.* Павильон Виноградарства и Виноделия. Путеводитель, Сельхозгиз, 1940 г.
8. *Девицкий В.* Садоводство в гор. Эривани. Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Выпуск XXII, отдел II, Тифлис 1897 г.
9. *Девицкий В.* Краткая характеристика садоводства на Араратской равнине. Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Выпуск XXV, отдел 1, Тифлис 1898 г.
10. *Лазаревский М. А.* Методика ампелографических описаний. Труды Закавказского Института Виноградарства и Виноделия. Тбилиси, 1936 г.
11. *Негруль А. М.* Эволюция культурного винограда. „Природа“. Популярный естественно-исторический журнал, издаваемый Академией Наук СССР, № 4, 1940 год.
12. *Роллов А. Х.* Материалы для ампелографии Кавказа. Выпуск II. Закавказские сорта винограда. Эриванская губерния. Изд. Кавказского филлоксерного Комитета. Тифлис, 1901 г.

Մեր փորձերի համար, որպես պատվաստակալ ծառայեցին Խարջի ծիրանենու մեկ տարեկան տնկիները, իսկ որպես պատվաստացու Աղջանաբաթ ծիրանենու սորտի միևնույն այգում աճող 5 հատ ծառից վերցրած կտրոնները։ Կտրոնները բոլորն էլ վերցրել էինք սաղարթի միջին մասից։ Աչքապատվաստը կատարեց միևնույն անձնավորությունը։

Հազարան շապիկից ստացված թելը, որպես աչքապատվաստի կապման նյութ գործածելու և այն համեմատության մեջ դնելու նպատակով, մենք մեր փորձերը դրինք հետևյալ վարիանտներով։

500 հատ աչքապատվաստ կապվեց ռաֆիի թելով
500 « « « ճիլոպով
500 « « « կանեփի թելով
500 « « « թարմ հազարան շապիկից ստացված թելով
500 « « « 3 օր արևի տակ մնացած հազարան շապիկից ստացված թելով։

Փորձերը դրվեցին 1942 թվի սեպտեմբերի 1-ին, 2-ին և 3-ին։ Աչքապատվաստը կատարելուց 3 օր հետո, այսինքն՝ սեպտեմբերի 5-ին կատարեցինք դիտողություն։ Դիտողությունները ցույց տվեցին, որ ճիլոպով և կանեփի թելով կապված աչքապատվաստների կապի 25 տոկոսը թուլացել էր,

իսկ հազարան շապիկի և ռաֆիի թելով կապված աչքապատվաստների կապը մնացել էր նույնությամբ։ Սեպտեմբերի 9-ի գիշերն ամպամած էր և տեղացել էր մի փոքր անձրև, որին հաջորդեց տաք արևոտ եղանակ։ Մենք սեպտեմբերի 10-ին նորից դիտողություն կատարեցինք։ Այս անգամ դիտողությունը ցույց տվեց, որ ճիլոպով և կանեփի թելով կատարված աչքապատվաստների կապի թուլացումը հասել էր մինչև 35—45 տոկոսի։ Ռաֆիի և հազարան շապիկի թելերով կապվածները մնում էին նույնությամբ։ Բացի դրանից, ճիլոպով կապվածների մեջ նկատվեցին նաև փտածներ ու կտրվածներ։ Վերջապես, սեպտեմբերի 15-ին մենք կատարեցինք աչքապատվաստների կապի թուլացում և սեպտեմբերի 20-ին նորից հաշվառում կատարեցինք, որը ցույց տվեց, որ ճիլոպով կապված աչքապատվաստների կպչողականությունը հասնում է 65 տոկոսի, կանեփի թելով կապվածներինը՝ 55 տոկոսի, ռաֆիի թելով կապվածներինը՝ 95 տոկոսի, թարմ հազարան շապիկով կապվածներինը՝ 95,4 տոկոսի, արևի տակ մնացած հազարան շապիկով կապվածներինը՝ 96 տոկոսի։

Բացի մեր այս փորձերից, կոլխոզի տնկարանում մեր ղեկավարությամբ կոլխոզնիկները հազարան շապիկով կապեցին 8000 պատվաստված տնկի, որոնց կպչողականության տոկոսը հասնում էր 90-ի։ Վերոհիշյալ փորձերը կրկնվեցին Երևանի պայմաններում 1946 թվին։ Արդյունքները բերված են հետևյալ աղյուսակում։

Կապման նյութի տեսակները	1942 թ.		1946 թ.	
	Թուլացած կապերի %	կպչողականության %	Թուլացած կապերի %	կպչողականության %
Ճիլոպ	35	65	30	70
Կանեփի թել	45	55	35	65
Ռաֆիի թել	0	95	1	94
Թարմ հազարան շապիկ	0	95,4	1	96
Արևի տակ մնացած հազարան շապիկ	0	96	0	97

Աղյուսակից երևում է, որ հազարան շապիկը որպես կապման նյութ աչքապատվաստի համար, ավելի լավ արդյունք է տալիս, քան մնացած տեսակները։

Ելնելով վերոհիշյալ տվյալներից կարելի է գալ հետևյալ նախնական եզրակացության.

1. Հազարան շապիկից ստացված թելով կապված աչքապատվաստների

կպչողականության տոկոսն ավելի բարձր է, քան ճիլոպով, կանեփի և ռաֆիի թելով կապվածներինը։

2. Հազարան շապիկն անհամեմատ ավելի ամուր և փափուկ է, բացի դրանից, այն ավելի հեշտ ու էժան կարելի է ձեռք բերել, քան ճիլոպը։

3. Հազարան շապիկից ստացված թելային մասսան իր ամրությամբ բոլորովին հետ չի մնում ռաֆիի թելից և ընդհակառակը, խոնավության վերաբերմամբ ավելի դիմացկուն է։ Ընդհանրապես ռաֆիի թելից պետք է հրաժարվել, քանի որ նրա ներմուծումը կապված է մեծ քանակությամբ վալյուտա ծախսելու հետ։

4. Հազարան շապիկից ստացված թելը կարող է ունենալ լայն կիրառում մեր կոլխոզային և պետական տնկարաններում, եթե համապատասխան օրգանները արժանի ուշադրություն դարձնեն այդ թելը արտադրության մեջ ներդնելու վրա։

5. Հազարան շապիկից ստացված այդ թելային մասսայից գործարանային վերամշակման միջոցով կարելի է նաև զանազան տեսակի կտավներ ստանալ։

6. Հազարան շապիկի և ընդհանրապես Lonicera-յի ցեղի ուսումնասիրության վրա պետք է ամենալայն ուշադրություն դարձնեն մեր բուսաբանական գիտահետազոտական ինստիտուտները։

7. Քանի որ հազարան շապիկը շատ հեշտությամբ բազմանում է մացառներով, ուստի ամեն մի կոլխոզ կամ սովխոզ իր տնկարանում կարող է ունենալ հազարան շապիկի բազմացման առանձին հողակտոր։

А. Е. Маркарян

НОВЫЙ ВИД ОБВЯЗОЧНОГО МАТЕРИАЛА ДЛЯ ОКУЛЯНТОВ

В 1942 г. мы обратили внимание на куст, растущий в лесах Азизбековского района и назвавшийся по местному азаран шапик (что по-русски означает тысяча рубашек). При определении этот куст оказался Lonicera iberica из сем. Caprifoliaceae. Это растение примечательно тем, что под корой имеет 5—8 слоев волокнистой массы, легко отделяющейся от стебля.

Волокнистая масса получается из стеблей азаран шапика мягче и крепче, чем мочало и ни в чем не уступает рафии.

В 1942 г. в питомнике Азизбековского района в селе Гер-Гер мы организовали испытание волокнистой массы, полученной от азаран шапика в качестве обвязочного материала для окулировки. Опыт проводился в пяти вариантах по 500 сеянцев в каждом. Для обвязки применялись: рафия, мочало, свежий азаран шапик, азаран шапик, находившийся 3 дня на солнце, шпагат. Опыты были повторены в условиях Еревана в 1946 г. Результаты опытов показали, что мочало дает приживаемость окулировок на 65 — 70%, шпагат из конопли на 55—65%, рафия на 94—95%, а азаран шапик на 96—97%. На основании приведенных данных можно сделать следующие выводы:

1. Окулировки, при которых обвязочным материалом служило волокно азаран шапика, дали приживаемость значительно выше, чем при остальных видах обвязочного материала.

2. Волокнистая масса, получаемая от азаран шапика, мягче и крепче, чем мочало и ничем не уступает рафии, кроме того она дешевле и доступнее остальных видов обвязочного материала.

3. Необходимо широко внедрить волокно азаран шапика в производство в качестве обвязочного материала и тем самым освободиться от импорта рафии из-за границы.

4. Поскольку азаран шапик легко размножается порослью, то в каждом питомнике можно выделить отдельный участок для размножения этого растения с целью получения обвязочного материала.

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. *Урушадзе Д. К., Алипрандини Б. В.* Подвязочный материал для окулировки цитрусовых. Журнал „Советские субтропики“ № 3, 1937 г.
2. *Болохонов И. В., Курындин И. И.* и другие „Плодоводство“. 1939 г.
3. *Маргарян А. Е.* Вегетативное размножение тунга. Журнал „Советские субтропики“, № 2 1938 г.
4. *N. Harold Hume.* The cultivation of citrus fruits 1934, pp 165—179.

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ.
Պտղաբուծության ամբիոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных трудов

Հ. Թումանյան

ԵՆԹԱՍԱՊՈՆԱՅԻՆ ՍՈՒՁԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՆՍԵԿՏԻՍԻԴ ԼՎԻՃՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՁՎԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեր պայմաններում լվիճները հանդիսանում են մի շարք պտղատու ծառերի և դաշտային կուլտուրաների գլխավոր վնասատուներ: Դրանք բոլորից շատ վնաս են պատճառում կորիզավոր պտղատու ծառերին, հատկապես դեղձենուն, նշենուն, ծիրանենուն, սալորենուն:

Լվիճների բազմաթիվ տեսակների ձվերը ձմեռում են պտղատու ծառերի և թփերի վրա: Վաղ գարնանը, երբ ծառերի մեջ սկսվում է հյութաշարժը և նրանց բողբոջները ուռչում են, լվիճների ձմեռող ձվերից դուրս են գալիս սերնդահիմնադիրները, իսկ հետագայում նաև կուսածին էգերը, որոնք և սկսում են ծծել բողբոջների և մատղաշ տերևների հյութը: Դրա հետևանքով տերևներն արագ ձևափոխվում են, գանգրոտվում, ոլորվում, կուչ գալիս և չորանում: Լվիճները մնալով այդ ձևափոխված, գանգրոտված տերևների մեջ դժվարությամբ են ենթարկվում կոնտակտ թույների ազդեցությանը: Ինչ վերաբերում է դեղձենու ցողունային լվիճին, ապա դուրս գալով ձվից, նա անցնում է բարակ ճյուղերի վրա, և այնտեղ էլ նրա դեմ գործադրվող քիմիական կոնտակտ թույները մեծ էֆեկտ չեն տալիս, քանի որ այստեղ էլ տերևներն են խանգարում թույնը լվիճների վրա թափվելուն:

Պտղատու ծառերը լվիճներից պաշտպանելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ոչնչացնել նրանց ձվերը: Լվիճները աշնանը իրենց ձվերը դնում են ծառերի բողբոջների հիմքում, բարակ ճյուղերի կամ բնի վրա: Նրանց ձվադրումը սովորաբար տեղի է ունենում տերևաթափի նախօրյակին: Լվիճների ձվերը փոքր են՝ 0,4—2 միլիմետր երկարությամբ: Սկզբնական շրջանում նրանք լինում են կանաչ գույնի, իսկ հետո սևանում են: Լվիճների ձվերի դեմ պայքարը լավ էֆեկտ է տալիս, եթե այն տարվում է տերևաթափից անմիջապես հետո, քանի որ այդ ժամանակ ձվերի խորիոնը դեռևս կոշտացած չի լինում:

Լվիճների դեմ պայքարելու համար մինչ այժմ առաջարկվում էր 5—7

տոկոսանի հանքայուղային էմուլսիա, կամ պոլիսուլֆիդ կալցիումի 5 տոկոսանի լուծույթը։ Այս օվիսիդները լայն գործադրման մեջ չեն մտել իրենց դժվար ճարվելու, պատրաստման եղանակի բարդության և սրսկելիս ծառերի բողբոջների վրա որոշ չափով այրվածքներ առաջացնելու պատճառով։ Գյուղատնտեսական Ինստիտուտի բույսերի պաշտպանության ամբիոնը 1942—1943 թվերից զբաղվել է լվիճների և նրանց ձվերի դեմ պայքարելու նոր, էժան, բարձր տոքսիկականություն ունեցող օվիսիդների որոնումով, օվիսիդներ, որոնք հնարավոր լինի ստանալ տեղական արտադրության թափուկներից։ Այդ նպատակով մի շարք այլ նյութերի շարքում փորձարկվեցին և օճառի գործարանների թափուկները՝ ենթասապոնային սուզակները (ПОДмыльные щелска):

Ենթասապոնային սուզակները 1937 և 38 թվերին մանրամասն ու բազմակողմանիորեն ուսումնասիրվել են Միջին Ասիայի բույսերի պաշտպանության կայանի կողմից, որից հետո այդ նյութերը լայն կիրառության մեջ մտան բամբակենու ոստայնատիզի և լվիճների դեմ պայքարելու համար։

1938 և 39 թվերին միայն Ուզբեկստանում այդ նյութերով պայքարել են բամբակենու ոստայնատիզի և լվիճների դեմ 50—80 հազար հեկտար տարածության վրա։

Նկատի ունենալով ենթասապոնային սուզակների բարձր տոքսիկականությունը, նրանց մեծ ռեսուրսները և էժանությունը, ՍՍՌՄ-ի Հողագործության Մինիստրությունը 1939 թ. մտցրեց նաև այդ թույնի կիրառումը բամբակենու վնասատուների դեմ պայքարելու համար, սակայն այդ նյութերը, որպես լվիճների ձվերի դեմ պայքարելու միջոց, ոչ ոք չի փորձարկել։

Ենթասապոնային սուզակները մազութանման, կեղտաշագանակագույն, սապոնի սուր հոտով հեղուկ են։ Ստացվում են սապոնը եփելու պրոցեսում։ Ըստ Միջին Ասիայի բույսերի պաշտպանության կայանի տվյալների, սրանք պարունակում են 72—86 տոկոս ջուր, 3—6 տոկոս ալկալիներ, 3—7 տոկոս սեղանի աղ, 7—8 տոկոս օրգանական տարբեր նյութեր, 0,7—4,8 տոկոս գլիցերին, սպիտակուցներ, ձյութ և այլ նյութեր։ Վնասատու լվիճների ձվերի վրա ազդող հիմնական կոմպլեքսը ենթասապոնային սուզակների մեջ հանդիսանում են հիմքերը, սեղանի աղը, օրգանական նյութերի մնացորդները։

Երևանի Ջեթ-Օճառ գործարանում մեծ քանակությամբ ենթասապոնային սուզակներ են ստացվում, որոնք ոչ մի կիրառություն չունենալու հետևանքով թափվում են։

Դոցենտ Ե. Մովսեսյանի կատարած անալիզները ցույց տվին, որ այդ սուզակներն պարունակում են 2,56 տոկոս NaOH (ծավալային), 1,34 տոկոս Na_2CO_3, 7,8 տոկոս օրգանական միացություններ։ Տեսակարար կշիռն է 1,096։ Վերոհիշյալ բաղադրությունը տարբեր նմուշներում որոշ չափով կարող է տատանվել։

Մեր փորձնական աշխատանքի համար տարբեր տոկոսանի լուծույթներ ստանալու նպատակով գոլորշիացնելու միջոցով խտացրինք գործարանից ստացված 2,56 տոկոս հիմնայնություն ունեցող սուզակները։ Այդ կոնցենտրատը ունեցավ 16,55 տոկոս հիմնայնություն ըստ սոդայի (Na_2CO_3): Ստացված կոնցենտրատից այնուհետև պատրաստեցինք 1-ից մինչև 10 տոկոս հիմք պարունակող լուծույթներ։ Այդ լուծույթների ինսեկտիսիդային հատկությունները ուսումնասիրելու համար, փորձեր կատարեցինք ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Երկրագործական Ինստիտուտի Երևանում գտնվող այգում և Գյուղատնտեսական Ինստիտուտի՝ Քանաքեռի ուսումնական տնտեսությունում։ Սրսկումները կատարել ենք դեղձենու ցողունային լվիճի (Pterochloroides persicae Chol) ձվերի գաղութների վրա։ Մեր փորձերում վերցրինք կոնցենտրացիայի 10 վարիանտ՝ 1 տոկոսից մինչև 10 տոկոս խտությամբ։ Յուրաքանչյուր վարիանտի համար վերցրինք 3 փորձնական և մեկ կոնտրոլ ծառ։ Ընտրեցինք ծառեր, որոնց վրա մեծ քանակի դեղձենու ցողունային լվիճի ձվերի գաղութներ կային։ Կոնտրոլ ծառերը նույնպես խիստ վարակված ծառերից էին՝ սրսկվող ծառերի կողքին։ Նույն մեթոդով փորձերը կրկնել ենք և՛ Երևանում և՛ Քանաքեռի տնտեսությունում։ Սրսկումները բոլոր դեպքերում կատարել ենք ավտոմաքս սրսկիչով անձամբ և այնպես, որ լավ թրջվել են ձվերի բոլոր գաղութները։ Սրսկումները կատարել ենք Երևանի պայմաններում ապրիլի 9-ին, 10-ին և 11-ին, իսկ Քանաքեռի տնտեսությունում ապրիլի 19-ին։

Փորձերի կատարման շրջանում եղանակը խիստ փոփոխվեց, օդի ջերմությունը խիստ ընկավ և ապրիլի 10-ի գիշերը նույնիսկ ջուրը սառեց։ Փորձերի արդյունքները Երևանում հաշվի առանք, երբ կոնտրոլ ծառերի վրա ձմեռող ձվերից ապրիլի 13-ին դուրս եկան լվիճները։

Արդյունքները ցույց տվին, որ 1 տոկոս հիմնայնություն ունեցող լուծույթ սրսկելիս ոչնչանում է ձվերի 50—70 տոկոսը, 1,5 տոկոսի դեպքում 96—100 տոկոսը, իսկ 2 տոկոս և ավելի խիտ լուծույթները 100 տոկոսով ոչնչացրին ձվերը։ Պետք է շեշտել, որ անգամ 10 տոկոսանի լուծույթը այրվածքներ չառաջացրեց բողբոջների և ընձյուղների վրա։

Երկու տոկոսի լուծույթով սրսկված ծառերի վրա ձմեռող ձվերից ոչ մի լվիճ դուրս չեկավ։ Ձվերի այն գաղութները, որոնք սրսկված էին 2 և ավելի տոկոսանի հեղուկով, սրսկելուց հետո երկրորդ օրը բոլորը չմշկվել էին, կուչ էին եկել և մնացել միայն ձվերի չոր խորիոնները։ Հավանական է, որ 2 և ավելի տոկոս հիմնայնություն ունեցող ենթասապոնային սուզակների լուծույթները ձվից խլում են նրա միջի ջուրը, որի հետևանքով ձուն կորցնում է իր կենսունակությունը։ Ապրիլի 13—14-ին նկատվեց, որ ձվերի գաղութներից լվիճներ դուրս եկան կոնտրոլ դեղձենիների և այն դեղձենիների վրա, որոնք սրսկված էին միայն 1,5 տոկոսից թույլ խտություն ունեցող լուծույթով։ Վերոհիշյալ փորձերից եզրակացնում ենք, որ 1,5—2 տոկոս հիմնայնություն ունեցող ենթասապոնային սուզակների լուծույթները 100 տոկոսով ոչնչացնում են դեղձենու լվիճների ձմեռող ձվերը։

Մեր կարծիքով սրսկումներն է՛լ ավելի լավ էֆեկտ կտան, եթե կատարվեն աշնանը, լվիճների ձվադրումն ավարտելուց անմիջապես հետո, այսինքն տերևաթափի շրջանում, որովհետև այդ ժամանակ ձվի խորիոնը դեռ կոշտացած չի լինում և շրջապատի ջերմությունը բարձր է։ Իսկ որքան օդի

ջերմությունը բարձր լինի և ձվի խորիոնը նուրբ, այնքան սրսկած լուծույթները բարձր էֆեկտ կտան։

Ենթասապոնային սուզակները լավ են ազդում նաև իրենց՝ լվիճների վրա։

Մեր կատարած փորձերի արդյունքներից պարզվեց, որ դեղձենու ցողունային լվիճների վրա կործանիչ ազդեցություն են թողնում 0,5 և ավելի բարձր տոկոսի հիմնայնություն ունեցող լուծույթները։ Լվիճների դեմ սրսկումները կատարել ենք ապրիլի 23-ին և 24-ին։ Չնայած, որ այդ ժամանակ տերևները շատ մատղաշ էին, սակայն ոչ մի այրվածք նրանց վրա չառաջացավ, անգամ 1,5 տոկոս հիմնայնություն ունեցող լուծույթ սրսկելու դեպքում։ Դեղձենու տերևային լվիճների՝ Myzodes persicae Sul. Anuraphis helichrysi Kalt, Anuraphis persicae Fonsc, Hyalopterus pruni F. վրա ուժեղ ազդում է նաև 0,4 տոկոս հիմնայնություն ունեցող լուծույթը։ Այսպիսով կարելի է հանձնարարել կենդանի լվիճների դեմ պայքարը տանելու 0,4—0,5 տոկոս հիմնայնություն ունեցող ենթասապոնային սուզակների լուծույթով։

Եզրակացությունը պարզ է։ Ենթասապոնային սուզակները հանդիսանում են լվիճների և նրանց ձվերի դեմ պայքարելու լավ ինսեկտիսիդ։ Երևանի Ջեթ-Օճառի գործարանը լրիվ ծանրաբեռնվածության դեպքում, օրեկան դուրս է թափում 8—9 հազար լիտր ենթասապոնային սուզակ, որը պարունակում է 4,5—5 տոկոս հիմնայնություն ըստ սոդայի։ Եթե հաշվենք, որ գործարանը տարվա մեջ աշխատում է 300 օր, ապա առաջացած ենթասապոնային սուզակների տարեկան քանակը կը հասնի 900.300—2,700,000 լիտրի (հեղուկ)։ Այս քանակի ենթասապոնային սուզակը բավական է 7,800 հեկտար պտղատու այգու աշնանային կամ 20,000 հեկտար գարնանային սրսկումներ կատարելու համար։ Այդ նշանակում է, որ այս միանգամայն ձրի ինսեկտիսիդն օգտագործելով՝ մենք տարեկան կխնայենք 160,000 կիլոգրամ օճառ և 80,000 կիլոգրամ անաբազին կամ նիկոտին սուլֆատ, որոնք մեր ժողովրդական տնտեսության մեջ կարող են օգտագործվել այլ նպատակների համար։ Այդ գործը կազմակերպելու համար առանձին մեծ ծախս կամ ներդրում չի պահանջվում։ Անհրաժեշտ է, որ այդ ենթասապոնային սուզակներն առանձին խողովակներով տարվեն մի փոքր հողամասի վրա, որտեղ պետք է քանդել միմյանց հաղորդակից մի շարք փոսեր։ Այդ փոսերի մեջ կուտակվելով՝ հեղուկի ջրի մեծ մասը կը ծծվի հողի մեջ կամ կգոլորշիանա ու դրանով կը ստացվի թանձր և բարձր հիմնայնություն պարունակող խիտ մասսա։ Թանձրացած այդ նյութը կարելի է լցնել թիթեղյա կամ փայտյա տակառների մեջ ու փոխադրել նրա գործադրության վայրերը։ Այս դյուրին աշխատանքը կարող է կատարել թե՛ գործարանը և թե՛ Գյուղատնտեսության Մինիստրության համապատասխան բաժինը։ Ավելի հեշտությամբ և արագ այս գործը կարող է կազմակերպել ՀՍՍՌ-ի Սննդի Մինիստրությունը, որին պատկանում է Ջեթ-Օճառ գործարանը, մանավանդ այն պատճառով, որ Կոնսերվտրեստի և Արարատ տրեստի հազարավոր հեկտար պտղատու այգիները կարելի է սրսկել այդ սուզակներով՝ մինչև այժմ օգտագործվող մեծ մասամբ թանկարժեք ու դեֆիցիտային նյութերի փոխարեն։

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ
Էնտոմոլոգիայի ամբիոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных трудов

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՐԵՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱԿՏՈՒԱԼ ԹԹՎԱՅՆՈՒԹՅԱՆ (Рн-Ի) ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԼՅՈՒՐԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Մենք նպատակ ենք դրել ուսումնասիրել Հայաստանի ցորենների մի քանի սորտերի ընդհանուր և ակտուալ թթվայնությունը, մոխրի քանակը և ցույց տալ, թե ինչպիսի ազդեցություն են թողնում այդ ֆակտորները ալյուրի (և հացի) որակի վրա։ Հայաստանի ցորենների այս հատկությունները և դրանց ազդեցությունը ալյուրի որակի վրա ոչ ոքի կողմից չի ուսումնասիրված։

Մեր աշխատանքներում, որպես ուսումնասիրության օբեկտ, ծառայել են դոկտոր պրոֆ. Գ. Խ. Աղաջանյանի փորձում մասնակցած ցորենների մի քանի սորտերը։ Ցանքը կատարվել է 1943 թվի աշնանը Լենինականում և Եղվարդում։

Մեթոդիկան

Խոնավության որոշումը.—Ալյուրի չորացումը պահանջում է երկար ժամանակ, երբեմն 12—15 ժամ։ Ցածր որակի ալյուրի չորացումը պահանջում է ավելի երկար ժամանակամիջոց։ Ըստ տարբեր հեղինակների, չորացումը պետք է տարվի տարբեր ջերմաստիճաններում (100, 107, 115 աստիճան)։ Խոնավության որոշման համար գոյություն ունեն մի շարք մեթոդներ, ինչպես օրինակ, Ցորենտի, Հոֆմանի, Բրոուն-Դյուվելի, ԳԵԽԻ-ի (Государственная Единая Хлебная Инспекция)։ Մեր այս աշխատանքի ժամանակ ընտրել ենք Մենդելեևի անվան Քիմիկո-տեխնոլոգիական Ինստիտուտի ալյուրի ուսումնասիրության լաբորատորիայի մեթոդը։ Խոնավությունը որոշելու համար վերցրել ենք հացահատիկի նմուշից երկու գրամ բուքսայի մեջ և էլեկ-

տրական չորացնող պահարանում 120—130 աստիճանի տակ չորացրել մինչև
«հաստատուն կշիռը»:

Մոխրի որոշումը.—*Ճենապակե տիգլը կափարիչի հետ միասին մոտ մեկ
ժամ շիկացրել ենք, ապա տեղավորել H_2SO_4 պարունակող էքսիկատորի մեջ,
մինչև որ տիգլի ջերմաստիճանը հավասարվի սենյակի ջերմաստիճանին, որից
հետո կշռել ենք, ապա նորից շիկացրել մոտ 20 րոպե, սառցրել և կշռել: Այս
գործողությունը կրկնել ենք այնքան անգամ, մինչև ստացվել է հաստատուն
կշիռ: Տիգլի մեջ անալիտիկ կշեռքի վրա կշռված է եղել յուրաքանչյուր նմու-
շից ճիշտ մեկ գրամ, որը չորացնող պահարանում չորացնելուց հետո տեղա-
վորել ենք մուֆելային վառարանի մեջ և շիկացրել մինչև հաստատուն կշռի
ստացումը:*

Ընդհանուր թթվայնության որոշումը.—*Ալյուրի ընդհանուր թթվայնությու-
նը որոշելու համար գոյություն ունեն մի շարք մեթոդներ, ինչպես օրինակ՝
Նեյմանի, Գենի-ի, Արպինի, Շինգլերի և այլն: Այս մեթոդներից ընտրել ենք
Նեյմանի մեթոդը՝ որոշ նպատակահարմար ձևափոխություններով: Հետազոտ-
վող օդային չոր ալյուրից վերցրել ենք անալիտիկ կշեռքի վրա ճիշտ կշռված
մեկ գրամ նմուշ, տեղավորել ապակյա խցանով գլանի մեջ, ավելացրել
20 cm^3 թորած ջուր, տեղավորել մեխանիկական խառնիչի մեջ և 15 րոպե
խնտենսիվ խառնել, ապա ֆիլտրել և ֆիլտրատը ֆենոլֆտալեինի ներկայու-
թյամբ տիտրել NaOH-ի N/10 լուծույթով, ստացված արդյունքը վերահաշ-
վարկել ենք նախ 100 գրամ օդային չոր և ապա բացարձակ չոր ալյուրի
նկատմամբ (տիտրացիայի համար կիրառել ենք միկրոբյուրետկա և միկրո-
պիպետկա):*

Ակտուալ թթվայնության որոշումը.—*Մեր աշխատանքներում ակտուալ
թթվայնության (Pн-ի) որոշումները տարել ենք էլեկտրոմետրիկ եղանակով:
Այս եղանակով որոշումներ կատարելու համար օգտագործել ենք Pн-ի որոշ-
ման կրկնակի խինհիդրոնային շղթան, կազմել ենք էլեմենտ և Պոգգենդորֆի
մեթոդով որոշել մեր կողմից կազմված էլեմենտի էլեկտրաշարժ ուժը: Ստաց-
ված արդյունքը տեղադրելով գոյություն ունեցող ֆորմուլայի մեջ, որոշել ենք
ալյուրի քաշվածքի Pн-ը (օգտագործել ենք «Ագրոնոմ» սիստեմի պոտեն-
ցիոմետրը):*

*Փորձի տեխնիկական մասը կատարել ենք հետևյալ կերպ: Ալյուրի նմու-
շից վերցրել ենք երկու գրամ, տեղավորել հղկված ապակե խցան ունեցող
գլանի մեջ, ավելացրել 20 cm^3 թորած ջուր, մեխանիկական խառնիչի մեջ
խառնել 15 րոպե և ֆիլտրել: Ֆիլտրատը լցրել ենք մեկ կիսաէլեմենտի մեջ,
ավելացրել ենք քիչ խինհիդրոն և թափահարել: Մյուս կիսաէլեմենտի մեջ
լցրել ենք հայտնի Pн ունեցող Վեյբելի բուֆերային լուծույթը (Pн=2,04),
ավելացրել խինհիդրոն և թափահարել: Այս երկու կիսաէլեմենտները ագար-
ագարյա սիֆոնի օգնությամբ միացրել միջանկյալ էլեկտրոլիտով (KCl-ի հա-
գեցած լուծույթ) լի փոքր փորձանոթի հետ: Էլեմենտը կազմելուց հետո պո-
տենցիոմետրի օգնությամբ որոշել ենք էլեմենտի էլեկտրաշարժ ուժը:*

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍ

Խոնավության որոշումը

Հատիկի խոնավությունը բավականին էական ցուցանիշ է, նա ազդում է ալյուրի ելի, մշակման տեխնիկայի վրա և հատկապես կարևոր նշանակություն ունի հացահատիկի պահպանման ժամանակ:

Հացահատիկը դաշտից հավաքելու մոմենտում նրա խոնավությունը բարձր է լինում և հատկապես խոնավ եղանակին: Այսպիսի պայմաններում խոնավությունը կարող է հասնել 20 տոկոսի և ավելի բարձր:

Բիոքիմիական տեսակետից ջուրը շատ մեծ դեր է խաղում: Բոլոր այն ֆիզիկոքիմիական պրոցեսները, որոնք տեղի են ունենում բջիջների մեջ, ուժեղ կերպով կապված են ջրի հետ: Շնորհիվ հատիկի մեջ եղած ջրի, նյութերը կարող են լուծվել: Այս դեպքում, ինչպես հայտնի է, էլեկտրոլիտները դիսսոցվում են իոնների, իսկ դրանցից մի քանիսը բիոքիմիական պրոցեսների ժամանակ խոշոր նշանակություն ունեն:

Ստորև բերում ենք ցորենի տարբեր պոպուլյացիաների խոնավությունը (ըստ մեր ուսումնասիրության):

Աղյուսակ 1

Ցորենի տարբեր սորտերի խոնավությունը տոկոսներով

Ցորենի սորտը	Խոնավությունը %%-ով
Կունդիկ (Լենինական)	12,94
Ալֆահատ Սպիտակ (Եղվարդ)	13,56
Ալֆահատ Կարմիր (Եղվարդ)	12,55
Սպիտակահատ (Լենինական)	11,35
Քոսի (Եղվարդ)	12,005
Սպիտակահատ (Եղվարդ)	12,28
Կամչատկա (Լենինական)	12,28
Գալգալոս (Լենինական)	11,55

Հաշվի առնելով, որ ցորենների պահպանման պայմանները նույնն են եղել, կարելի է եզրակացնել, որ ամենից քիչ ալյուրի ել տալիս է Սպիտակ Ալֆահատը և ամենից շատ՝ Սպիտակահատը (Լենինական) և Գալգալոսը: Սպիտակ Ալֆահատից ստացված ալյուրի Pн-ը ավելի արագ կփոքրանա և, ընդհակառակը, Սպիտակահատից (Լենինական) և Գալգալոսից պատրաստված ալյուրի Pн-ը ավելի դանդաղ կփոքրանա:

Մոխիրը

Հացահատիկի մոխիրը պարունակում է գլխավորապես հետևյալ էլեմենտները՝ K, Na, Ca, Mg, Fe, P, S, *փոքր (աննշան) քանակությամբ* Al, Mn, Cl, N *և այլն։ Հանքային նյութերի քանակը հացահատիկների սորտերի հատիկներում համեմատաբար հաստատուն մեծություն է։*

Հաճարի մոխիրը սովորաբար ավելի շատ է, քան ցորենի մոխիրը։ Գարնանացան ցորենն ավելի շատ մոխիր է պարունակում, քան աշնանացան ցորենը։ Հացահատիկի կենտրոնական մասը ավելի պակաս մոխիր է պարունակում, քան հատիկի արտաքին մասը, վերջինը հարուստ է նաև ճարպով, ազոտական միացություններով, թաղանթանյութով, շաքարով և ավելի աղքատ՝ օսլայով, իսկ կենտրոնական մասը՝ ընդհակառակը։

Աղյուսակ 2

Մոխրի պարունակությունը տոկոսներով

Ցորենի սորտը	*Մոխրի քանակը օդային չոր ցորենում տոկոսներով*	*Մոխրի քանակը բացարձակ չոր ցորենում տոկոսներով*
Կունդիկ	1,87	2,145
Ալֆանա Կարմիր	1,78	2.04
Սպիտակահատ (Լենինական)	1,77	1,995
Քոիկ	1.57	1,78
Սպիտակահատ (Եղվարդ)	1,80	2,045
Կամչատկա	1,93	2,20
Գալգալոս	2,05	2,325

Ակտուալ թթվությունը մեր կողմից որոշվել է մոխրի և հատիկների մեջ առանձին առանձին։

Մեր փորձերում ստացված մոխրի վրա ավելացրել ենք 20 cm³ *թորած ջուր, մոխիրը լավ մշակել ենք ջրով և ստացված լուծույթի* PH*-ը որոշել ենք պոտենցիոմետրիկ եղանակով։ Ջերմությունը եղել է 21 աստիճան* C *(Աղյուսակ 3)։*

Աղյուսակ 3

Մոխրի PH-ի որոշման արդյունքները

Ցորենի սորտը	*Մոխրի* PH*-ի մեծինը*
Կունդիկ	7.93
Ալֆանա Կարմիր	7,49
Սպիտակահատ (Լենինական)	7,56
Քոիկ	7.51
Սպիտակահատ (Եղվարդ)	7,59
Կամչատկա	6,99
Գալգալոս	7,42

Ցորենների մոխիրը թթու ֆոսֆատներ չի պարունակում, հետևաբար նա թթվային ռեակցիա չպետք է ունենա։ Այդ բանը ցույց են տալիս մեր անալիզները։ Ցորենի մոխրի PH*-ը միշտ 7-ից մեծ է, հետևապես նա միշտ ունի հիմնային ռեակցիա։ Մոխրի ջրային էկստրակտի* PH*-ի 7-ից մեծ լինելը մենք բացատրում ենք հետևյալով՝ ինչպես հայտնի է, մոխիրը պարունակում է բավականին զգալի չափով (մոտ 50 տոկոս) ալկալիական և հողալկալիական մետաղների օքսիդներ (*CaO, MgO, K_2O *և այլն), որոնք հանդես են գալիս աղերի ձևով։ Ջրում այդ աղերը՝ ենթարկվելով հիդրոլիզի՝ գոյացնում են հիմնային միջավայր։*

Կատարված փորձերից եզրակացնում ենք նաև այն, որ ոչ մի օրգանական կապ չկա ցորենից ստացված մոխրի տոկոսի և այդ մոխրի ջրային քաշվածքի PH*-ի մեծության միջև. ցորենի մոխրի տոկոսը կարող է քիչ լինել, իսկ մոխրի ջրային քաշվածքի* PH*-ը՝ ավելի մեծ և կամ ընդհակառակը։ Օրինակ՝ Քոիկի մոխրի տոկոսը—1,57 է, իսկ նրա ջրային քաշվածքի* PH*-ը՝ 7,51, այնինչ Գալգալոսի մոխրի տոկոսը—2,05 է, իսկ նրա ջրային քաշվածքի* PH*-ը—7,42, կամ Կամչատկայի մոխրի տոկոսը—1,93 է, իսկ նրա ջրային քաշվածքի* PH*-ը՝ 6,99։ Այս բանը մենք բացատրում ենք հետևյալով. երբ մոխրի մեջ հիմնային օքսիդները ավելի շատ են, քան թթվային օքսիդները, մոխրի ջրային քաշվածքի* PH*-ն ավելի մեծ է, անկախ նրանից, որ մոխրի տոկոսն ավելի փոքր է։ Որոշելով երկու տարբեր ցորենների ընդհանուր մոխրայնությունը և մոխրի ջրային էքստրակտի* PH*-ը՝ կարելի է ասել, թե որ ցորենի մեջ ավել կամ պակաս չափով հիմնային և թթվային օքսիդներ են գտնվում։*

Հատիկի ակտուալ թթվայնությունը

Վերջին ժամանակները ավելի շատ նշանակություն է ստացել ջրածին իոնի կոնցենտրացիայի որոշումը։ Թթվայնության և հիմնայնության աստիճանի փոխարեն շատ հաճախ խոսում են ջրածին իոնի կոնցենտրացիայի մասին։ Էնզիմների ակտիվությունը մեծ մասամբ կախված է միջավայրի ակտուալ թթվայնությունից, այսինքը ջրածին-իոնի կոնցենտրացիայից։ Սոսընձանյութի փքվածությունը և ալյուրի թխվածքային հատկանիշները նույնպես կախված են ջրածին-իոնի կոնցենտրացիայից։ Ջրածին-իոնի կոնցենտրացիայի փոփոխումը առաջ է բերում համապատասխան փոփոխություն սոսնձանյութի փքվածության պրոցեսի մեջ։ Յուրաքանչյուր տեսակի ալյուրին համապատասխանում է ջրածին-իոնի կոնցենտրացիայի որոշակի մեծություն, որի ժամանակ խմորն ամենաբարձր թխվածքային հատկանիշներ է ունենում։

Ջրածին-իոնի կոնցենտրացիան որոշակի նշանակություն ունի նաև ալյուրի հասունացման պրոցեսի ժամանակ։ Հասունացման պրոցեսի ուսումնասիրությունը՝ կապված ջրածին-իոնի կոնցենտրացիայի հետ, թխվածքային տեխնիկայում, խմորի պատրաստման ժամանակ, գիտական հետաքրքրության հետ միասին ունի նաև պրակտիկ նշանակություն։ Ակտուալ թթվայնությունը ջրածնի դիսսոցված մասն է՝ արտահայտած գրամներով մեկ լիտր լուծույթում։

Ալյուրի պահպանման սկզբնական շրջանում PH*-ը մեծանում է (ալյուրը*

հաստատանում է), որից հետո Pн-ը սկսում է փոքրանալ, այսինքը՝ թթվայնու- թյունը մեծանում է, և երբ PH=5,4-ի, ալյուրն արդեն բորբոսնում է։

Ըստ Բերլիների՝ առողջ նորմալ ալյուրի Pн-ը 5,95-ից փոքր չպետք է լինի։ Եթե PH=5,85—5,5-ի, ալյուրը միջակ է համարվում և ունի թխվածքային նորմալ որակ։ 5,5-ից ցածր PH ունեցող ալյուրը համարվում է թթու և միշտ ենթակա է բորբոսման։ Ըստ Բերլիների՝ ալյուրի բորբոսման սահմանը համարվում է PH=5,4։ Որքան ալյուրը խոնավ է, այնքան շուտ է բարձրանում նրա թթվայնությունը (փոքրանում Pн-ը)։ Գործնականում կարելի է համոզվել, որ առողջ նորմալ ալյուրի PH=5,8—5,90-ի, և երբ PH=5,8-ից փոքր է, ապա ալյուրը պետք է համարել թթու։

Ակտուալ թթվայնությունը որոշելու համար յուրաքանչյուր ցորենի մանրվածքից վերցրել ենք ճիշտ երկու գրամ, տեղավորել գլանի մեջ, ավելացրել 20 cm^3 թորած ջուր, մեխանիկական խառնիչում խառնել 15 րոպե, որից հետո ֆիլտրել։ Լուծույթի Pн-ը որոշել ենք պոտենցիոմետրի օգնությամբ, ջերմությունը եղել է 22 աստիճան C։ Ստացված արդյունքները արտահայտված են ստորև բերված աղյուսակում։

Աղյուսակ 4

Հատիկի Pн-ը

Ցորենի սորտը	Pн-ը
Կունդիկ	6,01
Ալֆահատ Կարմիր	4.42
Սպիտակահատ (Լենինական)	5,23
Քոիկ	4,31
Սպիտակահատ (Եղովան)	3,84
Կամշատկա	4.47
Գալգալոս	3,94

Ստացված արդյունքներից կարելի է անել հետևյալ եզրակացությունը՝ Կունդիկից, Սպիտակահատից (Լենինական) ստացված ալյուրը համարվում է առողջ և նորմալ, իսկ մյուս ցորեններից ստացված ալյուրը համարվում է թթու։

Ակտուալ թթվայնությունից ելնելով կարելի է հետևյալ կերպ դասավորել մեր կողմից հետազոտված ցորենները։

1. Կունդիկը և Սպիտակահատը (Լենինական) թխվածքային տեսակետից տալիս են բարձր որակի ալյուր։

2. Ալֆահատը, Քոիկը և Կամշատկան տալիս են թխվածքային տեսակետից միջակ որակի ալյուր։

3. Սպիտակահատը (Եղովան) և Գալգալոսը թխվածքային տեսակետից տալիս են միջակ որակի ալյուր, բայց ստացված ալյուրը երկար ժամանակ չի կարելի պահել. համեմատած մյուսների հետ սրանց ալյուրը ավելի ենթակա են բորբոսման։

Ընդհանուր թթվայնության որոշումը

Ալյուրի ջրային քաշվածքն ունի թթվային ռեակցիա։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հացահատիկների մեջ աննշան քանակությամբ կան ազատ թթուներ՝ կաթնաթթու, մրջնաթթու։ Թթվայնությունը պայմանավորվում է ալյուրի հանքային նյութերի և օրգանական նյութերի բաղադրությամբ։ Հատիկի և սրանցից ստացված մթերքների մեջ միշտ գտնվում են H_3PO_4-ի աղերը։ Մոխրի մեջ թթու ֆոսֆատներ չկան, որովհետև նրա մեջ եղած հիմնային աղերը ամբողջովին չեզոքացնում են ֆոսֆորական թթուն։ Դրանով է բացատրվում այն, որ մոխրի ջրային քաշվածքը միշտ ունի հիմնային ռեակցիա։

Ալյուրի ջրային քաշվածքի մեջ ֆոսֆորական թթվի աղերը գոյանում են էնզիմների (ֆիտազ, ֆոսֆոտազ, լիպազ) ազդեցության տակ՝ օրգանական ֆոսֆոր պարունակող նյութերի քայքայումից։ Թթվայնության մեծ մասն ընկնում է հանքային թթու ֆոսֆատների վրա։ Բացի այս, ալյուրի մի քանի այլ նյութեր, ինչպես օրինակ յուղերը, օժտված են թթվային հատկությամբ։ Ալյուրի պահպանման ժամանակ յուղերը քայքայվելով գոյացնում են յուղաթթուներ (օլեինաթթու, պալմիտինաթթու)։ Մի քանի սպիտակուցների քայքայումից նույնպես գոյանում են նյութեր, որոնք ունեն թթվային հատկություն, օրինակ ամինոթթուները։ Բացի այս, օսլան և մյուս բարձր մոլեկուլային ածխաջրերը ընդունակություն ունեն կլանելու որոշ քանակությամբ կծուներ, որի հետևանքով տիտրացիայի ժամանակ թթվի քանակությունը ավելի մեծ է երևում։

Բարձր որակի ալյուրն ավելի քիչ թթվայնություն ունի, քան ցածր որակի ալյուրը, որը պարունակում է հատիկի ավելի շատ արտաքին մասեր։ Հաճարն ավելի շատ թթվայնություն ունի, քան ցորենը։

Ընդհանուր թթվայնությունը մենք ստուգել ենք հետևյալ ձևով՝ օդային չոր նմուշից վերցրել ենք ճիշտ մեկ գրամ, նմուշը տեղավորել ապակյա խցան ունեցող գլանի մեջ, ավելացրել 20 cm^3 թորած ջուր, մեխանիկական խառնիչում խառնել 15 րոպե, որից հետո ֆիլտրել և ապա ստացած ֆիլտրատը տիտրել NaOH-ի $N/_{10}$ լուծույթով, որի F=0,99։ Ստացված արդյունքները արտահայտված են № 5 աղյուսակում։

Ալյուրի թարմությունը բնութագրելու համար ստորև բերում ենք ԳՕՍՏ-ի թթվայնության մոտավոր նորմաները (Աղյուսակ № 6)։

Կատարված փորձերից կարելի է եզրակացնել, որ մեր փորձարկված ցորեններից ստացված թարմ ալյուրը ունի նորմալ թթվայնություն, և թխվածքային տեսակետից բարձր որակի է։ Այդ ցորեններից ստացված ալյուրը թթվայնության տեսակետից կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում է Կունդիկից, Սպիտակահատից (Լենինական), Քոիկից, Սպիտակահատից (Եղովան), Կամշատկայից և Գալգալոսից ստացված ալյուրը, որի ընդհանուր թթվայնությունը չի գերազանցում 2,5 աստիճանից։ Ալֆահատը կարելի է դասել երրորդ խմբի մեջ, որի թթվայնությունը հավասար է 3,7 աստիճանի և չի գերազանցում 4,5 աստիճանից։

Աղյուսակ 5

Ընդհանուր թթվայնությունը

Ցորենի սորտը	Ծախսված NaOH-ի №/10 լուծույթի քանակը ст^3-ով, F=0,99				Միջինը ճիշտ №/10 լուծույթի նկատմամբ	100 գրամ նմուշի համար ծախսված NaOH-ը ст^3-ով	
	1-ին նմուշ	2-րդ նմուշ	3-րդ նմուշ	Միջինը		օդաչոր նյութի նկատմամբ	բացարձակ չոր նյութի նկատմամբ
Կունդիկ	0,195	0,182	0,185	0,187	0,185	1,85	2,12
Ալֆահատ Կարմիր	0,360	0,325	0,330	0,338	0,334	3,34	3,7
Սպիտակահատ (Լենինական)	0,73	0,163	0,164	0,166	0,164	1,64	1,85
Քուռ	0,184	0,188	0,185	0,185	0,184	1,82	2,07
Սպիտակահատ (Եղվարդ)	0,140	0,138	0,136	0.138	0,137	1,37	1,56
Կամչատկա	0,176	0,175	0,173	0.174	0,172	1,72	1,96
Գալգալոս	0,178	0.182	0,182	0,181	0,182	1,82	2,06

Աղյուսակ 6

Ալյուրի սորտը	Նորմալ թարմություն ունեցող ալյուր	Բարձրացրած թթվայնություն ունեցող ալյուր	Բարձր թթվայնություն ունեցող ալյուր
Ցորենի ալյուր I	մինչև 2,5^0	2,5—3,0^0	Բարձր 3,0^0 ից
« « II	« 3,5^0	3,5—4,5^0	« 4,5^0 «
« « III	« 4,5^0	4.5—5,5^0	« 5,5^0 «
« « IV	« 5,5^0	6.5—7,5^0	« 7,5^0 «
Հաճարի ալյուր	« 5,0^0	6,0^0	« 6,0^0 «

Եթե ամփոփելու լինենք մեր կատարած փորձերը մեկ աղյուսակում, կստանանք

Աղյուսակ 7

Ցորենի սորտը	Խոնավության %-ը	Մոխրի %-ը օդաչոր ցորենում	Մոխրի %-ը բացարձակ չոր ցորենում	Մոխրի Pн-ը	Թթվայնության աստիճանը		Ցորենի Pн-ը
					Օդային չոր ցորենում	Բացարձակ չոր ցորենում	
Կունդիկ (Լենինական)	12,94	1,87	2,145	7,93	1,85	2,12	6,01
Ալֆահատ (Կարմիր)	12,55	1,78	2,04	7,49	3,34	3,70	4,42
Սպիտակահատ (Լենինական)	11 35	1,77	1,995	7,56	1,64	1,85	5,23
Քուռ (Եղվարդ)	12.005	1,57	1,78	7.51	1,82	2,07	4,31
Սպիտակահատ (Եղվարդ)	12,38	1,80	2,045	7,59	1,37	1,56	3,84
Կամչատկա (Լենինական)	12,28	1,93	2,20	6,99	1 72	1,96	4,47
Գալգալոս (Լենինական)	11,5	2,05	2,325	7,42	1,82	2,06	3,94

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարած փորձերի արդյունքները կարելի է գալ հետևյալ եզրակացության.

1. Հետազոտված ցորեններն ունեցել են նորմալ խոնավություն։

2. Ամենից քիչ ալյուրի ել տալիս է Սպիտակ Ալֆահատը և ամենից շատ Սպիտակահատը (Լենինական) և Գալգալոսը։

3. Սպիտակ Ալֆահատից ստացված ալյուրի Pн-ը ավելի արագ է պակասում, քան Սպիտակահատից (Լենինական) և Գալգալոսից ստացված ալյուրի Pн-ը։

4. Հետազոտվող ցորեններն ունեն նորմալ թթվայնություն։

5. Թթվայնության տեսակետից ցորեններից ստացված ալյուրը կարելի է բաժանել երկու խմբի.

1-ին խումբ—Կունդիկ, Սպիտակահատ (Լենինական), Քուռ, Սպիտակահատ (Եղվարդ), Կամչատկա և Գալգալոս։

2-րդ խումբ—Ալֆահատ։

6. Ակտուալ թթվայնությունից ելնելով՝ Կոնդուկից և Սպիտակահատից (Լենինական) ստացված ալյուրը պետք է համարել նորմալ, իսկ մյուս ցորեններից ստացված ալյուրը՝ թթու։

7. Կունդիկը և Սպիտակահատը (Լենինական) թխվածքային տեսակետից տալիս են բարձր որակի ալյուր, մյուս ցորեններից ստացված ալյուրն ունի միջին որակ (երբ հաշվի ենք առնում ցորենի Pн-ը)։

8. Սպիտակահատից (Եղվարդ) և Գալգալոսից ստացված ալյուրը (համեմատած մյուսների հետ) չի կարելի երկար ժամանակ պահել, որովհետև դրանց Pн-ը փոքր է, ուստի ավելի շուտ կենթարկվեն բորբոսման

А. Абраамян

ВЛИЯНИЕ ОБЩЕЙ И АКТУАЛЬНОЙ КИСЛОТНОСТИ (Рн) ПШЕНИЦ АРМЕНИИ НА КАЧЕСТВО МУКИ

Р Е З Ю М Е

Обобщая результаты исследования некоторых сортов пшениц Армении на влажность и кислотность, можно притти к следующим выводам.

1. Изученные нами сорта пшеницы имели нормальную влажность.

2. Наименьший выход муки дает сорт Белый Слфаат, наибольший—Спитакаат (Ленинакан) и Галгалос.

3. Рн муки Белого Слфаата понижается быстрее, чем муки сортов Спитакаат (Ленинакан) и Галгалос.

4. Изученные пшеницы имеют нормальную кислотность.

5. По кислотности муки изученные сорта пшеницы можно разбить на две группы:

I. Кундик, Спитакаат (Ленинакан), Крик, Спитакаат (Елгован), Камчатка и Галгалос.

II. Слфаат.

6. Исходя из актуальной кислотности, муку сортов Кундик и Спитакаат нужно считать нормальной, а остальных сортов—кислой.

7. Сорта Кундик и Спитакаат (Ленинакан) дают муку высокого хлебопекарного качества, а остальные сорта—среднего качества (когда принимаем во внимание Рн пшеницы).

8. Мука сортов Спитакаат (Елгован) и Галгалос по сравнению с мукой остальных сортов при хранении быстрее плесневеют.

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ
Ընդհանուր քիմիայի ամբիոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ
Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных трудов

А. С. Баграмян

ОБ ОДНОМ МЕТОДЕ ИЗМЕРЕНИЯ ТЕМПЕРАТУРЫ КОНТАКТА В ЧЕРВЯЧНОЙ ПАРЕ

Червячные редукторы в настоящее время являются наиболее удобным, дешевым и компактным средством для передачи энергии. Эта передача за последние 20—25 лет получила широкое распространение и успешно конкурирует с передачами при помощи цилиндрических и конических зубчатых колес. Причинами широкого распространения червячной передачи являются: 1) большой диапазон передаточного отношения, для которого встречаются значения $i=\frac{1}{3}-\frac{1}{500}$, 2)бесшумность и плавность работы, благодаря которым червячная передача занимает первое место среди всех систем зубчатых передач, 3) высокий к. п. д., достигающий значения $\eta=0,96-0,99$ и ряд других преимуществ.

Червячная передача столь же стара, как и передача зубчатыми колесами, о ней знал уже Паппа Александрийский (280—305 г. г.). Среди схем приводов, оставшихся от Леонардо Да-Винчи (1452—1519), находим схемы червячных пар.*)

В червячной передаче основным фактором, ограничивающим предельную мощность, оказывается нагрев. Несмотря на то, что нагрев имеет первостепенное значение в червячных передачах, этот вопрос в современной литературе разработан слабо.

Работа трения между поверхностями зубьев и витков червяка настолько значительна, что нагрев, вызываемый ею, часто достигает такой большой величины, что заставляет отказаться от применения данной передачи. Поэтому конструкторская мысль была занята изысканием путей для уменьшения трения. Конечно, лучшим разрешением этого вопроса будет замена трения скольжения трением качения. Идея эта не нова. Она была предложена еще в 1500 году знаменитым Леонардо Да-Винчи, но практическое осуществление получила только в конце XIX века в роликовой передаче Грисона. Однако, в силу

*) См. Добровольский В. А. Детали машин. 1945 г.

целого ряда недостатков эта передача не получила распространения и в настоящее время не применяется. Таким образом, попытки уменьшить трение между поверхностями зубьев и витков червяка не увенчались успехом. Нагревание в червячной передаче происходит настолько интенсивно, что основным фактором, ограничивающим предельную мощность, оказывается нагрев.

Таким образом, червячные редукторы по условиям ограничения нагрева передают меньшую мощность, нежели это допустимо по механическим качествам материала. Основным показателем нагрева червячного редуктора служит температура масла, и до сих пор исследователи при изучении нагрева червячных редукторов обычно занимались определением среднего значения температуры масла, в котором находится червячная пара.

Нам кажется, что для полного изучения нагрева червячного редуктора, одним из основных показателей должна служить и температура на поверхностях сопряжения червячной пары (температура контакта), как температура «очага»—источника тепла.

До сих пор еще при исследовании червячных редукторов фактор действительной температуры на поверхностях сопряжения в червячной паре обычно выпадал из рассмотрения.

Мы считаем, что для полного изучения нагрева червячных редукторов одним из основных показателей должна служить температура контакта в червячной паре. Износ в червячных передачах приносит большой ущерб нашему народному хозяйству. Поэтому проблема изучения износа в червячных передачах является одной из основных проблем, выдвинутых в последнее время машиностроением. Износ зубцов и витков в червячной передаче в значительной степени зависит от температуры, развиваемой на их поверхностях контакта, а поэтому проблема аналитического и экспериментального выявления этой температуры должна быть признана актуальной.

Знание действительной температуры контакта должно иметь большое значение для построения правильной теории износа в червячной паре.

Определение температуры в поверхностном слое металла витков червяка дает нам возможность расчитать ту температуру, при которой червяк должен быть отпущен после закалки, с тем, чтобы во время эксплоатации червячной передачи не произошел отпуск червяка и тем самым потеря твердости закаленного слоя витков червяка.

Одним из оригинальных способов определения температуры контакта в червячной паре является метод «естественной термопары», в которой местом спая служит поверхность соприкосновения червячной пары с разнородными материалами червяка и червячного колеса, предложенный нами впервые в 1940 году.

Этот метод является аналогичным известному в учении резании металлов методу Герберта, которым пользуются теперь и наши исследователи для измерения температуры на режущей грани резца при обточке металлов.

Описание установки, методика и результаты испытания

Нами была поставлена задача-определить температуру контакта в червячной паре методом естественной термопары, в зависимости от мощности и числа оборотов червяка.

Испытанию подвергся редуктор с четырехзаходным червяком. Исследуемый червячный редуктор был изготовлен Тбилисским Машиностроительным заводом им. 26-ти Комиссаров. Червяк был изготовлен из материала СТ-2. После нарезки червяк был подвергнут цементации и закалке с последующей шлифовкой. Венец червячного колеса был изготовлен из фосфористой бронзы. Модуль $m=6{,}5$ мм, число зубцов $z=51$. Редуктор был установлен на раме и был соединен при помощи гибкой муфты с мотором постоянного тока, мощностью 9 лош. сил. На валу червячного колеса был установлен динамометр Прони, которым производилось поглощение мощности. Общая схема показана на рис. 1. Мощность на валу червячного колеса бралась от 0,5 до 2 лош. сил, которая подсчитывалась по формуле

$$N = \frac{M.\ n}{71620} = \frac{(Q-Q_1)\,l.n}{71620}$$

где Q_1 — нагрузка от собственного веса тормоза

Q — груз на плече динамометра

l — плечо рычага динамометра

n — число оборотов червячного колеса.

Рычаг динамометра через подставку опирался на платформу весов, которым и измерялся Q. Затем тормоз регулировался посредством маховичка. Во время работы тормозной шкив непрерывно охлаждался струей воды. Перед началом испытания задавались мощности и число оборотов червяка и подсчитывалась сила нажатия рычага динамометра на сотенных весах.

Установив на весах гири затягивался динамометр до уравновешивания весов. Умножая вес гирь (с учетом Q_1) на длину рычага динамометра, мы получали момент на валу червячного колеса, зная который мы по вышеуказанной формуле легко подсчитывали мощность на валу червячного колеса. Число оборотов регулировалось с помощью реостата в пределах 600 — 1200 об/мин.

Мотор был приспособлен под мотор-весы для подсчета мощности на валу мотора. Для этого мотор был подвешен на чугунных стойках и для большей чувствительности вращался на шарикоподшипниках. Таким образом, крутящий момент нами легко замерялся посредством уравновешивания мотора гирями, для чего к статору мотора были прикреплены с двух сторон штанги для подвешивания чашек с гирями.

Мощность на валу мотора подсчитывалась по формуле

$$N_м = \frac{M_м \cdot n_м}{71620} = \frac{Q_м\ n_м\ l_м}{71620}$$

где $Q_м$ — вес груза на чашке мотор-весов
$n_м$ — число оборотов эл. мотора.
$l_м$ — плечо мотор-весов.

Уравновешивая мотор-весы гирями, умножая вес гирь на мотор-весах на его плечо мы получали момент на валу мотора, зная который мы легко можем подсчитать мощность мотора. Все опыты доводились до установившегося теплового состояния, для чего измерение милливольтметром т. э. д. силы, которая возникала на поверхностях сопряжения червячной пары, продолжалось до тех пор, пока стрелка милливольтметра не переставала подниматься, т. е. опыты доводились до установившегося теплового состояния. Пересчет милливольтметров на градусы Цельсия осуществлен с помощью градуировочной кривой. При измерении т. э. д. силы, мы отказались от изолирования друг от друга червяка и колеса, имея целью получить те результаты, которые наблюдаются при действительной работе редуктора. Что же касается градуировки червячной пары, то она производилась на самой установке тоже без изоляции червяка от червячного колеса. Этот метод градуировки имел целью воспроизвести как можно ближе те условия, которые наблюдаются при работе редуктора. Конечно, мы могли бы прибегнуть и к обычному методу градуировки, но этот путь не дал бы требуемых результатов, поскольку здесь не представляется возможность воспроизвести те условия, которые имеют место в действительности.

Одновременно нами производилось измерение температуры масла ртутным термометром. На рис. №№ 2, 3 и 4 представлен график зависимости изменения температуры контакта от времени, мощности и от числа оборотов червяка.

Как видно из диаграммы № 4, температура контакта при постоянной мощности и при различных числах оборотов меняется незначительно. Значит, число оборотов червяка особенно не влияет на температуру контакта для нашей червячной передачи.

В результате испытания нашего червячного редуктора, мы получили следующие эмпирические формулы


$$T_к = 2 . T_м \qquad T_к = 28\ N + 40$$

Определив экспериментальным путем температуру контакта, перейдем к её определению аналитическим путем.

Рассмотрим распределение температуры в зубце червячного колеса и одновременно теплоотдачу через поверхность зубца. Для упрощения решения этой задачи сделаем некоторые допущения, в частности, рассмотрим линейную задачу распространения тепла в зубце червячного колеса, как в плоской стенке; будем игнорировать тепловой поток, идущий в венец червячного колеса, не играющий существенной роли в решении поставленной нами задачи.

Количество выделенного тепла на поверхностях сопряжения червячной пары, как известно

$$Q = \frac{P_n \cdot \mu \cdot V_s}{427}$$



Предположим, что на нагрев червяка идет только часть всей теплоты трения

$$Q_1 = k_1 . Q,$$

а остальная часть теплоты трения

$$Q_2 = k_2 . Q$$

передается зубу червячного колеса. Из этого же количества теплоты (Q_2) часть должна проходить через стенку, а все остальное количество должно быть удалено поверхностью зуба путем теплопередачи в окружающую среду.

На основании высказанных соображений получаем равенство:

$$Q_2 = \alpha F\ (T_к - T_м) + \frac{\lambda}{a} F\ (T_к - T_х) \quad . \; . \; . \quad (1)$$

С другой стороны

$$\alpha .\ F.\ (T_х - T_м) = \frac{\lambda}{a} F\ (T_к - T_х) \quad . \; . \; . \quad (2)$$

Из уравнений (1) и (2) получим

$$T_к - T_м = \frac{Q_2}{\alpha F\left(1+\frac{\lambda}{a\alpha+\lambda}\right)} = \frac{P_n \cdot V_s \cdot \mu \cdot \kappa_2}{427\alpha \cdot F \cdot \left(1+\frac{\lambda}{a\alpha+\lambda}\right)}$$

где $T_к$ — температура контакта.
$T_х$ — температура противоположной поверхности стенки.
$T_м$ — температура масла.
P_n — нормальное давление.
μ — коэфициент трения скольжения.
V_s — скорость скольжения.
k_1, k_2 — коэфициенты, учитывающие распределение тепла между червяком и червячным колесом.
α — коэфициент теплопередачи.
λ — коэфициент теплопроводности.
a — толщина зуба колеса.

Нужно отметить исключительную трудность аналитического определения температуры контакта. Приведенная формула не претендует на большую точность.

Следует отметить, что оригинальность метода «естественной термопары» заключается не только в том, что определяется температура контакта, но и в том, что этим методом доказывается, что во время работы червячной передачи масляная пленка между зубьями и витками червяка периодически разрывается. Иначе милливольтметр при плохой электропроводности масляной пленки не показывал бы наличия в цепи электродвижущей силы. Кроме того, на нашей червячной передаче мы неоднократно наблюдали явление переноса частиц бронзы с венца на червяк. Трудно представить себе, чтобы это явление происходило без соприкосновения металлических поверхностей.

ОБЩИЕ ВЫВОДЫ

На основании приведенных испытаний и наблюдений можно сделать следующие выводы.

1. Знание действительной температуры контакта червячной пары имеет большое значение для построения правильной теории нагрева и износа в червячных передачах.
2. Зная температуру контакта, можно более точно учесть влияние температуры на механические свойства материала червяка и червячного колеса.
3. Для полного изучения нагрева в червячном редукторе более правильным будет выводить формулы, исходя не из температуры масла, а из температуры контакта червячной пары, которая является температурой очага — источника тепла.
4. Наиболее правильный и простой путь определения температуры контакта в червячной паре—метод термопары, при котором червяк и колесо сами являются элементами термопары.
5. Методом «естественной термопары» можно измерить температуру в точках зацепления зубчатых колес (разнородными металлами) с прямыми и косыми зубцами.
6. Испытание показало, что для данного червячного редуктора при сохранении постоянной мощности, число оборотов особенно не влияет на температуру контакта червячной пары.
7. Оригинальность метода «естественной термопары» заключается не только в том, что определяется температура контакта в червячной паре, но и в том, что этим методом доказывается, что во время работы червячной передачи масляная пленка между зубьями и витками червяка периодически разрывается.

Հ. Վահրամյան

ՈՐԴԱՁԵՎ ԶՈՒՅԳԻ ԿՈՆՏԱԿՏԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԿ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ

Որդանձև փոխանցման մեջ մաշը մեծ վնաս է հասցնում մեր ժողովրդական տնտեսությանը, դրա համար մեքենաշինարարության մեջ որդանձև զույգի մաշի ուսումնասիրությունը ներկայումս հանդիսանում է հիմնական հարցերից մեկը։

Ակնհայտ է, որ որդանձև զույգի լծորդման մակերեսի մաշի հիմնական ցուցանիշներից մեկը պետք է հանդիսանա որդանձև զույգի լծորդման մակերեսի (կոնտակտի) ջերմաստիճանը, ուստի որդանձև զույգի կոնտակտի ջերմաստիճանի որոշելը պետք է ընդունվի, որպես ակտուալ հարցերից մեկը։

Այժմ որդանձև փոխանցման ջեռուցման ցուցանիշը հանդիսանում է յուղի միջին ջերմաստիճանը։

Որդանձև փոխանցման ջեռուցման ցուցանիշներից մեկը պետք է հանդիսանա նաև կոնտակտի ջերմաստիճանը, որը հանդիսանում է ջեռուցման «աղբյուր»-ի ջերմաստիճանը։

Մինչև այժմ որդանձև փոխանցման հետազոտողները այդ հարցով չեն զբաղվել։

Որդաձև փոխանցման մաշի և ջեռուցման թեորիայի կառուցման համար որդաձև զույգի կոնտակտի ջերմաստիճանը կծառայի որպես նոր ֆակտոր։

Որդաձև զույգի կոնտակտի ջերմաստիճանը որոշելու համար, որդը (պողպատ) և որդաձև ատամնավոր անիվը (բրոնզ) մենք ընդունում ենք որպես «բնական ջերմազույգի» էլեմենտներ և որոշում ենք դրանց կոնտակտի ջերմաստիճանը այնպես, ինչպես որոշում են կտրիչի ջերմաստիճանը մետաղների կտրման թեորիայի մեջ (Գծագիր № 1)։

Армянский Сельскохозяйственный Институт
Кафедра „Детали машин"

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных трудов

А. С. Ваграмян

ТОЧНЫЙ МЕТОД ОПРЕДЕЛЕНИЯ ТЕМПЕРАТУРЫ НА ПОВЕРХНОСТЯХ ТРЕНИЯ КОЛОДОЧНЫХ ТОРМОЗОВ ЖЕЛ. ДОР. ТРАНСПОРТА

Исследование термического режима тормозной колодки и бандажа является интересным и важным, в особенности с введением высоких скоростей поездов, когда бандажи колес и тормозные колодки испытывают во время торможения чрезвычайно напряженную работу и большой *нагрев*. Несмотря на первостепенное значение нагрева в тормозах, этот вопрос в современной литературе разработан *слабо*. Для измерения температуры нагрева колодок применяется термоэлемент*). Надо указать, что определение температуры этим методом в тормозах производилось не на поверхности трения, а несколько отступая от нее, посредством термоэлементов, которые вставлялись в отверстие, сделанное в колодке возможно ближе к поверхности трения. *При исследовании влияния температуры на коэфициент трения, нужно принимать во внимание температуру на поверхностях трения в колодочных тормозах, а не среднюю температуру колодки.*

Несмотря на всю серьезность постановки опытов Мецкова, для определения влияния температуры на величину коэфициента трения, все же нельзя считать полученные результаты вполне правильными, так как определение температуры в опытах Мецкова производилось не на поверхности трения, а несколько отступая от нее.

Аналитическое и экспериментальное выявление температуры на поверхностях трения в тормозах должно быть признано актуальным, так как на самой поверхности трения могут получиться высокие температуры.

Одним из оригинальных способов определения температуры на поверхностях трения в колодочных тормозах должен явиться метод „естественной термопары", в которой местом спая должна служить поверхность соприкосновения бандажа и колодки.

Как известно, тормозная колодка и соприкасающаяся с ней поверхность бандажа представляют собой два разнородных металла (чугун и сталь), кото-

*) Б. Л. Карвацкий „Тормоза", часть II, стр. 18.

рые могут служить термоэлементами, и посредством их можно точно определить температуру на поверхности трения.

Расход горючего определен на тех же тракторах. Как видно из приведенных ниже таблиц, средний расход горючего на *га* 27, 6—23,6 *кг* для СТЗ с трехкорпусным плугом при вспашке на глубину 27,6—25,3 *см* и 23,3—20,5 *кг* для СТЗ-НАТИ с пятикорпусным плугом при грубине вспашки 27,2—25,3 *см*.

Вспашка получилась неглыбистая, с хорошим поворотом пласта и заделкой растительных остатков. Наблюдалось некоторое осыпание земли со стенки борозды и некоторое пересыпание земли через отвал.

Трактор СТЗ при обоих повторениях дает почти одинаковый расход горючего на час работы мотора, т. е. 6,9—6,5 *кг*. На *га* вспаханной земли расход колеблется от 27,55 до 23,57 *кг*. Разница эта об'ясняется, прежде всего, большой глубиной вспашки при испытании 12/IX. Если глубину вспашки для обоих случаев принять 25 *см* и сделать условный перерасчет расхода горючего, тогда получим 24,9 *кг/га* для первого испытания и 23,3 *кг/га* для второго

Расход горючего при зяблевой вспашке жнивья на участке Гюлли-Багер, сел. Тападолак Дузкендского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Средняя глубина вспашки см	Средняя ширина захвата см	Площадь вспаханной земли: Длина м	Площадь вспаханной земли: Ширина м	Площадь вспаханной земли: Га	Расход горючего кг: Общий	Расход горючего кг: На га	Расход горючего кг: На один час работы мотора
Каштановый чернозем, тяжело-суглинистый	11/IX	СТЗ НАТИ	ТПУ 5—3	5	25,3	165,0	634,0	34,6	2,190	51,03	23,26	13,2
	12/IX	СТЗ	ТПЗ	2	27,6	74,0	600,0	20,0	1,200	33,06	27,55	6,9
	13/IX	СТЗ НАТИ	ТПУ 5—3	5	27,2	182,0	615,5	43,8	2,695	54,96	20,30	13,5
	14/IX	СТЗ	ТПЗ	2	25,3	60,5	598,0	28,5	1,700	40,18	23,57	6,5

Хронометражные данные зяблевой вспашки на участке Гюлли-Багер, сел. Тападолак Дузкендского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Скорость хода м/с	Продолжительность работы брутто—час	Расход времени в % %: Работа в борозде	Расход времени в % %: Повороты	Расход времени в % %: Холостые переезды	Остановки: С работающим мотором	Остановки: Без работы мотора	Прочие
Каштановый чернозем, тяжело суглинистый	11/IX	СТЗ НАТИ	ТПУ 5—3	5	1,03	4,22	84,4	4,7	—	0,8	7,7	2,4
	12/IX	СТЗ	ТПЗ	2	1,09	5,10	81,3	3,1	—	9,1	5,6	1,0
	13/IX	СТЗ НАТИ	ТПУ 5—3	5	1,03	4,08	90,0	6,3	—	—	—	2,4
	14/IX	СТЗ	ТПЗ	2	0,95	6,68	86,2	3,0	—	6,2	3,7	0,8

испытания, т. е. почти один и тот же расход. По данным хронометража при первом испытании работа в борозде составляла всего 81,3% от общего времени вспашки, в то время, как при втором испытании она составляла 86,2%. Остановок с работающим мотором при первом испытании было больше и составляло 9,1% против 6,2% второго испытания.

Трактор СТЗ-НАТИ дает также при обоих повторениях почти одинаковый расход горючего на час работы мотора, т. е. 13,5—13,2 *кг*, в среднем 13,4 *кг*, в то время, как расход горючего на *га* дает некоторое колебание 23,33—20,50. Разницу эту нельзя об'яснить глубиной вспашки, так как здесь, наоборот, при меньшем расходе горючего пахали глубже. Если сделать условный перерасчет на глубину 25 *см*, получим разницу еще большую, т. е. 23,0—18,8=4,2 *кг*. Причиной этой разницы отчасти является неполное использование рабочего времени при вспашке первого испытания; процент использования рабочего времени в борозде гораздо ниже (примерно на 6%). Кроме того, трактор имел больше остановок.

б) Участки 5/14 и «Совхози Охер» колхоза имени Микояна сел. Тападолак и «Чомур-Дара» колхоза «Пайкар» сел. Молла-Муса почти однотипные по почвенным условиям. Участки 5/14 и «Чомур-Дара» из под ярового ячменя, участок «Совхози Охер» из под люцерны (нами производилась перепашка). Засоренность участков 5/14 и «Совхози Охер» незначительная, участок «Чомур-Дара» засорен овсюгом, осотом, мышеем, березкой и др. сорняками.

Почва-каштановый чернозем, мощный, средне и тяжело суглинистый, бесскелетный, слабокарбонатный или выщелоченный (Чомур-Дара).

Аггрегатный состав на глубине 10—20 см

№№ пп	Участки	Фракции в % %-ах			
		10,0—3,0 мм	3,0—1,0 мм	1,0—0,5 мм	0,5—0,25 мм
1	5/14	0,77	7,87	17,03	25,51
2	Совхози-Охер	1,23	14,94	23,43	20,86
3	Чомур-Дара	1,24	14,87	22,07	18,64

Влажность почвы на глубине 10—20 см

№№ пп	Участки	Время испытания	Полевая влажность в %-ах	Гигроскопическая влажность в %-ах
1	5/14	18/9	16.1	—
2	„	21/9	26.6	3.9
3	Совхози-Охер	5/10	17.1	—
4	„	8/10	26.3	4.4
5	Чомур-Дара	23/10	23.5	4.2

Количество гумуса на глубине 0—20 см — 2,3—3,0 %.

Качество вспашки хорошее.

Удельное сопротивление почвы при вспашке.

Участок	Дата	Трактор	Плуг		Средн. глуб. вспашки см	Средняя ширина захвата см	Сопротивление кг	
			Марка	Число корпусов			Сред.	удельное кг
5/14	17 IX	СТЗ НАТИ	ТПУ 5-3	4	21.6	153.0	2244	0.68
„	21 IX	„	„	4	21.8	154.0	2333	0.68
Совхози Охер	8 X	„	„	5	20.8	173.0	2·95	0.66
Чомур-Дара	23 X	СТЗ	ТПЗ	2	20.3	63.9	1026	0.70
„ „	23 X	„	„	2	20.7	63.6	888	0.68
„ „	24 X	СТЗ НАТИ	ТПУ 5-3	4	21.5	156.9	2224	0.67
„ „	24 X	„	„	4	22.3	150.1	2318	0.69

Как видно из таблицы, удельное сопротивление почвы довольно высокое—0,67—0,7. Повышение удельного сопротивления по сравнению с уд. сопротивлением почвы участка «Гюлли-Багер» об'ясняется уменьшением глубины вспашки, уменьшением числа корпусов, засоренностью участков, повышенной влажностью и отчасти постановкой дерноснимов (участок 5/14).

Удельное сопротивление при перепашке люцернового пласта—0,66 также высокое.

Расход горючего.

Участок	Дата	Трактор	Плуг		Глубина вспашки средн. см	Ширина захвата средн. см	Площадь вспах. земли га	Расход горючего кг		
			Марка	Число корпусов				Общий	На га	На час работы мотора
5/14	18 IX	СТЗ НАТИ	ТПУ5—3	4	26.9	136.0	3.021	80.69	26.70	14.90
„	21 IX	„	„	4	27.2	136.0	2.035	50.42	24.77	14.00
„	17 IX	СТЗ	ТПЗ	2	23.7	60.0	1.767	42.94	24.30	6.70
„	19 IX	„	„	2	23.5	59.0	2.049	51.45	25.10	6.60
Совхози Охер	4 X	СТЗ НАТИ	ТПУ5—3	5	21.2	167.0	3.510	72.60	20.68	16.10
„ „	5 X	„	„	5	21.0	167.0	2.340	47.95	20.53	17.40
Чомур-Дара	24 X	„	„	4	25.9	134.0	1.952	52.27	26.80	13.80
„ „	25 X	„	„	4	25.2	138.0	3.200	87.80	27.40	14.80

Итак, средний расход горючего на *га* для трактора СТЗ НАТИ 25.0—27.0 кг, а для трактора СТЗ—25.0 кг. Сравнительно более высокий расход горючего (трактор СТЗ-НАТИ) об'ясняется большой глубиной вспашки (26—27 см). Расход горючего на га при перепашке люцернового пласта равняется 20—21 кг. Часовой расход горючего для СТЗ-НАТИ 14—15 кг., для СТЗ 6—7 кг. Увеличение расхода горючего по сравнению с участком «Гюлли-Багер» надо об'яснить большим удельным сопротивлением почвы и полной загрузкой мощности трактора.

Б. Боронование

Испытания на боронование проведены на участках 5/14 и 8/14 колхоза сел. Дузкенд.

Участок 5/14 находится на расстоянии 1 *км* от села в направлении юго-запада, а 8/14—к востоку от Ленинакана на расстоянии 4 *км*. Рельеф почти ровный.

Предшествующая культура на участке 5/14—ячмень, а на участке 8/14—озимая пшеница.

Предшествующая обработка: на участке 5/14 вспашка на глубину 22 *см* за месяц до испытания, а на участке 8/14 вспашка на глубину 20—22 *см* за 15 дней до испытания.

Глыбистость небольшая.

Механический состав почвы

Глубина *см*	Фракции в %%-ах					
	1,0—0,25	0,25—00,5	0,05—0,01	0,01—0,005	0,005—0,001	< 0,001
10—20	8,75	26,56	12,32	12,94	21,32	10,59
20—40	16,32	18,84	17,18	18,54	10,43	7,78

Аггрегатный состав

Глубина *см*	Фракции в %%-ах				
	10,0—3,0	3,0—1,0	1,0—0,5	0,5—0,25	Всего структурн. элементов
10—20	1,52	7,71	21,09	25,74	56,06
20—40	2,49	14,19	17,49	25,54	59,70

Влажность почвы в % %

Дата	Глубина *см*		
	0—10	10—20	20—30
28 IX	19,4	15,8	15,4

Количество гумуса на глубине 10—20 см — 2,24%
« » 20—40 см — 1,79%

Аггрегат—трактор СТЗ с 9 боронами *зиг-заг* среднего типа.

Сцепка местного изготовления: вес 350 *кг*, подшипники колес скользящего трения—чугунные.

Результаты испытания

а) Динамометраж

Дата	Участок	Скорость		Тягов. сопротивление			Удельное сопротивление	
		Передача	*м/с*	Макс.	Средн.	Миним.	*кг/см*	*кг/зуб*
25/IX	5/14	II	0,95	1115	663	40	0,81	3,7
”	”	II	0,95	935	530	50	0,64	2,9
5/X	8/14	II	1,4	—	535	160	0,65	3,0
6/X	”	II	1,42	840	488	50	0,59	2,7
6/X	”	II	1,33	1000	463	25	0,56	—

б) Расход горючего

Дата	Участок	Площадь проборонованой делянки			Расход горючего *кг.*			Средняя ширина захвата *м*
		Длина *м*	Ширина *м*	*Га*	Общий	На га	На час работы мотора	
25/IX	5/14	356	250	8,9	26,72	3,0	9,3	7,0
5-6/IX	8/14	1200	200	24,0	60,0	2,5	8,4	6,95

Трактор на обоих участках работал фигурно. Качество боронования хорошее.

Хронометражные данные

Дата	Участок	Расход времени в %-ах				
		Боронование	Повороты	Остановки		Продолжительность работы
				С раб. мотора	Без работы мотора	
25/IX	5/14	66,4	0,2	3,2	30,2	4,66
5/IX	8/14	96,3	1,2	2,5	—	7,25

Как видно из приведенных данных, удельное сопротивление бороны равняется 0,6—0,8 *кг/см*. Как было указано, борона среднего, даже можно сказать, легкого типа (1 *кг* веса на зуб). Поле не особенно глыбистое, сорняков немного, а на участке 8/14 сорняков вовсе не было, между тем, даже на этом

участке удельное сопротивление равно 0,56—0,65, в среднем 0,6 *кг*. Большое сопротивление аггрегата можно об'яснить большим весом сцепки. Если примем коэфициент перекатывания по вспаханному полю 0,25, тогда на перекатывание одной сцепки получится около 87 *кг* усилия, а с вычетом его, удельное сопротивление бороны снизится до 0,7—0,45 *кг/см*.

Расход горючего 3,0 *кг* на *га* для слегка засоренного участка и 2,5 *кг* на га для незасоренного участка. Трактор работал почти с полной нагрузкой, что видно из часового расхода горючего.

В. Посев

Испытание на посев проведено на участке 5/14 колхоза сел. Дузкенд. Рельеф делянки почти ровный. Участок был вспахан на глубину 25 — 27 *см* за 10 дней до посева трактором СТЗ-НАТИ и проборонован за день до посева трактором СТЗ-НАТИ в сцепке с 9—зиг-загами.

Предшествующая культура—ячмень. Сеялка С 24 Д завода Ростсельмаш. Глубина посева 5—6 *см*, норма высева 1,8 ц. на *га*.

а) Динамометраж

Дата	Участок	Передача	Скорость	Тяговое сопротивление *кг*			Удельное сопротивление	
			м/с	Макс.	Средн.	Миним.	*кг/см*	*кг*
28 IX	5/14	II	1,40	—	—	—	—	—
		II	1,22	900	515	90	1,43	21,5
		II	1,40	1150	467	65	1,30	19,5

б) Расход горючего

Дата	Участок	Площадь посеянной земли			Расход горючего *кг*		
		Длина *м*	Ширина *м*	*Га*	Общий	На га	На час работы мотора
28/IX	5/14	565,0	118,2	6,67	26,75	4,0	6,7
1/X	„	557,5	160,0	8,92	35,45	3,6	7,1

Трактор на обоих участках работал челноком

в) Хронометражные данные

Дата	Участок	Расход времени в %%-ах				Продолжительность работы (часов)
				Остановки		
		Посев	Повороты	С раб. мотора	Без работы мотора	
28/IX	5/14	85,4	2,6	10,6	1,2	4,06
1/X	5/14	71,6	1,9	8,1	18,4	6,11

Как видно из приведенных данных, удельное сопротивление сеялки 1,4—1,3 *кг/см*. Если примем, что тяговое усилие СТЗ на вспаханном поле на высоте 1500—1600 *м* над уровнем моря не превышает 700—750 *кг*, то надо сказать, что СТЗ может работать только в сцепке с одной сеялкой.

Расход горючего на *га* 3,6—4,0 *кг*.

Расход горючего на час работы мотора 6,7—7,1 *кг* — небольшой из-за недогруженности трактора. Сравнительно большой расход горючего на час работы трактора при втором испытании надо об'яснить значительными простоями трактора с работающим мотором.

Результаты испытаний на горных черноземах Гукасянского и Степанаванского районов

В Гукасянском районе опыты поставлены на участке «Еркар Горцер» колхоза Крхбулаг сел. Крхбулаг.

Почва участка — горный чернозем, выщелоченный, средне-глинистый, мощный, бесскелетный.

а) Механический состав

Глубина *см*	Фракции в %%-ах					
	1,0—0,25	0,25—0,05	0,05—0,01	0,01—0,005	0,005—0,001	< 0,001
0—20	5,64	16,68	16,53	34,99	10,88	13,76
20—40	4,95	19,25	19,75	15,86	25,50	12,73

б) Аггрегатный состав

Глубина *см*	Фракции в %%				
	10,0—3,0	3,0—1,0	1,0—0,5	0,5—0,25	Всего
0—20	4,06	49,23	19,71	7,20	80,20
20—40	8,60	55,50	9,87	3,48	77,45

Влажность в % %

Глубина *см*	П л	Гигроскопическая
0—10	30,5	—
10—20	31,1	5,76
20—30	31,9	5,54

Количество гумуса: на глубине 0—20 см. — 3,82% и
24—40 см. — 3,89%

Участок не поливной, с уклоном в 3°. Вспашка производилась поперек уклона.

Почва из под ярового ячменя. Предшествующая культура в 1939 г.— ячмень. Обработка под предшествующую культуру—вспашка на глубину 20—22 *см* и боронование. Густота стерни 375 стеблей на *кв м*. Засоренность средняя.

Динамометраж проведен на тракторах СТЗ-НАТИ с четырехкорпусным плугом ТПУ5-3 и СТЗ с двухкорпусным плугом ТПЗ с ножами.

Удельное сопротивление почвы при зяблевой вспашки на участке „Еркар Горцер“ сел. Крхбулаг Гукасянского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Средняя глубина вспашки *см*	Средняя ширина захвата *см*	Тяговое сопротивление *кг*: Среднее	Тяговое сопротивление *кг*: Максимум	Тяговое сопротивление *кг*: Минимум	Удельное сопротивление *кг/см*	Скорость *м/с*
Горный чернозем, средне-глинистый	15/XI	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	26,3	147,4	2450	—	—	0,63	1,03
	„	„	„	4	23,3	143,1	2320	—	—	0,69	1,19
	15/XI	СТЗ	ТПЗ	2	23,7	55,9	751	1200	300	0,57	1,08
	„	„	„	2	23,6	61,3	778	1240	200	0,54	1,14

Как видно из таблицы, удельное сопротивление почвы при вспашке четырехкорпусным плугом ТПУ5-3 составляет 0,63—0,69 *кг см²* в то время, как при вспашке плугом ТПЗ получается 0,57—0,54*кг/см²*. Причину этой разницы по данным испытания трудно об'яснить. Из динамометражного материала СТЗ были забракованы данные первого повторения в виду чрезвычайной неравномерности ширины захвата плуга и больших максимумов, доходящих до 80 *см*. Если возьмем показания также этого повторения, то удельное сопротивление составит всего 0,52 *кг/см²*.

Сопротивление плугов определялось: ТПЗ—самопишущим динамометражом сист. Горячкина. ТПУ5-3—стрелковым динамометром. Надо полагать, что на этом опыте нулевой карандаш динамометра был неправильно установлен, и самопишущий динамометр дал пониженное показание.

Расход горючего был определен для тракторов СТЗ-НАТИ и СТЗ. Полученные данные показывают, что часовой расход горючето трактором СТЗ-НАТИ равняется 15,6 *кг*, а СТЗ 6,9—6,7 *кг*. Расход горючего на *га* для СТЗ с двухкорпусным плугом около 29 *кг*, а для СТЗ НАТИ с четырехкорпусным плугом 27,4—24,0, в среднем 25,4 *кг*.

Расход горючего при зяблевой вспашке на участке «Еркар Горцер», сел. Крхбулаг Гукасянского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Средняя глубина вспашки *см*	Средняя ширина захвата *см*	Площадь вспаханной земли: Длина *м*	Площадь вспаханной земли: Ширина *м*	Площадь вспаханной земли: *Га*	Расход горючего *кг*: Общий	Расход горючего *кг*: На га	Расход горючего *кг*: На час работы мотора
Горный чернозем, средне-суглинистый	15/XI	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	26,8	139,0	480	61,0	2,93	80,34	27,41	15,6
	17/XI	„	„	4	26,4	140,0	480	70,0	3,36	80,30	23,36	15,6
	15/XI	СТЗ	ТПЗ	2	20,8	58,5	480	24,6	1,18	34,18	28,96	6,7
	17/XI	„	„	2	21,2	59,5	480	25,0	1,20	34,87	29,05	6,9

Хронометражные данные зяблевой вспашки на участке „Еркар Горцер" сел. Крхбулаг Гукасянского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Плуг: Скорость *м/с*	Продолжительность работы брутто-час	Расход времени в %%: Работа в борозде	Повороты	Холостые переезды	Остановки: С работ. мотором	Остановки: Без работы мотора
Горный чернозем, средне-суглинист.	15/XI	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	1,13	5,18	89,8	6,9	0,6	—	1,1
	17/XI	„	„	4	1,11	5,17	90,0	9,4	—	0,2	0,4
	15/XI	СТЗ	ТПЗ	2	1,22	5,03	89,8	4,5	—	4,3	—
	17/XI	„	„	2	—	5,07	86,3	3,3	—	8,3	1,2

В Степанаванском районе испытания проведены на участке Гёлер колхоза «Пайкар» сел. «Гер-гер». Почва—мощный выщелоченный, скелетный тяжело суглинистый чернозем.

а) Механический состав

Глубина см	Фракции в %-х: 1,0—0,25	0,25—0,05	0,05—0,01	0,01—0,005	0,005—0,001	< 0,001
0—20	11,47	10,13	17,71	13,98	16,69	10,59
20—40	12,97	0,82	36,48	2,27	13,07	13,53

б) Влажность почвы

Глубина см	Полевая	Гигроскопическая
0—10	24,5	—
10-20	27,3	4,13
20—30	26,0	3,97

Количество гумуса 2,51—2,37%.

Участок неполивной, из под озимой пшеницы.

Стерня средней густоты (400 стеб. на м²). Засоренность средняя.

Предшествующая культура (1939 г.) вика. Обработка под предшествующую культуру—вспашка на глубину 18—20 *см* с последующим боронованием.

Динамометраж проведен на тракторе СТЗ-НАТИ с четырехкорпусным плугом ТПУ5-3 без предплужников с ножами и на тракторе СТЗ с плугом ТПЗ без ножей. Вспашка получена хорошего качества, без глыб, с полным оборотом пласта и заделкой растительности. Борозда нормальная с незначительным осыпанием земли через верхний край отвала и со стенки борозды.

Удельное сопротивление почвы при зяблевой вспашке на участке Гёлер сел. Гер-Гер, Степанаванского р-на

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Средняя глубина вспашки *см*	Средняя ширина захвата *см*	Тяговое сопротивление *кг*: Средн.	Максим.	Минимум	Удельное сопротивление *кг/см²*
Горный чернозем, тяжело-суглин.	2/XII	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	25,6	140,7	—	2290	—	0,63
	„	„	„	4	26,6	139,5	—	2877	—	0,64
	„	„	„	4	27,7	139,0	—	2509	—	0,65
	2/XII	СТЗ	ТПЗ	2	24,0	58,2	1200	873	350	0,63

Как видно из приведенной таблицы, удельное сопротивление почвы равняется при вспашке плугом ТПУ5-3 — 0,65—0,63, а при вспашке плугом ТПЗ—0,63.

Испытания на расход горючего проведены с теми же агрегатами.

Приведенные в таблицах данные показывают, что расход горючего на *га* при вспашке трактором СТЗ-НАТИ на глубину 26,7 *см* равняется 26,2 *кг* и трактором СТЗ на глубину 23,5 *см* 29.8 *кг*. Если сделаем условный перерасчет на глубину 25 *см*, получим для трактора СТЗ-НАТИ—24,5 *кг/га* и для СТЗ—29,8 *кг/га*. Расход горючего на час работы мотора для СТЗ-НАТИ—12,8 *кг*, а для СТЗ—7,7 *кг*.

Расход горючего при зяблевой вспашке жнивья на участке Гелер, сел. Гер-Гер, Степанаванского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Средняя глубина вспашки *см*	Средняя ширина захвата *см*	Площадь вспаханной земли: Длина *м*	Площадь вспаханной земли: Ширина *м*	Площадь вспаханной земли: *Га*	Расход горючего *кг*: Общий	Расход горючего *кг*: На *га*	Расход горючего *кг*: На час работы мотора
Горный чернозем, тяжело суглин.	21/XII	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	26,7	137,0	681,0	49,5	3,37	88,26	26,18	12,8
	„	СТЗ	ТПЗ	2	23,5	56,0	681,0	19,0	1,29	38,50	29,84	7,7

Хронометражные данные зяблевой вспашки на участке Гелер сел. Гер-Гер, Степанаванского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Скорость *м/с*	Продолжительность работы брутто-час	Расход времени в %%-ах: Работа в борозде	Расход времени в %%-ах: Повороты	Расход времени в %%-ах: Холостые переезды	Остановки: С раб. мотором	Остановки: Без раб. мотора	Остановки: Прочие
Горный чернозем, тяжело-суглин.	2/XII	СТЗ-НАТИ	ТПУ5-3	4	—	7,3	83,4	10,5	—	—	5,2	—
	„	СТЗ	ТПЗ	3	—	5,2	89,5	3,9	0,3	0,8	5,5	—

Результаты испытаний на каштановых черноземах Котайкского района

Испытания проведены на участке Рус-Хараба колхоза им. Сталина сел. Капутан.

Почва каштановый чернозем, мощный, легко суглинистый, слабо скелетный.

а) Механический состав

Дата испытания	Глубина *см*	Фракции в %%-ах: 1,0—0,25	0,25—0,05	0,05—0,01	0,01—0,005	0,005—0,001	< 0,001
29/X	0—10	2,61	18,95	28,79	17,32	15,49	6,51
	10—20	3,54	31,09	12,91	9,64	21,76	12,78
	20—30	2,03	22,30	19,41	14,03	23,14	9,99
2/XI	0—10	2,40	12,81	28,59	35,82	2,32	10,73
	10—20	2,43	15,31	34,43	11,29	19,70	7,64
	20—30	6,08	6,89	30,00	10,15	24,37	13,81
17/XI	0—10	5,17	12,92	20,65	24,93	10,61	16,57
	10—20	3,36	20,19	30,02	12,58	18,77	5,73
	20—30	5,04	16,37	21,50	16,19	12,76	15,49

б) Аггрегатный состав

Дата испытания	Глубина *см*	Фракции в %%-ах: 10,0—3,0	3,0—1,0	1,0—0,5	0,5—0,25	Всего
29/X	0—10	2,61	24,33	19,61	15,04	61,89
	10—20	2,16	27,50	15,43	16,68	61,80
	20-30	3,75	33,47	19,95	12,36	69,52
2/XI	0—10	5,10	26,28	16,62	15,46	63,47
	10—20	5,31	26,52	20,11	14,31	66,24
	20—30	7,85	42,18	15,82	10,51	76,36
17/XI	0—10	1,37	12,62	21,90	19,88	55,77
	10—20	2,48	24,71	20,92	15,47	63,58
	20—30	3,61	42,81	21,69	8,41	76,52

в) Количество гумуса — 3.8—3.0%

Влажность полевая

Глубина см	29/X	2/XI	17/XI
0—10	16,4	17,8	16,3
10—20	22,2	22,5	25,9
20—30	20,5	19,7	21,3

Участок неполивной, суглинистый, из под яровой пшеницы, средне-засоренный. Предшествующая культура—озимая пшеница.

Участок засарен слабо.

Испытания проведены на тракторе СТЗ-НАТИ № 20762 с трехкорпусным плугом ЗК 35 У без ножей и дерноснимов.

Удельное сопротивление при зяблевой вспашке жнивья на участке Рус-Хараба сел. Капутан Котайкского района

Почва	Дата	Трактор	Плуг		Средняя ширина захвата см	Средняя глубина вспашки см	Среднее тяговое сопротивление кг	Удельное сопротивление кг/см²	Скорость м/с	Примечание
			Марка	Число корпусов						
Каштановый чернозем, легко глинистый	29/X	СТЗ-НАТИ	ЗК35У	3	108,2	26,2	1838	0,65	1,17	Средн. из трех повторностей
	2/XI	"	"	3	118,6	25,8	1979	0,64	1,26	"
	3/XI	"	"	3	117,1	28,7	1880	0,56	1,22	"

Как видно из таблиц, среднее удельное сопротивление для испытаний 29/X—2/XI равнялось 0.63—0,64, между тем при испытании 3/XI оно спустилось до 0,56. Это обстоятельство можно об'яснить, во-первых, сравнительно более слабой засоренностью делянки испытания 3/XI и, во-вторых, большой глубиной вспашки.

Если распределить результаты этих опытов по глубине вспашки, то получатся следующие данные:

Глубина вспашки см	Удельное сопротивление кг/см²	Направление борозды	Примечание
24,3	0,67	Ход вперед	Среднее из трех повторностей
25,5	0,62	"	"
30,8	0,53	"	"
26,5	0,61	Ход назад	"
26,9	0,64	"	"
27,2	0,61	"	"

При динамометрировании плуга на холостом перекатывании получились следующие данные:

Дата	Сопротивление перекатывания кг	Вес плуга кг	Коэфициент перекатывания	Скорость м/с
19/X	637,0	900	0,65	1,33
3/XI	562,0	900	0,57	1,33

Испытания на расход горючего проведены на том же тракторе в сцепке с плугом ЗК35У без ножей и дерноснимов.

Трактор работал нормально, обороты мотора 1200—1300, буксование 2—4%.

Расход горючего на *га* 29,1—23,7 *кг*, на час работы мотора—15,6—13,4 *кг*.

Расход горючего при зяблевой вспашке на участке Рус-Хараба сел. Капутан Котайкского района

Почва	Дата	Трактор	Плуг		Средняя глубина вспашки см	Средняя ширина захвата см	Площадь вспаханной земли			Расход горючего кг		
			Марка	Число корпусов			Длина м	Ширина м	Га	Общий	На га	На час работы мотора
Каштановый чернозем, легко глинистый	29/X	СТЗ-НАТИ	ЗК35У	3	25,1	115,0	410	79,4	3,255	87,36	26,8	15,6
	2/XI	"	"	3	28,9	120,5	560	47,2	2,643	76,77	29,1	13,4
	3/XI	"	"	3	27,9	126,2	550	63,1	3,470	82,17	23,7	14,7

Хронометражные данные зяблевой вспашки на участке Рус-Хараба: сел. Капутан Котайкского района

Почва	Дата	Трактор	Плуг: Марка	Плуг: Число корпусов	Скорость *м/с*	Продолжительность работы брутто-час	Расход времени в %%: Работа в борозде	Повороты	Холостые переезды	Остановки: С раб. мотора	Остановки: Без раб. мотора
Каштановый чернозём, легко глинистый	29/X	СТЗ-НАТИ	ЗК35У	3	1,16	7,31	65,0	8,5	0,5	—	23,4
	2/XI	„	„	3	1,29	7,34	65,9	5,1	3,4	3,6	22,1
	3/XI	„	„	3	1,30	5,60	88,3	9,3	2,5	—	—

Наименьший расход горючего получен на делянке испытания 3/XI, где удельное сопротивление почвы, как уже сказано, было ниже—0,56.

Перерасчет (условный) расхода горючего на вспашку в 25 *см* глубины дает для испытания 29/X — 26,7 *кг/га*
2/XI — 25,2 *кг/га* и
3/XI — 21,3 *кг/га*.

Тот же пахотный агрегат был испытан на делянке из под ярового ячменя после дождей 17/XI на участке Шаханлу. В 1939 году делянка находилась под паром. Засоренность средняя. Качество вспашки хорошее, борозда чистая, заделка растительности хорошая. Пересыпание земли через верхний обрез отвала незначительное. При средней глубине вспашки 24,8 *см* и ширине захвата 117,0 *см* плуг давал 2030 кг сопротивления, т. е. удельное сопротивление на *см*² равнялось 0,7 *кг*. Скорость хода 1,28 *м/с*.

На этой же делянке расход горючего при вспашке на глубину 24,8 *см* и при ширине захвата плуга в 110,0 *см* (вспахано 720 × 4,3 = 31000 *м*²) равнялось: на га 25,2 *кг*, на час работы мотора 12,3 *кг*.

РЕЗЮМЕ

1. Черноземные почвы изученных районов Арм. ССР с точки зрения тракторной обработки надо считать средне-тяжелыми. Удельное сопротивление при зяблевой вспашке, в зависимости от механического состава и агротехнического состояния почвы, колеблется в пределах 0,5—0,8 кг/см², преимущественно 0,6—0,7 кг/см².

2. Трактора в высотных условиях Арм. ССР снижают свою мощность и дают: СТЗ-НАТИ на высоте 1300 метров 49 НР и на высоте 1600 метров 44 эф. НР, трактор СТЗ-1 на высоте 1600 метров развивал 27 эф. НР.

3. Указанные обстоятельства отражаются на комплектовании пахотных аггрегатов. При глубине вспашки 20—25 см трактор СТЗ работает преимущественно с двух корпусными плугами, а трактор СТЗ-НАТИ с 4-х корпусными плугами.

4. Расход горючего в зависимости от глубины вспашки и сопротивления почвы колеблется в пределах 20—28 кг/га. Низкие нормы расхода горючего получаются при правильной организации технологического процесса вспашки.

Армянский Сельскохозяйственных Институт
Кафедра с/х машин

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 Сборник научных трудов

Գ. Խ. Աղաջանյան
Ս. Վ. Ղազանչյան

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՀՃԱՑԱԾ ՀՈՂԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նոր-Բայազետի շրջանում 1942—1943 թ. թ. Գյուղատնտեսական Ինստիտուտի Ընդհանուր Երկրագործության և Հողագիտության ամբիոնների կողմից ճահճացած հողերի հետազոտման գծով տարած աշխատանքները (Գ. Աղաջանյան, Խ. Միրիմանյան) ցույց տվեցին, որ Սևանի ավազանում ճահճացած հողերի մեծ մասի յուրացումը մեծ կապիտալ ներդրումներ չի պահանջում և տնտեսապես իրեն արդարացնում է յուրացման հենց առաջին տարիներից սկսած։ Սակայն այդ աշխատանքները միաժամանակ ցույց տվեցին, որ ճահճացած հողերի անխնամ և ոչ ռացիոնալ օգտագործման դեպքում դրանք շատ կարճ ժամանակից հետո կորցնում են իրենց՝ դարերով ձեռք բերած կնձկային ստրուկտուրան և վարակվում բազմաթիվ տեսակի մոլախոտերով։ Այդ իսկ տեսակետից թե՛ տեսական և թե՛ գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում ճահճացած հողերի ճիշտ ագրոտեխնիկայի մշակումը, որը հնարավորություն կտա խուսափելու հողի փոշիացումից և պահպանելու նրա ստրուկտուրան ու բարձր բերրիությունը։

Մարտունու շրջանում մեր փորձերը դրվել են Ծովինար գյուղի «ԿԻՄ» կոլխոզի «Ծովափ» և «Մելիքի սազ» կոչվող սառնաների հողերում 1944—1946 թ. թ. (երեք տարի)։ Այդ հողամասերը գտնվում են լճի ափին և ճահճացած են եղել դարեր շարունակ։ Այժմ այդ հողերի որոշ մասն արդեն Սևանա լճի ջրի պակասելու հետևանքով այնքան է չորացել, որ հնարավոր է դնել մշակության տակ և օգտագործել ցանքաշրջանառության մեջ։ Մյուս մասը դեռ շարունակվում է մնալ ճահճացած վիճակում, սակայն դրանց չորացումը մեծ ներդրում չի պահանջում։

Այս հողերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրենց բոլոր հատկանիշներով սրանք խիստ տարբերվում են Նոր-Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի ճահճացած հողերից։ Ամենաառաջին և խոշոր տարբերությունը կայանում է նրանում, որ այս հողերը պարունակում են դեռ ամբողջապես պահպանված և բոլորովին չքայքայված վիճակում մեծ չափի հասնող բու-

սական մնացորդներ, իսկ Նորագյուղի հողերը պարունակում էին անհամեմատ ավելի պակաս քանակությամբ օրգանական մնացորդներ: Դրանով էլ պայմանավորված են Ծովինար գյուղի ճահճացած հողերի մեխանիկական, ֆիզիկական և այլ առանձնահատկությունները, որոնք պահանջում են ուրույն մոտեցում և յուրահատուկ ագրոտեխնիկայի կիրառում:

Մեր 1944 թվի փորձերը կրել են օրիենտիր բնույթ և նպատակ են ունեցել պարզելու այդ հողերում մշակման ենթակա կուլտուրաների կազմը: Այդ նպատակով փորձարկման ենթարկվել են մեծ թվով կուլտուրաներ, որից պարզվել է, որ Ծովինար գյուղի նոր յուրացվող ճահճացած հողերում հնարավոր է մշակել շատ կուլտուրաներ, սակայն տնտեսապես ձեռնտու է ցանքաշրջանառության մեջ ունենալ դրանցից մի քանիսը միայն, որոնք ճահճացած հողերի պայմաններում աճում ու զարգանում են միանգամայն նորմալ և տալիս են բարձր բերք:

1944 թվին մեր կողմից փորձարկվել են հետևյալ կուլտուրաները՝

1. Գարնանացան ցորեն (erinaceum), 2. գարնանացան գարի, 3. երկհար վիկ (Մ. Թամանյանի), 4. գարնանացան վիկ (Vicia sativa), 5. շաքարի ճակնդեղ, 6. կերի ճակնդեղ, 7. գազար, 8. կարտոֆիլ («Լորխ»), 9. կաղամբ տեղական, 10. դդում, 11. վարունգ Կոտայքի, 12. սեխ տեղական, 13. սեխ «Գյուլնարա», 14. սեխ «Կոլխոզնիկուհի», 15. ձմերուկ տեղական, 16. ձմերուկ «Լյուբիմեց Ֆ», 17. կանեփ, 18. ծխախոտ, 19. եգիպտացորեն ատամնաձև, 20. եգիպտացորեն տեղական (Արարատյան դաշտավայրում մշակվող), 21. ոլոռ (Ալյասկայի), 22. լոբի կարմիր, 23. լոբի սպիտակ, 24. կտավատ տեղական, 25. կորնգան տեղական, 26. առվույտ տեղական: Սրանից բացի, մեր փորձահողամասին կից կոլխոզն առաջին անգամ ցանել էր՝ ճակնդեղ 0,6 հեկտար, կարտոֆիլ 3 հեկտար, գարնացան գարի 6 հեկտար և գարնանացան ցորեն 6 հեկտար:

Փորձարկված այս բոլոր բույսերից բարձր բերք ապահովեցին հետևյալները՝

1. Գարնանացան ցորեն, 2. գարնանացան գարի, 3. կարտոֆիլ, 4. կանեփ, 5. կաղամբ, 6. ոլոռ, 7. գարնանացան վիկ (պակաս չափով նաև երկհար վիկ), 8. ծխախոտ և 9. առվույտ:

Հաշվի առնելով 1944 թվի փորձերի արդյունքները 1945 թվից սկսած փորձարկման մեջ թողնվել են միայն այն կուլտուրաները, որոնք պետք է մշակվեին հատկապես այդ հողերի համար մեր կողմից մշակված ցանքաշրջանառության սիստեմում, կուլտուրաների հետևյալ հաջորդականությամբ (ցանքաշրջանառության առաջին ռոտացիայի ընթացքում)՝

1. Գարնանացան հացահատիկ+խոտախառնուրդ (որպես ենթացանք), 2. խոտախառնուրդ, 3. խոտախառնուրդ, 4, գարնանացան հացահատիկ, 5. ծխախոտ, 6. գարնանացան ցորեն, 7. կարտոֆիլ, 8. հավաքական (կտավատ, ոլոռ և այլն):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

1944 թվին ճիմուտի վարը կատարվել է ՍՏԶ տրակտորով 20—22 սմ. խորությամբ: Այդ աշխատանքի ժամանակ համարյա համատարած կերպով գութանը շուռ էր տալիս ամբողջապես բուսական մնացորդներից բաղկացած և կիսաքայքայված վիճակի մեջ գտնվող ճմաշերտը: Դրանից հետո շուռ տված ճմաշերտը տեղական արորով 4 անգամ մեկը մյուսի հետևից փխրեցվել է, որից քսան օր անց, ցանքից անմիջապես առաջ, երեք հետք հողամասը փոցխվել է «զիգ-զագ» փոցխով: Դրանից հետո հողի երեսին թափված բույսերի մնացորդները, գլխավորապես եղեգնի ստորերկրյա մասերը, ինչպես նաև չփշրված ճմաշերտն ու տորֆի կտորները ձեռքով հավաքվել և դաշտից դուրս են տարվել: Ցանքը կատարվել է ձեռքով հունիսի մեկին: Փորձը դրվել է երկու կրկնողությամբ, 100 քառ. մետր մեծությամբ փորձահողամասերի վրա, որոշ կուլտուրաներ զբաղեցրել են ավելի մեծ տարածություններ:

1945 և 1946 թ. թ. փորձերը դրվել են ցանքաշրջանառության սիստեմում չորս կրկնողությամբ, յուրաքանչյուր փորձահողամասի մեծությունը եղել է 200 քառ. մետր: Վարը դարձյալ կատարվել է տրակտորային գութանով 22—25 սմ. խորությամբ ապրիլի վերջին դեկադում: Վարից հետո 1945 թվին դարձյալ կարիք է զգացվել հողի երեսին թափթփված ճիմուտի կտորները բահով փշրել, իսկ մի մասն էլ հավաքել և հողամասից դուրս տանել: Ցանքը կատարվել է մայիսի առաջին դեկադում հետևյալ նորմաներով՝

1. Գարնանացան գարի 200 կգ/հ.
2. Գարնանացան ցորեն 180 կգ/հ.
3. Կորնգան 100 կգ/հ
4. Կարտոֆիլ 25 ց/հ.
5. Ոլոռ 120 կգ/հ.
6. Ծխախոտի և կաղամբի սածիլումը կատարվել է հունիսի 5-ից մինչև 15-ը, իսկ նույն ամսի 29-ին կատարվել է լրացուցիչ սածիլում՝ լիարժեք հեկտար ստանալու համար:

Քաղհան կատարվել է այնքան անգամ և այն հաշվով, որ ցանքերը միշտ լինեն մոլախոտերից մաքուր վիճակում: Կարտոֆիլի բուկլից կատարվել է երկու անգամ:

Բոլոր կուլտուրաները մշակվել են անջրդի պայմաններում, բացի ծխախոտից, որը ջրվել է երեք անգամ:

Ճմաշերտի և շուռ տված ճիմուտի վարի որակի ցուցանիշները որոշվել են սովորական, ընդունված մեթոդներով, վարի աշխատանքներին զուգընթաց:

Մոլախոտերի տեսակները և նրանց տարածման չափը որոշվել է երկու անգամ՝ ամառվա կեսին և բերքահավաքի նախօրյակին:

Մշակվող բույսերի զարգացման ցուցանիշները որոշվել են վեգետացիայի ընթացքում երկու անգամ՝ առաջին անգամ ցանքից 20 օր հետո և երկրորդ անգամ՝ յուրաքանչյուր կուլտուրայի բերքահավաքի նախօրյակին: Որոշ

կուլտուրաներ, որոնք մինչև բերք տալու աստիճանը չեն հասել, նույնպես հաշվի են առնվել վեգետացիայի վերջում։ Հողի նմուշները անալիզների համար վերցվել են բոլոր հողակտորներում 0—10, 10—20, 20—30 և 30—40 սմ. խորությամբ։ Այդ նմուշների անալիզների արդյունքները այստեղ չեն բերվում, դրանք շարադրվելու են մեր մի այլ աշխատանքում։

ՎԱՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Խորությունը և ժամանակը.—*Յուրաքանչյուր անգամ վարը կատարվել է նորմալ խորությամբ և ժամանակին։ Բոլոր փորձահողամասերում վարի խորությունը միատեսակ է եղել և մեծ տատանումներ չի տվել։ Ճնշող մեծամասնությամբ վարի խորությունը տատանվել է 20—22 սմ. սահմաններում։*

Շուռ գալու աստիճանը և պրոֆիլը.—*Ուժեղ ճմակալած լինելու պատճառով վարելիս ճմաշերտը շուռ էր գալիս համարյա ամբողջական ժապավեններով, առանց փշրվելու։ Գութանի թևի վրայից սահելիս ճիմոտի ստորին մակերեսի վրա առաջացած ճաքերը շուռ գալու ժամանակ նորից համակցվում էին և առաջացնում մի ամբողջական, մասերի չբաժանված ժապավենաձև հողաշերտ։ Որոշ դեպքերում այդ ճմաշերտերը վարի խորության և առի լայնության օպտիմալ հարաբերության խախտման հետևանքով բոլորովին շուռ չէին գալիս և նորից նստում ակոսի մեջ իրենց նախկին դիրքով։ Մեծ մասամբ շերտերը շուռ էին գալիս 130—140 աստիճան թեքությամբ և հենվում մեկը մյուսի թշին։*

Այլ շրջաններում մեր կատարած դիտողությունները ցույց տվեցին, որ նախագութանիկը նմանօրինակ հողերի վարի ժամանակ կարող է տալ շատ մեծ դրական էֆեկտ։ Որոշ դրական արդյունք տալիս է գութանի դանակը, որը սակայն փոխարինել նախագութանիկին ոչ մի դեպքում չի կարողանում։ Դանակը հեշտացնում է ճմաշերտի շուռ գալը, մեծացնում է թեքման աստիճանը և փոքրացնում քաշի ուժը։

Հողի նախացանքային մշակման տարբեր սիստեմներ չեն կիրառվել, որովհետև փորձերի նպատակը այլ է եղել։ Մենք մեր փորձերով հիմնականում ցանկացել ենք պարզել, թե Ծովինարի ճահճացած և այժմ չորացած, ինչպես նաև այդ հողերին շատ նման Բասարգեչարի ճահճացած հողերում, կուլտուրական բույսերի աճման ու գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելու ինչպիսի պայմաններ ու հնարավորություններ կան։ Բացի այդ նպատակ ենք ունեցել պարզելու, թե մշակվող կուլտուրաներից ո՞րն է ամենից մեծ էֆեկտ տալիս թե՛ բերքի քանակի և թե՛ որակի տեսակետից։

ՄՈԼԱԽՈՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցանքի առաջին տարին (1944 թ.) եղեգնից բացի այլ մոլախոտեր համարյա չեն եղել։ Եղեգը բոլոր կուլտուրաների ցանքերում այնքան շատ է եղել, որ քաղհանի մի փոքր ուշացման դեպքում համատարած բուսածածկոց է կազմել և ուժեղ չափով ճնշել կուլտուրական բույսերին։ Դրությունը սակայն միանգամայն փոխվել է 1945—1946 թվերին։ Եղեգի քանակը զգալիորեն պակասել է, իսկ դրա դիմաց սկսել են երևան գալ այնպիսի մոլախոտեր, որոնք այդ հողերում բոլորովին չեն եղել։

Մոլախոտերի հաշվառում մենք կատարել ենք բոլոր կուլտուրաների ցանքերում և ցանքաշրջանառության բոլոր դաշտերում։ Ստորև բերվում են այդ հաշվառումների տվյալները (միջինը, մեկ քառակուսի մետր տարածության վերածած)։

Մոլախոտերի քանակը ցանքերում 1945 թվին

№ №	Մշակվող կուլտուրան	Phragmites communis	Cirsium incanum	Sonchus arvensis	Chenopodium album	Setaria glauca	Setaria viridis	Matricaria sp.	Atriplex rosea	Այլ մոլախոտեր	Ընդամենը
1	Գարնանացան ցորեն ու գարի + խոտախառնուրդ (որպես ենթացանք)	125,0	16,5	12,5	12,0	22,5	1,0	7,0	5,0	5,5	207
2	Խոտախառնուրդ	88,5	12,0	5,0	30,5	61,5	4,0	18,0	3,5	7,5	230,5
3	Կարտոֆիլ	12,5	6,5	6,0	108,0	15,5	—	3,0	6,5	1,0	159 0
4	Ոլոռ	29,0	10,5	2,5	34,5	6,0	—	17,5	4,5	—	104,5
5	Կտավատ	16,0	21,5	—	41,0	22,5	1,0	8,5	4,5	4,5	119,5

Մոլախոտերի քանակը ցանքերում 1946 թվին

№ №	Մշակվող կուլտուրան	Phragmites communis	Cirsium incanum և Sonchus arvensis	Chenopodium album	Setaria glauca	Setaria viridis	Atriplex rosea	Polygonum hydropiper	Polygonum convolvulus	Այլ մոլախոտեր	Ընդամենը
1	Աշնանացան աշորա (կոլխոզի ցանած)	3	13	439	—	—	4	4	—	—	463
2	Գարնանացան ցորեն	8	9	1078	2	23	—	14	—	—	1134
3	Գարնանացան գարի	116	6	800	57	6	—	49	13	38	1085
4	Գարնանացան գարի+կորնգան (ենթացանք)	64	7	933	—	40	—	7	—	—	1051
5	Կորնգան II և III տարվա	18	25	264	8	—	4	—	27	—	346
6	Կարտոֆիլ	3	12	73	5	2	1	—	—	—	96
7	Ձլոր	3	4	189	—	—	1	2	—	2	201
8	Կտավատ	11	9	50	6	—	2	12	50	1	141
9	Վաղ ցել (կոլխոզի կատարած)	37	14	247	23	—	8	9	—	19	357

ՄՇԱԿՎՈՂ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՃՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. **Գարնանացան ցորեն, գարնանացան գարի.**—*Ստացվել է ցորենի ու գարու նորմալ բուսածածկույթ, յուրաքանչյուր քառակուսի մետրի վրա եղել է ցորենի ցողուն 200—300, գարու ցողուն 300—350։ Ցորենն ունեցել է 70—100 սմ., իսկ գարին 50—60 սմ. բարձրություն։ Ցորենի թփակալումը տատանվել է 1,5—2,0 միջև, գարունը 1,7—2,1 միջև։ Ցորենի սերմերի աբսոլյուտ կշիռը տատանվել է 30—32 գրամի միջև, գարունը՝ 40—42 գրամի միջև։ Հատիկների թիվը յուրաքանչյուր հասկում եղել է՝ ցորենինը 15—17, գարունը՝ 18—20։ Բերքը կազմել է՝ ցորենինը 12—15 ց/հ., գարունը՝ 16—18 ց/հ.։ Առանձին հողակտորներում ցորենից ստացվել է 18—20 ց/հ., գարուց 22—28 ց/հ.։*

2. **Աշնանացան աշորա.**—*Թփերի թիվը յուրաքանչյուր քառակուսի մետրի վրա եղել է 149, հասկերի թիվը 611, թփակալումը՝ 4,1, ցողունների բարձրությունը 140 սմ., բերքը 17—20 ց/հ.։ Առանձին հողակտորներից ստացվել է 29—36 ց/հ.։*

3. **Կորնգան.**—*Աճել է թույլ, խիստ ճնշվել է մոլախոտերից և տվել է նոսր բուսածածկույթ։ Կենդանի մնացած բույսերը իրենց կյանքի երկրորդ և երրորդ տարիներին տվել են երկու հար։ Իրենց առանձնապես վատ զգացել են այն բույսերը, որոնք աճել են փորձադաշտի առավել ցածրադիր մասերում, դրան հակառակ, նորմալին քիչ թե շատ մոտ աճ ունեցել են հողի բարձրադիր մասերում գտնված բույսերը։*

4. **Առվույտ.**—*Առաջին և հետագա տարիներին աճել է միանգամայն նորմալ։ Տվել է 30—40 ց/հ. խոտի բերք (կյանքի երկրորդ և երրորդ տարիներին)։*

5. **Գարնանացան վիկ.**—*Ունեցել է 80—90 սմ. բարձրության ցողուններ, թփակալել է լավ, սերևակալել է առատ (թփակալումը կազմել է 3—4), ապահովել է 30—35 ց/հ. չոր խոտի բերք։*

6. **Վիկ Երկճար.**—*Աչքի է ընկել թույլ աճեցողությամբ, ունեցել է նուրբ ցողուններ և տվել է միջինը 20 ց/հ. չոր խոտի բերք։*

7. **Շաքարի ճակնդեղ.**—*Սերմերը ծլել են 10—12 օր ցանքից հետո։ Բույսերն աճել են դանդաղ և թույլ։ Ստացվել է ընդամենը 50—60 ց/հ. բերք։ Բույսերի բարձրությունը տատանվել է 35—45 սմ. միջև, իսկ արմատների կշիռը 40—60 գրամի միջև։*

8. **Կերի ճակնդեղ.**—*Իր բոլոր ցուցանիշներով շաքարի ճակնդեղից չի տարբերվել։*

9. **Գազար.**—*Սերմերը ծլել են նորմալ, ցանքը եղել է նորմալ խտությամբ, բայց բույսերը հետագայում թույլ են աճել և տվել են խիստ ցածր՝ 30—40 ց/հ. բերք։ Գազարը աչքի է ընկել նաև իր ցածր որակով (համով)։*

10. **Կարտոֆիլ.**—*Ցանքը կատարվել է 10—15 սմ. խորությամբ և 70×30 սմ. խտությամբ։ Յուրաքանչյուր բնում տնկվել է մեկ պալար միջին մեծությամբ։ Փորձարկվել է «Լորխ» սորտը։ Ցանքերում հատ ու կենտ եղել են նաև «Էպիկուր», «Վաղահաս վարդագույն», «Վոլտման», «Սիլեզիա» և ուրիշ սորտերի բույսեր։ Կարտոֆիլի ծիլերը հողի երես դուրս են եկել 20—25 օր ցանքից հետո և մինչև վեգետացիայի վերջը զարգացել են միանգամայն նորմալ։ Հիվանդություններ նկատվել են հատ ու կենտ թփերի վրա, իսկ ընդհանուր առմամբ բույսերը եղել են առողջ։ Առողջ են եղել նաև ստացված պալարները։ Վեգետացիայի վերջում բույսերի բարձրությունը եղել է 60—65 սմ. (50—70 սմ.), ցողունների թիվը յուրաքանչյուր բնում 8—9 (6—13), պալարների թիվը յուրաքանչյուր բնում 15—18 (10—22)։ Բերքը տատանվել է 100—200 ցենտների միջև, կազմելով միջինը, ըստ տարիների, 120 և 150 ց/հ.։*

11. **Կաղամբ.**—*Բույսերն ունեցել են փարթամ աճ, զարգացել են ուժեղ, ունեցել են հաստ և առողջ կոթուններ, լայն և հաստ տերևներ և միանգամայն առողջ վիճակում են գտնվել։ Այս կուլտուրայից սպասվում էր 180—200*

ց/հ. բերք, սակայն մեր փորձերում կաղամբը մինչև ուշ աշուն գլուխ չի բռնել և բերք չի տվել։

12. Վարունգ.—Աճել է նորմալ, տվել է առատ ծաղիկներ ու պտուղներ, որոնք սակայն հավաքվել են նախ քան նորմալ մեծության հասնելը և հաշվառման չեն ենթարկվել։

13. Դդում, սեխ (բոլոր տեսակի) և ձմերուկ (բոլոր տեսակի).—Աճել են աննորմալ, դանդաղ և բերք բոլորովին չեն տվել։

14. Կանեփ.—Բույսերն աչքի են ընկել ուժեղ աճեցողությամբ և ունեցել են 180 սմ. բարձրությամբ հաստ և առատորեն տերևակալած ցողուններ (տատանումները կազմել են 120—200 սմ.)։ Ստացվել է ինչպես թելի, այնպես էլ հատիկի առատ բերք, սակայն կոլխոզի այլ հողերի պայմաններում այսպիսի բերք ստացվում է այն դեպքում միայն, երբ կանեփը առատորեն պարարտացվում է խառնաղբով։

15. Ծխախոտ.—Բույսերը զարգացել են նորմալ, յուրաքանչյուր բույսի վրա տերևների թիվը տատանվել է 8—15 միջև (միջինը կազմել է 12), բույսերի բարձրությունը տատանվել է 60—90 սմ. միջև։ Հիվանդություններ չեն նկատվել։ Տերևների վրա քիչ քանակությամբ եղել է միայն լվիճ։ Բերքը տատանվել է 10—16 ց/հ. միջև։

16. Եգիպտացորեն.—Սերմերը ուշ են ծլել, բայց բույսերը հետագայում աճել են նորմալ և ունեցել են 74—127 սմ. բարձրություն։ Ատամնաձև եգիպտացորենը տեղականից տարբերվել է ավելի ուժեղ և փարթամ աճեցողությամբ, իսկ կողրերի քանակի տեսակետից նրանց մեջ տարբերություն չի նկատվել։ Հատիկները մինչև աշուն չեն հասունացել, կողրերը հավաքվել են խակ վիճակում, ուստի և բերքի հաշվառում չի կատարվել։

17. Ոլոռ.—Սերմերի ծլումը տեղի է ունեցել ցանելուց 8—12 օր հետո։ Բույսերը զարգացել են փարթամ, թփակալել են ուժեղ, ցողուններն ունեցել են 120—200 սմ. բարձրություն։ Ծաղկումը և պտղակալումը տեղի են ունեցել ամառվա երկրորդ կեսին։ Առատ ծաղկած և պտղակալած բույսերը խոստանում էին սերմի մեծ բերք, սակայն հասունացման ձգձգման պատճառով բերք ստանալ չի հաջողվել։ Ծաղկման շրջանում հավաքած ոլոռից ստացվել է 35—45 ց/հ. խոտի բերք։

18. Լոբի (կարմիր և սպիտակ).—Լոբու երկու տեսակներն էլ աճել են թույլ և հաշվառումից դուրս են բերվել նախքան բույսերի ծաղկելը։

19. Կտավատ.—Աճել ու զարգացել է նորմալ, թփակալումը եղել է միջակ, ցողուններն ունեցել են 50—70 սմ. բարձրություն։ Սերմի բերքը տատանվել է 8—10 ց/հ. միջև։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ծովինար գյուղի «ԿԻՄ» կոլխոզի ճահճացած հողերը, որոնք լճին կից են, հեշտությամբ և առանց որևէ զգալի կապիտալ ներդրումների կարող են յուրացվել և անմիջապես գյուղատնտեսական շրջանառության մեջ դրվել։

2. Յուրացման հենց սկզբից այդ տարածությունների վրա պետք է կիրառել խոտադաշտային հատուկ ցանքաշրջանառություն, բայց մեկ ռոտացիա անցնելուց հետո հնարավոր է և պետք է այդ բոլոր հողերը ներգրավել կոլխոզի ընդհանուր ցանքաշրջանառության մեջ։

3. Առաջին ռոտացիայի ընթացքում ցանքաշրջանառության մեջ պետք է մտցնել գարնանացան ցորեն և գարի, ծխախոտ, կարտոֆիլ, կտավատ, ոլոռ, գարնանացան վիկ և առանձին հողամասերում նաև առվույտ։ Հետագայում, երբ գրունտի ջրերը կիջնեն մեկ ու կես մետրից խոր (լճի ջրի պակասելու հետևանքով), ցանքաշրջանառության մեջ մեծ տեղ պետք է հատկացնել նաև աշնանացան հացահատիկներին և կորնգանին։ Այդ կուլտուրաները այժմ, գրունտի ջրի մոտիկության պատճառով, վատ են աճում և պակաս բերք են տալիս, բայց հետագայում ավելի բարձր բերք են խոստանում, քան գարնանացան ցորենը կամ գարին և առվույտը։ Այդ բանը մենք նկատել ենք դեռ 1942—43 թ. թ. Նոր-Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի ճահճացած հողերի ուսումնասիրության ժամանակ (Проф. Г. Х. Агаджанян. „Изучение и выявление быстрых приёмов производственного освоения заболоченных земель в низовьях реки Кяварчай“. Научные труды Арм. Сельскохозяйственного Института № 4, 1944 г.), մի երևույթ, որ նկատվում է նաև Ծովինար գյուղի նախկինում ճահճացած և այժմ յուրացված հողերի պայմաններում։

4. Ծովինար գյուղի նոր յուրացվող հողերի լավագույն հատկությունները պահպանելու և առավել ռացիոնալ կերպով օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել ագրոտեխնիկական աշխատանքների այնպիսի (առանձնահատուկ) սիստեմ, որում վճռական նշանակություն ունենան այդ հողերի ստրուկտուրայի լավացմանը նպաստող և մոլախոտերի տարածումը կանխող միջոցառումները։

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ
Ընդհանուր Երկրագործության ամբիոն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АРМЯНСКИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ИНСТИТУТ

Գիտական աշխատությունների ժողովածու № 5, 1948 г. Сборник научных трудов

Ե. Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԻՆՍԵԿՏՈՖՈՒՆԳԻՍԻԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Նախնական հաղորդում

Բազմաթիվ դիտողություններից և փորձնական տվյալներից պարզվել է,
որ երբեմն պարարտանյութերից ստացվում է պակաս էֆեկտ: Դրա պատճառ-
ները բազմազան են: Այդ պատճառներից մեկն էլ այն է, որ հողում ապրող
միկրոօրգանիզմներն այդ նյութերը բիոլոգիապես կլանում են: Հատկապես
սնուցման կարգով հողը մտցրած հանքային պարարտանյութերն ավելի մեծ
էֆեկտ կտային, եթե կարելի լիներ ժամանակավորապես կանգնեցնել կամ
կրճատել միկրոօրգանիզմների գործունեությունն այն ժամանակ, երբ կուլ-
տուրական բույսը գտնվում է սննդանյութեր կլանելու իր ամենակրիտիկա-
կան շրջանում: Հետևաբար, բույսի կյանքի որոշ ժամանակաշրջանում եթե
հողը ենթարկվի մասնակի ստերիլիզացիայի (առանց բույսին վնաս պատճա-
ռելու), ապա դրանով իսկ կբարձրանա պարարտանյութերի էֆեկտիվությու-
նը: Այս հիպոթեզը փորձնական ճանապարհով ստուգման ենթարկելու հա-
մար դրվեցին փորձեր, ըստ որում հանքային պարարտանյութերի հետ միա-
սին օգտագործվեցին մի շարք ինսեկտոֆունգիսիդներ և նրանց նման հատ-
կություն ունեցող նյութեր:

Նախնական հետազոտությունները, որոնց մասին հաղորդվում է սույն
աշխատանքում, տարվել են 1945 թվին վեգետացիոն փորձերի կարգով, ա-
ռանց դեռևս միկրոբիոլոգիական ուսումնասիրությունների:
Փորձերը դրվել են 20×20 սմ. մեծության անոթներում, որոնց մեջ լցված
էր այգու կուլտուրական կավավազային, ոչկարբոնատային հող: Յուրա-
քանչյուր անոթում եղել է 5,5 կգ. չոր հող, որի խոնավությունն ամենօրյա
կշռումներով պահպանվել է հողի լրիվ ջրունակության 70 տոկոսի չափով:
Փորձը դրվել է չպարարտացրած (O) և լրիվ պարարտացրած (NPK) ֆո-
ների վրա, մեկական գրամ N, P_2O_5 և K_2O-ի հաշվով: Իբրև պարարտանյութ
օգտագործվել են՝ ամոնիումի սուլֆատը, սուպերֆոսֆատը և կալիումի քլո-
րիդը: Փորձը դրվել է երեք կրկնողությամբ:

Պարարտանյութերը և թունավոր նյութերը հողին տրվել են անոթը հողով լցնելիս (18/5)։ Փորձարկվել է գարնանացան nutans սորտի գարի։ Ցանքը կատարվել է մայիսի 20-ին, յուրաքանչյուր անոթում թողնվել է 20 բույս։

Բերքահավաքը կատարվել է հուլիսի 28-ին։ Իբրև ցուցանիշ վերցվել է բույսի վերերկրյա օրգանների չոր նյութի քաշը, որովհետև մի քանի վարիանտներում նորմալ հատիկներ չստացվեցին։ Աղյուսակում տրվում է փորձի սխեման և ստացած արդյունքների միջինը (Աղյուսակ № 1)։

Աղյուսակ 1

Ինսեկտոֆունգիսիդների ազդեցությունը NPK-ի էֆեկտիվության վրա

Действие инсектофунгисидов на эффективность NPK

(Опытное растение—ячмень)

№№ ըստ կ	Փորձի սխեման Схема опыта	Դոզան գր (անոթին) Доза (гр на сосуд)	Ընդհանուր մասսան Общая масса: 0 Գր/անոթին гр/сосуд	0 %	NPK Գր/անոթին гр/сосуд	NPK %	NPK-ի էֆեկտը Эффект от NPK գր/անոթին гр/сосуд	% 0-ից % по-0	Հարաբերական էֆեկտը Относительная эффект.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Առանց թույնի Без яда	—	9,65	100.0	20,30	100,0	10,65	110,4	100,0
2	Եռացող ջուր Кипящая вода	2000	9,16	94,9	21,60	106,4	11,44	124,9	113,5
3	$CuSO_4$	0,50	9,35	96,9	28,30	139,4	18,95	202,6	183,5
4	Պրեպարատ „АБ“	0,68	0,82	101,8	25,85	127,3	16,03	163,2	147.8
5	Փարիզյան կանաչ Парижская зелень	0,53	1,94	20,1	3,26	16,1	1,32	68,0	61,6
6	Կալցիումի արսենատ Арсенат кальция	0,60	7,22	74,8	24,20	119,2	16,98	235,1	212,9
7	Կալցիումի կարբիդ Карбид кальция	3,00	14,08	145,9	26,95	132,7	12,87	91,4	82,8
8	Կալցիումի պոլիսուլֆիդ Полисульфид кальция	1,00	8,85	91,7	29,10	143,3	20,25	228,8	207,2
9	Պարադիքլորբենզոլ Парадихлорбензол	1,00	12,80	132,6	27,10	133,5	14,30	111,7	101,2
10	Պոլիքլորիդ Полихлорид	2,00	4,85	50,3	18,55	91,4	13,70	282,2	255,6
11	Քլորակիր Хлорная известь	1,00	11,93	123,6	31,05	152,9	19,12	160,2	145,1
12	Ֆորմալին Формалин	1,00	20,27	210,0	27,55	135,7	7,28	35,9	33,4
13	Ծծմբածխածին Сероуглерод	1,00	15,27	158,2	31,00	152,7	15,73	103,0	93,3

Ինչպես երևում է աղյուսակից, փորձարկված նյութերը տարբեր կերպ են ազդել բույսի աճեցողության վրա՝ ինչպես չպարարտացրած, այնպես էլ պարարտացրած վարիանտներում։

Հետազոտված նյութերի շարքում կան այնպիսիները, որոնք բույսերի ավելի լավ աճեցողության ստիմուլ են հանդիսացել։ Դրանցից են՝ չպարարտացրած ֆոնի վրա՝ կալցիումի կարբիտը, պարադիքլորբենզոլը, քլորակիրը, ֆորմալինը և ծծմբածխածինը։ Պարարտացրած ֆոնի վրա աչքի են ընկնում բոլորը, բացառություն կազմում են փարիզյան կանաչը և պոլիքլորիդը։

Պարարտանյութերի էֆեկտիվությունը, բացարձակ քանակներով հաշված, նվազել է միայն փարիզյան կանաչից և ֆորմալինից, մնացած բոլոր նյութերը բարձրացրել են NPK-ի էֆեկտիվությունը։

Պարարտացրած ֆոնի վրա թունավոր նյութի համեմատական ազդեցությունը (արտահայտված տոկոսներով), համեմատած չպարարտացրած ֆոնի նույն ցուցանիշի հետ, ցույց է տալիս, որ փարիզյան կանաչից, պարադիքլորբենզոլից, ֆորմալինից, կալցիումի կարբիդից և ծծմբածխածնից առաջացել է էֆեկտի անկում։ Մյուս բոլոր նյութերը, առանց բույսին վնասելու, նպաստել են պարարտանյութերի էֆեկտիվության բարձրացմանը շնորհիվ նրա, որ պարարտանյութերը մատչելի վիճակում են մնացել և դրանով իսկ հնարավորություն է ստեղծվել բույսին՝ ավելի մեծ չափով օգտագործելու այդ սնունդը։

Այս հարցի մշակման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են, նպատակ ունենալով ճշտել և հաստատել ստացված արդյունքները, ինչպես և տվյալները կիրառելի դարձնել գյուղատնտեսական արտադրության մեջ։

Е. М. Мовсисян

ПРИМЕНЕНИЕ ИНСЕКТОФУНГИСИДОВ КАК СРЕДСТВ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УДОБРЕНИЙ

Предварительное сообщение

РЕЗЮМЕ

Известно, что внесённые в почву удобрения потребляются не только растениями, но и микроорганизмами почвы, при чем последние иногда являются большими конкурентами растений, вследствие чего понижается действие удобрений. Известно также, что частичная стерилизация почвы повышает её плодородие.

Исходя из этого мы поставили задачу: в период интенсивного питания растений временно приостановить деятельность микроорганизмов почвы, тем самым предупредить биологическое поглощение питательных элементов удобрений и дать возможность растениям больше поглощать их.

С этой целью был поставлен ряд опытов с инсектофунгисидами (и др), как стерилизаторами.

Данные вегетационных опытов (см. таблицу) показывают, что совместное применение некоторых инсектофунгисидов и минеральных удобрений повышает эффективность последних.

Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտ
Ագրոքիմիայի ամբիոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

1. *Туманян М. Г.* Новые ценные формы безостых твердых пшениц . . . 3
2. *Матевосян А. А.* О биологии цветения многоукосных эспарцетов . . . 15
3. *Матевосян А. А.* Влияние сроков хранения на всхожесть семян многоукосного эспарцета . . . 37
4. *Мириманян Х. П.* Некоторые особенности болотных почв Севанского бассейна и вопрос их мелиорации . . . 41
5. Աղաջանյան Գ. Խ. *Հայկական ՍՍՌ-ի բամբակային շրջանների ցանքաշրջանառությունները և նրանց նշանակությունը հողի բերրիության բարձրացման գործում* . . . 59
6. Հակոբյան Պ. Ն. *Նախորդների ազդեցությունը հացահատիկային կուլտուրաների բերքատվության վրա Սևանի ավազանում* . . . 89
7. Ալանյան Ե. Ե. *Խաղողի Ոսկեհատ սորտը* . . . 103
8. *Агинян А. А.* К вопросу о влиянии непрерывной темноты на рост и развитие растений . . . 129
9. *Тетеревникова—Бабаян Д. Н.* Очерк вирусных болезней растений в Армянской ССР . . . 137
10. Մարգարյան Ա. Ե. *Պատվաստի կպչման մի նոր նյութ* . . . 151
11. Թումանյան Հ. Գ. *Ենթատարոնային սուղակները որպես ինսեկտիցիդ իլիճների և նրանց ձվերի դեմ պայքարելու համար* . . . 159
12. Աբրահամյան Ա. Ա. *Հայաստանի ցորենների ընդհանուր և ակտուալ թթվայնության (Рн-ի) ազդեցությունը ալյուրի որակի վրա* . . . 163
13. *Ваграмян А. С.* Об одном методе измерения температуры контакта в червячной паре . . . 173
14. *Ваграмян А. С.* Точный метод определения температуры на поверхностях трения колодочных тормозов жел. дор. транспорта . . . 181
15. *Геворкян М. А.* Влияние времени отела на молочную продуктивность коров в горных условиях Армении . . . 187
16. *Саакян С. С. и Ягубян Р. Г.*. Материалы по удельному сопротивлению почв и расходу горючего при тракторной вспашке в черноземных районах Арм. ССР . . . 207
17. Աղաջանյան Գ. Խ. և Ղազանչյան Ս. Վ.. *Մարտունու շրջանի ճահճացած հողերի յուրացման մասին* . . . 229
18. Մովսեսյան Ե. Մ. *Ինսեկտոֆունգիսիդների կիրառումը որպես պարարտանյութերի էֆեկտիվության բարձրացնելու միջոց* . . . 239



ВФ 03763. Заказ № 527. Тираж 500. Сдано в производство 30 XI, 1947 г.
подписано к печаты 1/VI 48 г. п. л. 15 авт. л.

3-я типография Управления по делам Полиграфии и Издательств при Совете Министров Арм. ССР. Ереван, ул. Алавердян № 65, 1948 г.

ԳԻՆԸ 15 Կ.